

**«Գլոբալ մարտահրավերներ և սպառնալիքներ.
Ննարավո՞ր են արդյոք միասնական ջանքեր
Նայասրանի և Թուրքիայի միջև»**

Միջազգային կոնֆերանս
Մայիսի 20, 2008թ.
Երևան, Նայասրան

**“Global Challenges and Threats: Are Joint Efforts
between Armenia and Turkey Possible?”**



International Conference
20 May, 2008
Yerevan, Armenia



Երևան
Անպարես
2008

ՀՏԴ 06 : 327
 ՊՄԴ 66.4
 Գ 638

Գլոբալ մարտահրավերներ և սպառնալիքներ. Ննարավո՞ր են արդյոք
 Գ 638 միասնական ջանքեր Նայասպանի և Թուրքիայի միջև: Միջազգային
 կոնֆերանս, մայիսի 20, 2008թ (Երևան, Նայասպան). – Եր., Անպա-
 րես, 2008,- 160 էջ

ՊՄԴ 66.4

	<p>Այս հրատարակությունը սրելով է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի շնորհիվ, Ամերիկայի ժողովրդի նվիրավորության միջոցով, ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ: Մույն հրատարակության բովանդակության համար պատասխանատու է Գլոբալիզացիայի և փարաձաշքանային համագործակցության վերլուծական կենտրոնը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:</p>	
--	---	---

	<p>This publication is made possible by the support of the Eurasia Partnership Foundation and the American People through the United States Agency for International Development (USAID). The contents of this publication are the sole responsibility of Analytical Centre on Globalization and Regional Cooperation and do not necessarily reflect the views of Eurasia Partnership Foundation, USAID or the United States Government.</p>	
--	--	---



Գլոբալիզացիայի և փարաձաշքանային համագործակցության վերլուծական կենտրոն
 Analytical Center of Globalization and Regional Cooperation

ISBN 978-9939-51-094-1

Քույրերի և եղբայրների օգնություն

Նախաբան. Ստեփան Գրիգորյան	4
Բացման խոսք. Ստիվեն Բենքս, Վազգեն Կարապետյան	6-8
Դավիթ Նովհաննիսյան . Ինչու չեն կարգավորվում հայ-թուրքական հարաբերությունները	9
Ջեմ Տոկեր . Առավել կարևոր է մեր ժողովուրդների ազատությունն ու բարեկեցությունը	19
Արմեն Աշոտյան . Ընդունենք իրար այնպիսին, ինչպիսին որ կանք	24
Քննարկում գեկույցների շուրջ	29
Դիրա Նիգար Գոկսել . Թուրքիայում անցկացված հարցազրույցների և հարցումների վերլուծություն	39
Ստեփան Գրիգորյան . Նայաստանում անցկացված հարցազրույցների և հարցումների վերլուծություն	46
Քննարկում գեկույցների շուրջ	65
Ալեքսանդր Իսկանդարյան . Անգիտության վերաձևաչափում	68
Արդա Բաթու . Նիմնական սկզբունքները՝ հաշտեցման հասնելու համար.....	74
Քննարկում գեկույցների շուրջ	78

Նախարան

Սույն գրքում գերեզված են 2008թ. մայիսի 20-ին րեդի ունեցած՝ «Գյուրալ մարտահրավերներ և սպառնալիքներ. հնարավոր են արդյոք միասնական ջանքեր Նայաստանի և Թուրքիայի միջև» թեմայով միջազգային կոնֆերանսի նյութերը (զեկույցները և քննարկման արդյունքները): Կոնֆերանսը կազմակերպվել էր Գյուրալիզացիայի և փարաձաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից՝ «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի օժանդակությամբ:

Կոնֆերանսին մասնակցել են ավելի քան հարյուր քսան մասնակիցներ՝ այդ թվում կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների, երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքագետներ, փնտեսագետներ, Նայաստանի առաջափար ԲՈՒՏ-երի ուսանողներ, ՆԱԱԳ-ի գործերի նախարարության, ինչպես նաև Նայաստանում հավաքարմագրված միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների ներկայացուցիչներ (ԵԱՏԿ, ԵԽ, Ֆ. Էբերտի անվան հիմնադրամ, USAID, Մեծ Բրիտանիայի, Լիտվայի, Լեհաստանի և Ղազախստանի դեսպաններ, ԱՄՆ-ի, Ռումինիայի, Ուկրաինայի և Սիրիայի դիվանագետներ): Թուրքիայից կոնֆերանսի աշխատանքներին մասնակցել են Դիբա Նիզար Գոկսելը (վերլուծարան, Եվրոպական Կայունության Նախաձեռնություն, Turkish Policy Quarterly ամսագրի խմբագիր), Ջեմ Տոկերը (Թուրքիայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ) և Արդա Բաթուն («Արի» շարժման խորհրդի անդամ, Եդիպեհեհ Նամալստանի դոկտոր, Սթամբուլ): Կոնֆերանսն ակտիվորեն լուսարանվել է թե՛ հայկական, թե՛ արտասահմանյան ԶԼՄ-ների կողմից:

Այս կոնֆերանսը մաս է կազմում «Նայաստանի և Թուրքիայի վերլուծարանների և հասարակական գործիչների համագործակցությունը՝ որպես միավորող գործոն հայ-թուրքական հարաբերություններում» նախագծի, որն իրականացվում է Գյուրալիզացիայի և փարաձաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից՝ «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի և USAID-ի օժանդակությամբ: Նախագծի գլխավոր նպատակը Նայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության կառույցների միջև երկկողմանի համագործակցության զարգացումն ու ընդլայնումն է, ինչպես նաև փորձագետների և գիտնականների միջև փոխադարձ վստահության ամրապնդումը: Նախագիծը իրականացվում է այն համոզմունքով, որ հասարակական գործիչների, վերլուծական կենտրոնների դեկավարների, քաղաքագետների, գիտնականների և երիտասարդության համագործակցությունը թույլ կտա թուլացնել մեր հասարակություններում գոյություն ունեցող ավանդական պարկերացումները և «թշնամու կերպարը»:

Այս առումով նաև խիստ կարևոր է, որպեսզի համագործակցությունը զարգանա նախ և առաջ այն ոլորտներում, որոնք կարող են մեզ միավորել՝ գյուղատնտեսական արտադրանքների և սպառնալիքների նկատմամբ վերաբերմունք, առևտուր, գիտական և մշակութային համագործակցություն, փառաձայնության շահեր՝ այդ թվում եվրոպական ինֆրագրանցման գործընթացներ, Սև ծովյան փառաձայնություն համագործակցություն և այլն:

Նախագծի շրջանակներում հարցումներ են անցկացվել Նայաստանում և Թուրքիայում՝ կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և անկախ փորձագետների հետ՝ հայթոյրական հարաբերությունների զարգացման հեռանկարների վերաբերյալ: Անցկացված հարցումների արդյունքները մասամբ հրատարակվել են «Առավոտ» օրաթերթում, ինչպես նաև Turkish Policy Quarterly վերլուծական հանդեսում և Turkish Daily News օրաթերթում:

Շնորհակալություն ենք հայտնում մեր թուրք գործընկեր, ճանաչված միջազգային փորձագետ Դիրա Նիզար Գոկսելին՝ մեր նախագծերի բարեհաջող իրականացմանը նպաստած արդյունավետ համագործակցության համար:

Ամփոփելով՝ կցանկանայի խորին երախտագիտությունս հայտնել «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամին՝ համագործակցության և մեր միջոցառումների անցկացմանը լիակատար աջակցություն ցուցաբերելու համար:

Սրեփան Գրիգորյան՝ Գյուրալիզացիայի և փառաձայնության համագործակցության վերլուծական կենտրոնի վարչության նախագահ

Բացման խոսք

Շնորհակալություն այս կարևոր կոնֆերանսին մասնակցելու հրավերի համար: Կոնֆերանսի կազմակերպիչ «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը ԱՄՆ-ի կառավարության հիմնական գործընկերներից է այսպեղ՝ Նայասպանում, միջպերական համագործակցությանն օժանդակելու գործում: Նայ-թուրքական երկխոսության և համագործակցության ծրագիրը, որը «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի կողմից իրականացվում է սկսած 2006թ.՝ ԱՄՆ-ի կառավարության ֆինանսավորմամբ, նպատակաուղղված է հայերի և թուրքերի միջև անմիջական կապեր հաստատելուն՝ ոչ կառավարական կազմակերպությունների, քաղաքական ինքնակառավարման մարմինների և գործարարների միջև համագործակցություն հաստատելու և զարգացնելու միջոցով: Այս կոնֆերանսը մեկն է այն ջանքերից, որ գործադրվում են վերոնշյալ ծրագրի շրջանակներում՝ ավելի արդյունավետ փորձառաջընթացային ինֆրագրամանը նպաստելու համար: Դա, մեր համոզմամբ, խիստ կարևոր է և պետք է նպաստի փորձառաջընթացային կայունությանը, փոփոխական համագործակցությանը և երկու երկրների զարգացմանը: Բհարկե, Միացյալ Նահանգների կառավարությունը ջանում է նաև մերձեցնել Նայասպանն ու Թուրքիան՝ Երևանում և Անկարայում գործադրվող ակտիվ դիվանագիտական գործունեության միջոցով: Սակայն հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կառույցների և լրատվամիջոցների միջև կապեր հաստատելուն ուղղված գործողությունները նույնպես կարող են նպաստել պաշտոնական դիվանագիտության ընթացքին: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Թուրքիայից ժամանած մեր հարգարժան հյուրերին, որոնցից երկուսն առաջին անգամ են այցելում Նայասպան: Կցանկանայի փորձել խոսել թուրքերեն, սակայն մոտո գրի առնված չէ. բարի գալուստ և շնորհակալություն այսպեղ գալու համար՝ մի շարք կարևոր խնդիրներ քննարկելու նպատակով: ԱՄՆ-ը հպարտանում է այս կոնֆերանսով, և մենք ակնկալում ենք, որ ձեր համատ ջանքերը կհանգեցնեն հեփազա առաջընթացին: Խորապես շնորհակալ եմ:

Սրիվեն Բենքս¹՝ *Քաղաքական և փոփոխական բաժնի վարիչ,
ԱՄՆ դեսպանարանում*

Բացման խոսք

Ողջունում եմ բոլորին այսօրվա միջոցառման կապակցությամբ: Շնորհակալություն, որ ժամանակ եք գտել և մասնակցում եք: Կուզենայի մի քանի խոսքով ներկայացնել «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի հայ-թուրքական ծրագիրը և ընդհանրապես փարաձաշքջանային ծրագրերը: Նայ-թուրքական երկխոսության նախաձեռնությունը «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը սկսել է 2005թ. վերջերից: Ծրագիրը սկիզբ է առել երկու հեղափոխություններով: Առաջին հեղափոխությունը անց է կացվել «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» կողմից: Ներազոտության ընթացքում ուսումնասիրվել են վերջին 10-12 փարիների ընթացքում Նայասպանի և Թուրքիայի միջև տեղի ունեցած բոլոր փեսակի հասարակական կամ քաղաքական կոնֆլիկտները, համագործակցության դեպքերը, և այդ հեղափոխության արդյունքում լույս է փնտռվել գիրք, որը ներկայացնում է այդ աշխատանքը: Մյուս հեղափոխությունը անց է կացվել Նայակական միջազգային փնտրանական հեղափոխությունների խմբի կողմից: Այդ աշխատանքը ուսումնասիրել է հայ-թուրքական սահմանի բացման հետ կապված՝ փնտրանական հնարավոր հետևանքները, և փնտրանական իշխանությունների հնարավոր պատասխանները՝ բացվող այդ հնարավորության վերաբերյալ: Ներազոտության արդյունքում նույնպես փնտրանվել են նյութեր: Անցած փարի՝ 2007թ. ամռանը, «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը հայտարարեց դրամաշնորհային մրցույթ՝ աշակցելու հայ-թուրքական երկկողմանի ծրագրերի իրականացմանը: Մրցույթի արդյունքում ֆինանսավորվեցին 6 դրամաշնորհային ծրագրեր, որոնց մեծ մասը այժմ ընթացքում են: Այսօրվա կոնֆերանսը իրականացվում է այդ ծրագրերից մեկի շրջանակում: Առաջին կոնֆերանսը փնտրան դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անցկացվեց 2007թ. նոյեմբերին: Նոյեմբերից մինչև հիմա ընկած ժամանակահատվածում՝ մինչև ապրիլ-մայիս ամիսները, ծրագրի շրջանակներում անցկացվեցին հարցումներ Նայասպանի և Թուրքիայի քաղաքական և հասարակական գործիչների միջև: Զեկույցը այդ հարցումների արդյունքների վերաբերյալ կներկայացվի այս կոնֆերանսում Մրեփան Գրիգորյանի և Նիգար Գոկսելի կողմից: Մեր կողմից ֆինանսավորված մնացած դրամաշնորհային ծրագրերի օրինակներից՝ կարող եմ նշել, որ այս փարվա հունիս ամսվա կեսերին «Կոմիտասի» անվան պետական քառյակը համերգային ծրագրով այցելելու է Մրամբուլ: Մի քանի օր անց Մրամբուլի թուրքական «Բոսֆորուս» քառյակը նույնպես համերգային ծրագրով այցելելու է Երևան: Այդ 6 դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, օրինակ, կա նաև երիտասարդական համագործակցության ծրագիր, որի շրջանակներում երիտասարդական կազմակերպությունները Նայասպանում և Թուրքիայում սրեղծել են ինտերնետային «on line» ֆորում, որը

ակտիվորեն գործում է, և երկու ամիսը մեկ լույս է տեսնում հայ-թուրքական երիտասարդական ինտերնետային ամսագիր: Մի այլ օրինակ. Երևանի մամուլի ակումբը իր թուրք գործընկերների հետ իրականացնում է ծրագիր, որի շրջանակներում համագործակցում են մի խումբ հայ և թուրք լրագրողներ: Ծրագրի արդյունքում նրանք համապեղ պետք է հանդես գան հայ-թուրքական թեմային վերաբերող մի քանի հոդվածներով, որոնք պետք է տպագրվեն Նայաստանի և Թուրքիայի ճանաչված թերթերում և ամսագրերում: Մենք ունենք նաև այլ պլաններ: Շուտով կֆինանսավորվեն մի քանի դրամաշնորհային հայ-թուրքական ծրագրեր, այդ թվում նաև ծրագիր, որը նախատեսում է Նայաստանի և Թուրքիայի միջև մշակութային փոխանակում: «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը նաև ունի տարածաշրջանային մի այլ մեծ նախաձեռնություն, որը սկիզբ է առել 1998թ.: Դա Նայաստան, Վրաստան, Ադրբեջան համագործակցության ծրագիրն է, որի շրջանակներում այս տարիների ընթացքում ֆինանսավորվել են բազմաթիվ դրամաշնորհային ծրագրեր տարբեր ոլորտներում՝ սկսած շրջակա միջավայրի պաշտպանությունից և ավարտած փնտրության կամ հանրային քաղաքականության ուսումնասիրություններով տարբեր ոլորտներում: Կրկին ողջունում եմ այսօրվա կոնֆերանսի բոլոր մասնակիցներին, հուսով եմ, որ այն կհաջողվի, և մենք կլսենք հետաքրքիր գեկույցներ և բանավեճեր:

Վազգեն Կարապետյան՝ *Տարածաշրջանային ծրագրերի համակարգող, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ*

Ինչու չեն կարգավորվում հայ-թուրքական հարաբերությունները

1991թ. Նայաստանի կողմից անկախության հռչակումից հետո, ժառանգություն թողած ցեղասպանության խնդրին ավելացավ ևս մեկը: Այն կարելի է ձևակերպել որպես հայ-թուրքական հակասությունների ակտուալացում, որոնք առանցքային դեր են խաղում ինչպես ներքաղաքացային հարաբերություններում, այնպես էլ փոքրամասնախմբային անվտանգության համակարգի հայեցակարգի առաջնադասման փնտրանքում: Այսպիսով, Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը խիստ առանձնահատուկ նշանակություն է ունենում:

Նայաստանի և Թուրքիայի միջև միջպլեբական հարաբերությունները մինչ օրս կարգավորված չեն: Ելնելով իրենց արտաքին քաղաքականության առաջնահերթություններից՝ թուրք քաղաքական գործիչներն ու դիվանագետներն Նայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, սահմանը բացելու, երկկողմանի հարաբերությունները կարգավորող փաստաթղթեր ստորագրելու առաջարկների նկատմամբ իրենց խիստ բացասական վերաբերմունքը հիմնավորել են երեք հիմնական պատճառներով.

ա. 1914-1923թթ. հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված Նայաստանի Հանրապետության քաղաքականությունը,

բ. Թուրքիայի Հանրապետության նկատմամբ փոքրամասնախմբային պահանջների առկայությունը,

գ. հայ-ադրբեջանական հակամարտությունը:

Միանգամից նշենք, որ վերջին պատճառի օգտագործումը՝ որպես փաստարկ, սկսվեց 1998թ. ի վեր: Բացի այդ, երրորդ կողմի հետ հարաբերությունները լուրջ հիմք չեն երկկողմանի հարաբերությունների կարգավորման համար՝ չնայած Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերի փնտրանքում ադրբեջանական գործընդհանուր ոչ թե պարզապես կարևոր է դարձել, այլև, որոշ իրավիճակներում, գերակա: Պետք է նշել, որ Թուրքիան դիվանագիտական հարաբերություններ ունի մի շարք պետությունների հետ, որոնց հետ առկա են բազմաթիվ լուրջ, մինչ օրս չլուծված խնդիրներ, այդ թվում՝ փոքրամասնախմբային (Նունաստան, Սիրիա, Կիպրոս, Իրան և այլն):

Այնուամենայնիվ, անդրադառնանք առաջին երկու փաստարկներին:

Թվում է, որ Նայաստանի առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչման խնդրի առումով բավական զուսպ էր և հարևան երկրի դե-

կավարներին հնարավորություն էր ընձեռել քաղաքական պրագմատիզմ ցուցաբերելու, այն է՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատել նորանկախ հանրապետության հետ, բացել սահմանները, ակտիվորեն զարգացնել առևտրաարտնական հարաբերությունները: Այդպիսով, Թուրքիան իր ներկայությունը կհաստատեր մեր երկրում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, ինչպիսիք են քաղաքական ազդեցությունը, մշակութային և քաղաքակրթական ներթափանցում և այլն:

Նայաստանի երկրորդ նախագահն առավել կոշտ դիրք էր զբաղեցրել ցեղասպանության խնդրի առնչությամբ, դրա միջազգային ճանաչումն առանձնացնելով՝ որպես Նայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Միաժամանակ Ռ. Քոչարյանն աննախադեպ քայլի դիմեց. հայտնի թուրք լրագրող Մեհմեթ Ալի Բիրանդին տված բացառիկ հարցազրույցում նա հայտարարեց, որ Նայաստանը Թուրքիայի նկատմամբ չունի Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության հետևանքով առաջացած տարածքային կամ որևէ այլ պահանջներ: Ենթադրվում էր, որ այդ հայտարարությամբ ի չիք կդառնային Թուրքիայի քաղաքական և ռազմական վերնախավի անհանգստությունն ու կասկածները՝ իրենց պետության տարածքային ամբողջականության նկատմամբ հայերի հնարավոր ուրնձգությունների վերաբերյալ:

Վերը նշվածից կարելի է կատարել միակ տրամաբանական եզրակացությունը. Թուրքիան Նայաստանին չի համարում որպես մի պետություն, որի հետ հարաբերություններն անհրաժեշտ է կարգավորել և քայլ առ քայլ բարելավել՝ ստեղծելով անվտանգության ընդհանուր համակարգ, համագործակցելով սահմանամերձ գոտում, միասին մասնակցելով տարածաշրջանային խնդիրների լուծմանը և այլն:

Բնականաբար, կարելի է ենթադրել, որ Թուրքիան Նայաստանին չի համարում որպես մի պետություն, որի հետ հարաբերություններն անհրաժեշտ է կարգավորել, քանի որ Նայաստանը չի համապատասխանում Թուրքիայի կողմից կարևորվող որոշ սպասումների կամ չափանիշների: Ուրեմն, Նայաստանի հետ հարաբերությունները կարող են կարգավորվել միայն այն ժամանակ, երբ կավարտվեն որոշ գործընթացներ, որոնց արդյունքում տեղի կունենան փոփոխություններ, որոնց հետևանքով էլ մեր երկիրն առավել ընդունելի կդառնա Անկարայի համար: Ի՞նչ գործընթացներ են դրանք և ինչպիսի՞ փոփոխություններ պետք է տեղի ունենան:

1992թ. հոկտեմբերին Անկարայում կայացած թյուրքալեզու երկրների առաջին զագաթաժողովում Թուրքիայի նախագահ Թուրդութ Օզալը 21-րդ դարը հռչակեց «թյուրքերի դար, եթե սխալներ չկատարվեն»:¹ Անցած դարի 90-ականներին այդպիսի արտահայտություններ ու հայտարարություններ բավական հաճախ էին հնչում: Այս առումով, հարկանշական է

¹ Турция между Европой и Азией, Մոսկվա, 2001, էջ 427:

Թուրքիայի հաջորդ նախագահ Սուլեյման Դեմիրելի նկատարումը, որ թուրք լինելով՝ անհնար է հրաժարվել պանթուրքիզմից: Դեռևս վարչապետ եղած ժամանակ, այցելելով Ուզբեկստան, նա հայտարարեց. «Եթե ապագայում սրեղծվի թուրքական պետությունների միություն, դրա դեմ ոչ ոք չի լինի, սակայն այսօրվա դրությամբ դա իրավասական չէ»:² Թուրքիայի բարձրագույն ղեկավարների վերոնշյալ հայտարարությունները հստակորեն վկայում են, որ երկրի իշխանական օղակների քաղաքական գինանոցում առկա են նեոպանթուրքիստական գաղափարախոսության լուրջ բաղադրիչներ՝ որքան էլ դրանք թաքցվեն արևմտյան քաղաքական փրմինների ակտիվ օգտագործման միջոցով:

Նմանաբիպ ձևակերպումները լավ արձագանք էին ունենում Արևմուտքում, որի քաղաքական առաջնորդները ԽՍՀՄ փլուզումից հետո ակտիվորեն գովազդում էին Թուրքիան՝ որպես օրինակ, որին պետք է հետևելին նախկին խորհրդային մահմեդական հանրապետությունները. նրանց փեսանկյունից, Թուրքիան մահմեդականներով բնակեցված աշխարհիկ ժողովրդավարական երկիր էր:

Արևմտյան քաղաքական մտքի նման ուղղվածությունը, որը հստականշական էր «սատր պատերազմի» ավարտից հետո եղած ժամանակաշրջանի համար, համընկել էր Անկարայի վարած քաղաքականության հետ և նպաստել է նրան, որ Թուրքիան մրցակցության մեջ մտնելու Ռուսաստանի հետ և փորձեր վերափոխել նախկին խորհրդային թուրքալեզու հանրապետությունները: Դա, ի վերջո, պետք է հանգեցնել «թուրքական պետությունների միության» սրեղծմանը, նաև այլ նեոպանթուրքիստական ծրագրերի իրականացմանը:

Այս անգամ ևս այդ նախագծերի իրականացմանը խոչընդոտում էր Նայաստանը: Սա վերաբերում է, մասնավորապես, Թուրքիայի ռազմավարական նպատակին՝ Ռուսաստանի կազմում գտնվող Պովոլոյեյի և Նյուսիսային Կովկասի թուրքալեզու հանրապետությունների հետ մշտական անվտանգ ցամաքային կապ հաստատելուն: Այդպիսի կապը համարվում էր անհրաժեշտ միջոց՝ թուլացած Ռուսաստանի փարածքում դեգինրեգրացիոն գործընթացներին նպաստելու և նրա հետ արդյունավետ մրցակցություն ապահովելու համար: Այդ ծրագրի իրականացման համար լուրջ խոչընդոտ էր հանդիսանում Նայաստանի գոյությունը՝ որպես Ռուսաստանի դաշնակից պետություն:

Սակայն թուրքական քաղաքական շրջանակները, գիտակցելով, որ 20-րդ դարի վերջում «հայկական հարցը» պետք է լուծել այլ միջոցներով, քան դարասկզբում, հավանաբար եզրակացրել էին, որ խնդիրը կարող է լուծվել ոչ թե Նայաստանն ընդհանրապես ոչնչացնելու միջոցով, այլ Թուրքիային կամ Ադրբեյջանին միավորելով նրա փարածքի մի մասը, որով

² «Նյուրիկթ», 12.04.1992թ.

կանցներ այդքան ցանկալի ցամաքային «թյուրքական» մայրուղին: Իսկ դրա համար Անկարային անհրաժեշտ էր մտնել դարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացի մեջ, ինչը թուրքական դիվանագիտությանը լավ հնարավորություններ կրնձեռեր՝ դրված նպատակներին հասնելու համար: Բացի այդ, Նայաստանի հետ հարաբերությունները պետք է չկարգավորված մնային՝ երկու երկրների միջև հարաբերություններում լարվածության բարձր մակարդակ պահպանելու համար: Դա ծառայում է մի թաթոն նպատակի. Նայաստանի դեմ ուղղված ցանկացած գործողությունների իրավացիությանը քաղաքական հիմնավորում հաղորդելու համար:

Միայն վերոհիշյալ ծրագրերի իրականացումից հետո հնարավոր կդառնար կարգավորել հարաբերությունները Նայաստանի հետ, երբ վերջինս կորցրած կլիներ իր աշխարհաքաղաքական նշանակությունը և հետաքրքրություն չէր ներկայացնի:

Իհարկե, նեոպանթյուրքիստական քաղաքական գաղափարախոսության հետևում հստակ տեսանելի են ժամանակակից Թուրքիայի իրական աշխարհաքաղաքական և տնտեսական շահերը: Միանգամայն ակնհայտ է, որ Անկարան բավարարված չէ կարևորագույն փարամաշրջանային տերության դիրքի կորստով. ԽՍՀՄ-ի հետ ընդհանուր սահման ունեցած ՆԱՏՕ-ի միակ անդամը «սատր պատերազմի» ավարտից հետո կորցրեց նախկին աշխարհաքաղաքական նշանակությունը՝ դառնալով պասիվ դերակատար, որին վերապահված է միայն երկրորդական դերերի կատարումը: Նոր իրավիճակն արագորեն գնահատել է Ն. Զիսինջերը.

Վերջին փարիներին Միացյալ Նահանգներում, իսկ առավել ևս՝ Եվրոպայում, ուժեղացել է Թուրքիային՝ որպես բնական դաշնակից դիտելու և նրան սեփական խնդիրների լուծման համար օգտագործելու տենդենցը՝ դրա դիմաց չվճարելով, արհամարհելով թուրքերի ազգային հպարտությունը և հաշվի չառնելով այն հատուկ պայմանները, որոնցում գտնվում է այդ երկիրը: Տնտեսապես զարգացած ժողովրդավարական պետությունները՝ հատկապես Եվրոպայի պետությունները և Միացյալ Նահանգները, պարտավոր են հիշել, որ խնդրո առարկան իրենց ազգային անվտանգության հիմնական փարթերն են: Ներկապար, այդ հրամայականով պետք է որոշվի նշված պետությունների վերաբերմունքը Թուրքիայի ներքին խնդիրներին:³

³ Г. Киссинджер. Нужна ли Америке внешняя политика. Մոսկվա, 2002, էջ 206:

Բնականաբար, Կոմիտասի համալսարանում Անկարային հետաքրքրում է ենթակառուցվածքներից օգտվելու և դրանց կառավարմանը մասնակցելու հնարավորությունը. ենթակառուցվածքների միավորումը՝ ընդհանուր համաշխարհային համակարգի սրեղծմամբ գլոբալիզացիայի ժամանակաշրջանում կարևորագույն խնդիր է հանդիսանում: Սա նշանակում է, որ Թուրքիան իրեն վերապահում է խոշոր փարաձառյուղների՝ Մեծ Մերձավոր Արևելքի և միավորված Եվրոպայի հարման կերպում միացող մայրուղիների, կոմունիկացիաների, խողովակաշարերի, ֆինանսական ենթակառուցվածքների հիմնական կարգավորողներից մեկի դերը: Նենց դրա համար է Թուրքիային անհրաժեշտ ամրապնդել իր ազդեցությունը Սև և Կասպից ծովերի շրջակայքում և հարկապես Նարավային Կովկասում, որպես նաև սուր մրցակցություն է ծավալել Ռուսաստանի հետ:

Միացյալ Նահանգների կողմից Թուրքիային վերապահված դերին անդրադարձել է Զ. Բժեզինսկին.

Թուրքիայի Էվոյուցիան և կողմնորոշումը, ենթադրաբար, որոշիչ դեր են խաղում կովկասյան պետությունների ապագայի համար: Եթե Թուրքիան նպատակաուղղված կերպով անցնի դեպի Եվրոպա փանող ճանապարհը, իսկ Եվրոպան իր դռները չհիսկի նրա առջև, կովկասյան պետությունները նույնպես կհայտնվեն եվրոպական ուղեծրում. դա նրանց համար խիստ ցանկալի հեռանկար է: Մակայն եթե Թուրքիայի եվրոպականացումը արտաքին կամ ներքին պարճառներով⁴ փրկավալի, Վրաստանն ու Նայաստանն այլ ելք չեն ունենա, քան Ռուսաստանի շահերին հարմարվելը:⁵

⁴ Անդրադառնալով հնարավոր ներքին պարճառներին, Զ. Բժեզինսկին նշել է. «Թուրքիան՝ հերկայսերական պետություն, որը դեռևս գտնվում է ընթացություն կարարելու գործընթացում, ուզում են փանել միաժամանակ երեք ճանապարհներով: Մողերնիզացիայի ջարագովները ցանկանում են այն դարձնել եվրոպական պետություն և հերկարար, ուղղված են դեպի Արևմուտք: Իսլամիստները ձգտում են դեպի Մերձավոր Արևելք, այսինքն, ուղղված են դեպի Նարավ: Պարստությանը ներշնչվող ազգայնականները նոր առաքելություն են նախադեսում Կասպից ծովի շրջակայքի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների համար՝ Թուրքիայի գերակայության փակ գտնվող փարաձառյուղում, այսինքն, ուղղված են դեպի Արևելք: Այդ հեռանկարներից յուրաքանչյուրը պարվում է փարբեր ռազմավարական առանցքների շուրջ և, քեմալական հեղափոխությունից հետո առաջին անգամ, այդ դիրբորոշումները կրողների միջև բախումը որոշակի անվարահության է հանգեցնում՝ Թուրքիայի փարաձառյուղային դերի առումով: (3. Бжезинский. Великая шахматная доска. Մոսկվա, 1999, էջ 161):

⁵ Նույնը, էջ 179-180:

Անկարայի կողմից առկա ռեսուրսների հետ դժվարությամբ համապեղելի խնդիրներ լուծելու փորձերը հասցեցրել են լուրջ ներքաղաքական և արտաքին քաղաքական խնդիրների: Բացի այդ, ակնհայտ է, որ թուրքական վերլուծական ծառայությունները գերազնահատել են Թուրքիայի գրավչությունը՝ նախկին խորհրդային հանրապետությունների համար, նաև էթնիկական և լեզվական ընդհանրությունների նշանակությունը: Նորանկախ թուրքալեզու պետությունների համար օրինակ ծառայելու գործառույթը, որով հիմնավորվում էր Թուրքիայի նոր դերակարգումը՝ փառաձայնջանում, իրականություն չդարձավ՝ մի շարք պատճառներով:

Իրադարձություններն այլ կերպ զարգացան: Ղարաբաղյան պատերազմում հայկական զինված ուժերի հաղթանակը և Նայասպանի փառաձայն ռուսական ռազմակայանի տեղադրումը մի կողմից, միաբևեռ աշխարհի ձևավորումը և աշխարհաքաղաքական փոփոխությունների ընդհանուր փրամաբանությունը մյուս կողմից, հասցեցրել են նրան, որ անցած դարի 90-ական թվականներին ընդունված գործողությունների նեոպանթյուրքիստական ծրագրերն այլևս իրագործելի չեն համարվում, ինչը թուրքական հասարակությունում առաջացրել է բազմաթիվ խնդիրներ արժեքային համակարգի առումով:

Տարբեր աշխարհաքաղաքական ուժերի առջև ծառայած խնդիրների առաջնահերթության որոշման առումով՝ առկա ընկալումների հիմնարար փոփոխության արդյունքում առաջացել է մի իրավիճակ, որում ԱՄՆ-ի համար օրակարգային է դարձել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրը. դա իրականում կօգներ Նարավային Կովկասում ձևավորել «միաբարբ քաղաքական դաշտ» (ըստ ԱՄՆ-ի պաշտպանության փոխնախարար Փ. Վուլֆովիցի ձևակերպման), եթե վերանա թուրքական վերանգր, այլևս անհրաժեշտ չի լինի Նայասպանում ռուսական ռազմակայանի պահպանումը: Բացի այդ, եթե ղարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ թուրքական քաղաքականությունն առավել հավասարակշռված, չեզոք բնույթ ունենա, էականորեն կավելանա այդ հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու հավանականությունը:

Մյուս կողմից, 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո, ԱՄՆ-ը ստացավ Կենտրոնական Ասիայի պետություններում գործառնավորումներ տեղաբաշխելու հնարավորություն, ինչը մասնավորապես նշանակում է, որ ամերիկացիները, Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականությունը գնահատելով որպես թուրքամետ (ոչ թե ամերիկամետ, ինչպես դա նախատեսված էր), որոշել են այդ փառաձայնում իրենց քաղաքականությունն իրագործել ուղղակիորեն, այլ ոչ թե միջնորդավորված կերպով:

Վերջապես, երկարաժամկետ ճգնաժամից դուրս եկած Ռուսաստանը ճշգրտեց իր դիրքորոշումը Եվրամիության և ԱՄՆ-ի նկատմամբ, ինչի արդյունքում ստացավ Նյուսիսային Կովկասում, մասնավորապես Չեչենիայում, ազատորեն գործելու հնարավորություն:

Պետք է նշել, որ ռուս-թուրքական հարաբերությունների խորացման փենդենցը՝ «Երկնագույն հոսք» գազափարի կառուցումը, ապրանքաշրջանառության աճը մինչև 25 մլրդ. դոլար, համափրկել է ներգերիկ նախագծերը, արտաքին քաղաքականության և անվտանգության համար պատասխանատու փարբեր գերատեսչությունների միջև համագործակցությունը և այլն, օբյեկտիվորեն նպատակաուղղված է Միացյալ Նահանգների, որոշ չափով նաև ԵՄ երկրների ու Չինաստանի հետ փարաձայնությունների խորացմանը:

Որպեսզի իրավիճակը Նարավային Կովկասում լինի կանխատեսելի և վերահսկելի՝ ինչն անհրաժեշտ է ենթակառուցվածքների անխափան գործելու համար, ամերիկյան փեսանկյունից պետք է թուլացնել հայ-թուրքական հարաբերություններում առկա լարվածությունը և բացել երկու երկրների միջև սահմանը: Այդ նպատակին հասնելու համար ԱՄՆ-ը զգալի ջանքեր է գործադրում, որոնք սակայն մինչ օրս հաջողությամբ չեն պատկվել:

Բանն այն է, որ մերթոարանական փեսանկյունից այսփրկ կիրառվում է նույն մոտեցումը, ինչպես մերձավորարևելյան (արար-խրայելական, պաղեստանա-խրայելական) հակամարտության դեպքում: Խնդիրը դիփարկվում է որպես փարաձքային, ինչի հետևանքով կարգավորման համար գործի են դրվում այն միջոցները, որոնք անհրաժեշտ են փարաձքային վեճերի կարգավորման համար: Նակամարտող կողմերի վրա ճնշում է բանեցվում: Գերտերությունները՝ մասնավորապես ԱՄՆ-ը ու ԵՄ-ն, փրտեսական ու ֆինանսական օժանդակություն են ցուցաբերում, խոստանալով ավելին՝ փոխգիշումների գնալու և խնդիրը կարգավորելու դեպքում: Փոխգիշումներ պահանջելը և կողմերի նկատմամբ գործադրվող ճնշումը հանգեցնում են նրան, որ հակամարտող կողմերը բավարարված չեն լինում, փորձում են ճնշումներից պաշտպանվելու փարբեր ձևեր գտնել, ձախողում են բանակցությունները և հեռանում՝ բանակցային գործընթացի երաշխավորների գործողություններով գայրացած:

Խնդիրն այն է, որ մերձավորարևելյան ճգնաժամի բնույթով, դրա փարաձքային լինելը երկրորդական է: Դրա հիմնական բնույթն արժեքային-առասպելաբանական է: Նրեաների փեսանկյունից, Իսրայել պետության գոյությունը պայմանավորված է ոչ միայն հրեա ժողովրդի պետականություն ունենալու անհրաժեշտությամբ. այդ առումով նրանք վաղուց ինքնորոշվել են: Խնդիրն ունի շար ավելի կարևոր, սկզբունքային նշանակություն. պետք է վերականգնվի Երուսաղեմի փաճարը, վերականգնումը խորհրդանշելու է Աստծո ընտրյալ ժողովրդի վերադարձը դեպի ավերյաց երկիր, և կվերականգնվի կտրված հոգևոր կապը երկնային Երուսաղեմի հետ:

Մահնդական արարների, մասնավորապես պաղեստինցիների համար, Ալ-Քուդսը (սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը) ոչ միայն մի վայր է, որտե-

դից Մոհամեդ մարգարեն համբարձվեց և հանդիպեց Ալլահին, այլև իսլամի հաղթանակի խորհրդանիշ՝ Դար ալ-Իսլամի (իսլամի Կրոն՝ ուղղահավասարներին պարկանող հողեր) երեք կարևորագույն կենտրոններից մեկը:

Այսպիսով, երկու ժողովուրդների, նրանց ազգային առասպելաբանությունների միջև կարևորագույն սկզբունքային փարածայնությունը ոչ թե ապագայի վերաբերյալ պարկերացումներն են (բոլորը ցանկանում են ապրել խաղաղ, արդարության պայմաններում, ու այն, ինչ առաջարկվում է կողմերին՝ խաղաղության հաստատումից հետո նրանց լրիվ բավարարում է), այլ անցյալի ընկալումը: Անցյալի վրա հիմնված արժեքային համակարգերի հակասության հետևանքով առաջացած հակամարտությունը կարող է լուծվել միայն այդ արժեքային համակարգերի մերձեցման միջոցով: Իսկ դա, իր հերթին, հնարավոր է միայն այն դեպքում, երբ կողմերը գոնե մտաբերապես նույն դիրքերից են գնահատում իրադարձություններն ու գործընթացները:

Փաստագրական առումով մեծ փարբերությունների առկայության պայմաններում, այնուամենայնիվ, մտաբերապես նույն իրավիճակն է նկատելի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրում: Յեղասպանության խնդիրը երկու կողմերի համար էլ ինքնության կարևորագույն բաղադրիչներից է: Նայերի համար, մանավանդ Միլիոթում, այն կապված է «կորուսյալ դրախտի» և «ավերյաց երկրի» մասին առասպելների (իհարկև, առանց հրեական ինքնության համար առանցքային բաղադրիչի՝ «ընտրյալ ժողովուրդ» լինելու), աստվածային արդարության վերականգնման և «Էրզիրը» վերադարձնելու հնարավորության հետ:

Թուրքերի ներկայիս սերնդի համար խնդիրը կապված է «Մեծ թագավորության» անկման առասպելի հետ՝ կրոնական բաղադրիչի առկայությամբ, քանի որ «թագավորությունը» նաև խալիֆայթն է, որը միավորել է «ումման»՝ բոլոր մահմեդականներին: Օսմանյան կայսրության անկումը (որի ծաղկման ժամանակաշրջանն ընկալվում է որպես թուրք ժողովրդի «աստեղային ժամ») հանդիսանում է յուրօրինակ մեկնակետ, որից սկիզբ է առնում երկրի ժամանակակից պատմությունը. հնի վախճանը և նորի ծնունդը դարձած իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքը խիստ սկզբունքային է ժամանակակից թուրքերի համար: Յեղասպանությունը, որը հայերի գիտակցությունում հանդիսանում է «Մեծ եղեռն», թուրքերի համար, կախված նրանց վերաբերմունքից, կամ պատմության վերջն է, կամ պատմության սկիզբը:

20-րդ դարի վերջին քառորդի ընթացքում կարարված իրադարձությունները՝ թուրք հասարակության փարբեր խավերում առաջացրել են լուրջ հիասթափություն ժողովրդավարական արժեքների և արևմտամետ կողմնորոշման նկատմամբ:

Վերջին փաստ փարիների ընթացքում կայացած խորհրդարանական ընտրությունները, փարբեր քաղաքական ուժերի կազմավորած կառավա-

րությունները ցույց են տալիս, որ քաղաքական, փնտեսական և սոցիալական առումով ծանր ժամանակաշրջան վերապրող, տարբեր սուր էթնիկական ու կրոնական հակասություններով «հարուստ» Թուրքիան փորձում է պաշտպանական մեխանիզմներ գործադրել: Ամենասարդյունավետ պաշտպանական մեխանիզմները կենսունակ գաղափարախոսական համակարգերն են: Խնդիրը համակարգի ընտրությունն է. խորհրդարանական ընտրություններում հերթականությամբ հաղթել են արևմտամետ ազատականները, ազգայնականները, իսլամիստները, արմատական ազգայնականները ու կրկին իսլամիստները:

Այս իրավիճակը լրացուցիչ բարդություններ է ստեղծում հայ-թուրքական հարաբերությունների ճշգրտման և կարգավորման համար: Նայաստանն ու հայերը շարունակում են ընկալել Թուրքիան որպես անմիջական վտանգի աղբյուր, որն անկեղծ չէր անգամ այն ժամանակ, երբ «բարի կամք» էր ցուցադրում: Փորձեր են կատարվում պատճառներ գտնել ցեղասպանության ճանաչման կամ չճանաչման խնդրում, քանի որ պատմական հիշողությունը հուշում է պայթյալի այնպիսի լուծումների համար, որոնց իրագործումը կբացառի ողբերգության կրկնության հնարավորությունը:

Նենց սրանում է կայանում ցեղասպանության խնդրի նկատմամբ Նայաստանի քաղաքացիների և սփյուռքահայերի մտրեցումների հիմնական տարբերությունը: Մփյուռքի համար առասպելաբանական բաղադրիչն ինքնության կարևորագույն գործոն է և, հայրենիքից հեռու ապրելու պայմաններում՝ էթնոպաշտպանական մեխանիզմների գործողությանը նպաստող գործոն:

Նայաստանի համար ցեղասպանության ճանաչումն առաջին հերթին կապված է ազգային անվտանգության ապահովման խնդրի հետ, քանի որ ցեղասպանության ճանաչումը նշանակում է նաև զոջում: Իսկ զոջումը երաշխիքն է այն բանի, որ նման ողբերգություն այլևս չի կրկնվի: Բազմաթիվ հայերի, հույների, քրդերի, այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար դա կնշանակեր, որ Թուրքիան կորցրել է իր ցեղասպան էությունը, որը բնորոշ է բոլոր քայքայվող կայսրություններին, իսկ թուրքական հասարակությունը կայացել է՝ որպես իր գործելակերպով կանխատեսելի հասուն քաղաքացիական հասարակություն:

Նայ-թուրքական հարաբերությունների տեսանկյունից ցեղասպանության ճանաչումը կնշանակեր արժեքային համակարգերի մերձեցում անցյալի մոտ գնահատականների հիման վրա, ինչը տարածաշրջանում համատեղ ապագա կառուցելու համար լավ հիմք կհանդիսանար:

Կովկասյան, նաև ավելի լայն՝ սևծովա-կասպիական անվտանգության համակարգի ձևավորումը մեծապես կապված է վերոնշյալ խնդրի լուծման հետ: Իսկ նման ենթատարածաշրջանային անվտանգության համակարգը բացարձակ անհրաժեշտություն է՝ գլոբալ անվտանգության հա-

մակարգի կառուցման համար: «Մեծ Մերձավոր Արևելքի» և միացյալ Եվրոպայի ծրագրերի իրականացումը պահանջում է, որ երկրագնդի այս հարվածում ձևավորվի կայուն համակարգ, որպեսզի երկու խոշոր փարածաշրջանների հարման վայրը չդառնա հակամարտությունների և ցնցումների փարածման գոտի, այլ ընդհակառակը՝ արգելափակոց հակամարտությունների և ցնցումների ճանապարհի վրա:

Քանի դեռ թուրքական արտաքին քաղաքականությունը օգտագործում է չկարգավորված հայ-թուրքական հարաբերությունները Նարավային Կովկասում իր ազդեցությունն ուժեղացնելու նպատակով, քանի դեռ այդ գործոնի միջոցով այն ամրապնդում է իր դիրքերն Ադրբեջանում և Վրաստանում և հնարավորություն ունի սակարկելու ԱՄՆ-ի, Ռուսաստանի և ԵՄ-ի հետ՝ հարաբերությունների կարգավորման հեռանկարը խիստ մշուշոտ է երևում, ինչը խիստ բացասական է անդրադառնում փարածաշրջանի կայունության և անվտանգության վրա:

Արդյո՞ք հնարավոր կլինի իրագործել կովկասյան անվտանգության համակարգի ձևավորման նախագիծ, կգրնվե՞ն արդյոք դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիներ՝ այս բոլոր խնդիրների լուծումն այսօր կախված է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ձևից: Մահմանի բացումը, որն այդքան շար է քննարկվել վերջին փարիներին, խիստ դրական իրադարձություն կլիներ, սակայն իրականում այն կնշանակեր միայն, որ կողմերը գնում են այդ քայլին՝ իրենց շահերը հերապնդող ԱՄՆ-ի, Ռուսաստանի կամ ԵՄ-ի ճնշման ազդեցությամբ. դա չի կարող գնահատվել որպես առաջին գիտակցված գործողություն՝ ուղղված հարաբերությունների իրական կարգավորմանը:

Առավել կարևոր է մեր ժողովուրդների ազատությունն ու բարեկեցությունը

Տիկնայք և պարոնայք, նախ և առաջ թույլ տվեք շնորհակալություն հայտնել կոնֆերանսի հովանավորներին ու կազմակերպիչներին, որոնց շնորհիվ հնարավորություն ստացա այցելել ձեր հինավուրց երկիրը, որտեղ բնակվում են այսքան հպարտ, հյուրասեր ու բարյացակամ մարդիկ:

Ասածս մի համարեք հաճոյանալու փորձ՝ քաղաքական դրդապատճառներով: Պարզապես մանկությանս օրոք բազմաթիվ ծագումով հայ ընկերներ են ունեցել, անգամ մինչև Ստամբուլում դպրոց գնալս, ու նրանք շարունակում են լինել իմ ընկերները ողջ կյանքում:

Կուզեի նաև շնորհակալություն հայտնել պարոն Գրիգորյանին, որը մեզ հիանալի կերպով հյուրընկալեց՝ Երևան ժամանելու պահից:

Մինչ գեկույցս սկսելը պետք է հարգեմ ընկերոջս՝ հանգուցյալ Նրանյ Դինքի հիշատակը, ով զազանաբար սպանվեց մութ մեկուկես փարի առաջ: Նա մի մարդ էր, որը սիրում էր իր երկիրը՝ Թուրքիան, և իր կյանքը նվիրել էր թուրք և հայ ժողովուրդների միջև թյուրմբռնումներն ու ապարդեղեկարվությունը վերացնելուն:

Պետք է նշեմ, որ ինձ անհանգստացնում է, որ հաճախակի թուրք պաշտոնյաները նշում են, որ Թուրքիայի բնակչության 99,5 փոկոսը մահմեդականներ են: Ստիպված եմ հարց տալ. «Իսկ ո՞ր են մյուսները»: Ո՞ր գնացին հրեաները, հույները, հայերը, նաև ասորիները: Ինչո՞ւ հավաքեցին իրերն ու հեռացան: Ուրեմն, ինչ-որ շատ վատ բան է կատարվել:

Տիկնայք և պարոնայք, ես անկեղծորեն ցանկանում եմ, որ այն փեսակերները, որ ցանկանում են այսօր կիսել ձեզ հետ կնպաստեն մեր ժողովուրդների միջև հեղազա շփումներին ու համագործակցությանը և կօգնեն գտնել հնարավորություններ՝ փոխըմբռնան պակասը հաղթահարելու համար:

Ացանկանալի նաև նշել, որ ես ո՛չ գիտնական եմ, ո՛չ պարմարան, ո՛չ էլ դիվանագետ: Պարզապես նախագահ եմ թուրքական քաղաքական կուսակցության, որը հիմնադրվել է 14 փարի առաջ ու ներկայացված չէ խորհրդարանում՝ ստանալով ընտրողների քվեների մեկ փոկոսից պակաս: Այսպիսով, այսօր պետք է ձեզ հետ կիսվեմ մեր գաղափարներով՝ ազատական-ժողովրդավար փեսանկյունից: Թող դա հստակ լինի:

Տիկնայք և պարոնայք, այն ամբողջ գիտական, հասարակական, քաղաքական աշխատանքը, որ կատարվում է՝ կոնֆերանսները, զանգվածային միջոցառումները, ընտրությունները, աշխարհի ցանկացած մասում ունեն միայն մեկ նպատակ: Այն է՝ մշակել և հասանելի դարձնել այնպիսի

գործընթացներ, որպեսզի մարդիկ ապրեն բարեկեցիկ, առողջ ու ապահով կյանքով:

Քաղաքական գործիչները, ուր էլ լինեն, պետք է իրենք իրենց հարց փան. «Արդյո՞ք մենք հաջորդ սերնդին թողնելու ենք ավելի լավ երկիր, քան այն, որը սրբացել ենք»: «Ավելի լավ երկիր» ասելով՝ ես այժմ նկատի չունեմ շաբաթը մեկ նոր բջջային հեռախոս գնելու հնարավորությունը, կամ 100 հեռուստատեսությունների առկայությունը, կամ էլ ինտերնետը: Ես խոսում եմ այն մասին, որ հաջորդ սերունդը հավատ ունենա ժողովրդավարական արժեքների, հանդուրժողականության, քաղաքացիական իրավունքների ու ազատությունների նկատմամբ, այդ արժեքներն առաջնային համարի և պաշտպանի:

Երբ րեդեկացել էի, որ զեկույցիս թեման պետք է լինի «Նայասփանի և Թուրքիայի փարածաշրջանային և գյուղավայրի շահերը», բնականաբար սկզբից սկսեցի մտածել գյուղավայրի և փարածաշրջանային դերակատարների մասին: Կարծում էի, որ պետք է հաշվի առնեմ ամերիկյան, ռուսական, եվրոպական, իրանյան, նույնիսկ չինական ու հնդկական շահերը: Սակայն հետո հասկացա, որ ինչ կանխարեսումներ էլ անեմ այդ երկրների ու նրանց ռազմավարական շահերի մասին՝ դրանք ընդամենը «գիրակի ենթադրություններ» կլինեն: Անհայտները պարզապես չափազանց շատ էին, որպեսզի դրանց հետ գործ ունենայի:

Տիկնայք և պարոնայք, Նայասփանի և Թուրքիայի շահերը նշանակում են միմիայն հայ և թուրք ժողովուրդների բարեկեցությունը: Այսպիսով, որոշեցի գուշակություններ անելու փոխարեն, թե ԱՄՆ-ը, Ռուսաստանը կամ Չինաստանն ինչ են պլանավորել մեր փարածաշրջանի համար, նայել իրական պարկերին և ուսումնասիրել մեր կառավարությունների գործունեությունը: Ու ահա ինչ եզրակացության եմ եկել. մեզ միավորում է շատ ավելին, քան փակ սահմանը:

ՄԱԿ-ի մարդկային զարգացման ցուցիչը հաշվարկելիս հաշվի են առնվում այնպիսի ցուցանիշներ, ինչպես կյանքի միջին րեզոնանսները, գրագիտությունը, կրթությունը, մեկ շնչին հասնող ՆՆԱ-ի չափը՝ այլ կերպ ասած կյանքի որակը: Եվ ահա մեր երկրների ցուցանիշները. Նայասփանը 83-րդն է, իսկ Թուրքիան՝ 84-րդը: Մա նշանակում է, որ «կյանքի որակ» ապահովելու գործում ութսունից ավելի երկրների կառավարություններ շատ ավելի լավ են աշխատում, քան մեր կառավարությունները:

Նեդիսակավոր, վստահության արժանի «Էկոնոմիստ» հանդեսը հրապարակում է աշխարհի պարտությունների ժողովրդավարության ցուցիչը: Այսպես, մենք նույն խմբում ենք՝ «հիբրիդային» ժողովրդավարությունների թվում: Թուրքիան 88-րդն է, Նայասփանը՝ 110-րդը, Իրաքը՝ 112-րդը: Մեզ հետ նույն խմբում են Սենեգալը, Գանան ու Մադագասկարը: Նույնիսկ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Սերբիան՝ Եվրոպայում կամ Բանգլադեշը՝ Ասիայում հայտնվել են ավելի բարձր կարգում՝ որպես «թերի ժո-

դովրդավարություններ»։ Նրանցն առնվազն ժողովրդավարություն է՝ թեկուզ և թերի, իսկ մերը՝ ժողովրդավարության նման մի բան, ինչպես ենթադրում է «հիբրիդ» բառը։

Մեկ այլ կառույց՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլը», դիտարկում է կոռուպցիան կառավարման համակարգերում, որոնք փնտրինում են մեր վճարած հարկերը։ Թուրքիան համարվում է 77-րդ առավել կոռումպացված երկիրը, իսկ Նայասպանը՝ 99-րդը։

Իսկ այժմ՝ ամենավար և ամենահեղափոխական ցուցանիշը՝ «Ֆրիդոմ հաուզի» ազատության համաշխարհային ցուցիչը։ Տիկնայք և պարոնայք, սրանք շատ հեղինակավոր կազմակերպություններ են։ Այս գեկույցներն են ուսումնասիրում օտարերկրյա ներդրողները՝ մեր երկրներում մեկ ցենտի ներդրում կատարելու որոշում կայացնելուց առաջ։ Նրանք ունեն խիստ գիտական չափանիշներ ու ձևակերպումներ։

«Ֆրիդոմ հաուզը» ուշադրություն է դարձնում այնպիսի հարցերին, ինչպիսիք են քաղաքական իրավունքները, ժողովների, միավորումների, Կրեդաշարժի, մամուլի, խոսքի ազատությունը, սեփականության իրավունքները, յուրաքանչյուր երկրում սեփականություն ձեռք բերելու կամ վաճառելու ազատությունը։ Այս իրավունքներն ու ազատություններն ազդում են մեր առօրյայի վրա՝ գիտակցում ենք դա, թե ոչ։ Այդ ցուցանիշով Թուրքիան՝ Եվրամիության անդամակցության ենթադրյալ անդամ, գտնվում է «մասամբ ազատ» խմբում՝ զբաղեցնելով 105-րդ տեղը, իսկ Նայասպանը 134-րդ տեղում է և բնորոշվում է «ոչ ազատ»։

Այս դասիվում ներկա են բազմաթիվ երիտասարդներ, ուսանողներ։ Այժմ կցանկանայի նրանց դիմել։ Դուք շուտով կավարտեք ուսումը և աշխատանք եք փնտրելու։ Եթե Նայասպանում գործազրկության չափը մտավորապես նույնն է, ինչքան Թուրքիայում, ձեզ հեշտությամբ չի հաջողվի աշխատանք գտնել։ Եթե անգամ ձեզ բախտ վիճակվի գտնել աշխատանք՝ դուք չեք սպանալու այնքան, որքան կցանկանայիք կամ որքանի արժանի եք։ Գիտե՛ք ինչու։ Միայն այն պատճառով, որ վերը նշածս ոլորտներում մեր երկրներն այդքան վատ են իրենց դրսևորում։

Ազատություններն ու իրավունքները մեզ կառավարությունների կողմից շնորհվող պարգև չեն։ Դրանք բնատուր իրավունքներ են։ Քաղաքական գործիչները մարդկանց չափի գրկեն այդ իրավունքներից։ Մակայն վերը նշված ցուցիչներում մեր երկրների դիրքը վկայում է, որ մեր երկրներում այդ իրավունքները ուրնահարվում են, և դա ազդում է առօրյայի վրա։ Աղքատությունը և թերի զարգացումը ճակատագրի, աշխարհագրական դիրքի կամ մի ուրիշ բանի հետևանք չեն։ Դրանք վատ ներքին քաղաքականության արդյունք են։

Այժմ թույլ տվեք հարցնել՝ վերը նշված ցուցիչները հաշվի առնելով, չե՞ք կարծում, որ մենք ավելի մեծ ընդհանուր խնդիր ունենք, քան փակ սահմանը։ Կարծում եմ, որ թե՛ Թուրքիայի, թե՛ Նայասպանի ժողովուրդները

րը շար են փոփոխում: Իսկ եթե քննարկում ենք մեր երկրների գյուղա ու փա-
րածաշրջանային շահերը, ի՞նչն է առավել կարևոր, քան մեր ժողովուրդնե-
րի ազգափոթյունն ու բարեկեցությունը:

Տիկնայք և պարոնայք, մեր ժողովուրդներն արժանի չեն այսպես ապ-
րելու: Նրանք արժանի են շար ավելի լավին, քանի որ մենք շրջապա-
ված ենք էներգետիկ եկամուտների փրփիտնավոր դուրսերով, որոնք ի-
րենց ճանապարհն են փնտրում, սակայն մեր ժողովուրդներն ապրում են
թշվառության մեջ՝ ամսեկան ասենք 200 դոլարով, մինչդեռ մեր արևմու-
յան հարևանները վայելում են բարեկեցություն:

«Սառը պատերազմի» փարիներին յուրաքանչյուր պետություն գի-
տեր, թե ովքեր էին իր դաշնակիցները և հակառակորդները: Կոմունիզմի
փապալումից հետո նախկին վարչավյան դաշնագրի երկրները հեշտությ-
յամբ ընդունեցին արևմտյան արժեքները ու նորմերը: Այս փարածաշրջա-
նում Վրաստանն ու Ադրբեջանը հսկայական արտահայտվել են իրենց նախա-
պատվությունների մասին՝ առավել քան քաղաքականապես: Ուրեմն, դառ-
նանք Թուրքիային ու Նայաստանին:

Չնայած վերջին փարիներին Թուրքիան ու Միացյալ Նահանգներն
այլևս միակարծիք չեն ընդհանուր թշնամու վերաբերյալ և նրանց երկկող-
մանի հարաբերություններում առկա են վերելքներ ու վայրէջքներ, բայց
այնուամենայնիվ, Թուրքիան ընդհանուր առմամբ մնում է իր ուղու վրա:
Չնայած իսլամական կառավարության առկայությանը, այն շարունակում
է գտնվել արևմտյան ուղու վրա: Սակայն նույն ուղու վրա մնալը ձեզ ոչ մի
փող չի հասցնի՝ եթե առաջ չեք շարժվում:

Թուրքիան պետք է համեմատություն կատարի իր և Իսպանիայի,
Պորտուգալիայի, Նոնաստանի ու Իտալիայի պես երկրների միջև,
որոնք քաղաքական ու փնտրական առումով նույն մակարդակում էին,
ինչպես Թուրքիան 30, նույնիսկ 20 փարի առաջ ու որտեղ են նրանք այժմ:
Իսկ Նայաստանը պետք է համեմատվի եվրոպական նախկին կոմունիս-
տական երկրների հետ: Որտե՞ղ էին այդ երկրները 20 փարի առաջ և որ-
տեղ են հիմա: Իսկ որտե՞ղ է հիմա Նայաստանը:

Ես չգիտեմ, ինչպես են ձեր քաղաքական գործիչները բացատրում ի-
րավիճակը, սակայն ինքս մանկուց լսել եմ այն, ինչ փաստամյակներ շա-
րունակ կրկնում էին բոլոր թուրք քաղաքական գործիչները. «Թուրքիան
շար կարևոր աշխարհաքաղաքական դիրք զբաղեցնող երկիր է՝ երիտա-
սարդ բնակչությամբ ու ահեղի պոպուլենցիայով»: Մերումդներ են փոխվում,
իսկ Թուրքիան շարունակում է ունենալ ահեղի պոպուլենցիալ: Կարծում եմ,
եթե մտածելակերպը չփոխվի, ձեր պոպուլենցիայը ձեզ կնայի, իսկ դուք՝
նրան, ու այդպես փաստամյակներ շարունակ:

Ավելին. մեր և նմանատիպ երկրների կառավարությունները մշտա-
պես փնտրում ու գտնում են արտաքին պրոբլեմներ: Իրական խնդիրներից
ուշադրությունը շեղելու համար նրանք միշտ թշնամիներ են գտնում:

Տիկնայք և պարոնայք, իրականում մեր գլոբալ ու փարաձաշրջանա-
յին ընդհանուր շահերն ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ադրբեջանի կամ Եվրա-
միության շահերի հետ կապ չունեն: Մեր ընդհանուր շահերը պայմանա-
վորված են այնպիսի արժեքներով, ինչպիսիք են ժողովրդավարությունը,
քաղաքացիական իրավունքները և ազատությունները, հարգանքը մարդու
իրավունքների նկատմամբ, ինչպես նաև օրենքի գերիշխանությունը:

Նշենք, որ աշխարհում որևէ տեղ այդ արժեքները կատարյալ կերպով
չեն գործում: Սակայն մենք պետք է միանանք այդ իրավունքների և ազա-
տությունների հիմնական պաշտպաններին՝ ովքեր էլ նրանք լինեն: Ներ-
կայումս դրանք Եվրամիությունն ու Միացյալ Նահանգներն են: Կուպեն-
հագենյան չափանիշները և Ամերիկայի Մարդու իրավունքների հռչակա-
գիրը երկու ուղեցույցներն են ժամանակակից արժեքների համար:

Թուրքիան պետք է նպաստի ՆԱՏՕ-ի հետ Նայաստանի շփումներին,
ՆԱՏՕ-ի անհատական գործողությունների պլանին, որը ենթադրում է ժո-
ղովրդավարական կառույցների ամրապնդում: Թուրքիան նաև պետք է
համագործակցի Նայաստանի հետ՝ Եվրոպական հարևանության գործո-
ղությունների ծրագրի շրջանակներում: Նայաստանի անդամակցությունը
ԵԱՀԿ-ին հարկապես կարևոր է, քանի որ կովկասյան պետություններն
առայժմ չեն ձևավորել համագործակցության և փարաձաշրջանային հա-
մատեղ նպատակների ընկալում, ինչպիսին ունեն եվրոպացիները:

Տիկնայք և պարոնայք, ես շնորհակալ եմ ձեր համբերաբարության
համար: Ես սպասում եմ այն օրվան, երբ մենք կկարողանանք հանդիպել
ու քննարկումներ անցկացնել ավելի հաճելի թեմաներով՝ առանց եվրո-
պացիների կամ ամերիկացիների ֆինանսավորման: Նուսով եմ, որ մեր
կառավարությունները խիզախություն և բանակցելու պատրաստակա-
նություն կցուցաբերեն՝ մեր միջև եղած փարբերությունները երես առ երես
քննարկելու համար:

Եվ թույլ տվեք եզրափակել՝ մեջբերելով իմ երկու ամենասիրած ա-
սացվածքները, որոնք, համոզված եմ, վերաբերում են նաև հայ-թուրքա-
կան հարաբերություններին. «Եթե սահմանը փակ է մարդկանց ու ապ-
րանքների համար, այն կանցնեն գինվորները» և «նույնիսկ Աստված չի
կարող փոխել անցյալը»:

Ընդունենք իրար այնպիսին, ինչպիսին որ կանք

Ես կփորձեմ ներկայացնել այն ամենը, ինչ կարելի է ասել հայ-թուրքական հարաբերությունների վարածաշրջանային և գլոբալ շահերի համադրման ու հակադրման վերաբերյալ: Մինչ այդ՝ որպես մտերցում պետք է ասեմ հետևյալը. եթե հայերիս և թուրքերիս մոտ դեռ չի սրացվում խոսել, որովհետև մենք տարբեր ենք, դա չի նշանակում, որ եթե մեզ հոմոգենիզացնեն, մեզանից սրանան միատարր՝ ինչ-որ արժեքների վրա խարսխված, երբևէ մեր աշխարհագրական, մենթալիտետային, առանցքային գերակա մաս չկազմող զանգված, հնարավոր չի լինելու սրանալ երկխոսություն: Եթե կան ժողովուրդներ, կան երկրներ, կան կազմակերպություններ, որոնք ուզում են, որ մեր երկխոսությունը կայանա, ապա ամենակարևորը՝ մենք պետք է ընդունենք իրար այնպիսին, ինչպիսին որ կանք և ոչ թե փորձենք սինթեզել: Ես կարծում եմ, որ արժեքային համակարգը չի ներկրվում: Ես չեմ կարծում, որ հայերը և թուրքերը ունեն արբիտրի կարիք, ունեն ինչ որ անհայտ և անհասկանալի կոորդինատների համակարգի կարիք, որտեղ պետք է փեղավորեն իրենց ցանկությունները, շահերը և ապագան: Այդ կոորդինատների կարիքը մեր երկու ժողովուրդների խաղաղությունն ու բարեկեցությունն է ապագայում: Արդյո՞ք մենք կարող ենք հիշել վերջին երեք տարիների ընթացքում մեր երկրների գործելավճի մեջ երեք դեպք, որտեղ երկիրը առաջնորդվել է միայն արժեքով և չի ունեցել արտաքին քաղաքական, դիվանագիտական շահ: Այս խնդիրը վերաբերում է բոլորիս՝ ԱՄՆ-ի նման գերտերությունից մինչև Նայասարանի նման փոքր տերությունը: Կարծում եմ, որ, ի սկզբանե խեղաթյուրելով տերմինաբանությունը և այն մտերցումները, որոնք առաջին հայացքից շատ գեղեցիկ, գրավիչ և քաղցրահունչ են հնչում, մենք միևնույն է չենք լուծելու այդ խնդիրը, որովհետև մենք փորձում ենք նկարագրել այն, ինչ որ իրականում նկարագրվում է իրականությունից դուրս գտնվող երևույթների միջոցով և տերմինաբանությամբ: Մենք այնպիսին ենք, ինչպիսին որ կանք, մենք տարբեր ենք և մեզանից համահարթեցված զանգված սրանալ պետք չէ, մանավանդ, որ հայերը և թուրքերը ապրել են իրար հետ դարեր շարունակ՝ մինչև 19-րդ դարի վերջը, Օսմանյան կայսրությունում առանց լիբերալ՝ գերմայրահեղականացված արժեքի, և մենք կարիք չունենք նոր՝ արհեստաձին արժեքային համակարգերի, որպեսզի կարողանանք իրար հետ լեզու գտնել:

Դիտարկենք Թուրքիայի տեսանկյունից այն գլոբալ և վարածաշրջանային շահերը, որոնք խաչվում են Նայասարանի գլոբալ և վարածաշրջանային շահերի հետ: Խոսելով մեր շահերի ընդհանուր բնութագրի

մասին՝ կարող ենք ասել, որ երկու երկրներն էլ ունեն իրական և հայրա-
րարվող շահեր: Տայրարարվող շահերը համադրվում են, այսինքն՝ վար-
չապետների, արագործնախարարների, նախագահների միջև նամակագ-
րությունը, բարի ցանկությունների և դիվանագիտական ձևակերպումների
շրջանակը թույլ է տալիս համադրել այդ հայրարարվող շահերը, իսկ
իրական շահերը բախվում են: Տայաստանի և Թուրքիայի հարաբերու-
թյունները անհամաչափ են, ասիմետրիկ են, որովհետև, ցավոք, Թուրքիան
ուղղակի պետք է Տայաստանին՝ որպես կայուն զարգացող և բարյացա-
կամ հարևան, իսկ Թուրքիային Տայաստանը կարծես թե ներկա աշխար-
հաքաղաքական իրավիճակում պետք է, որովհետև դրա մասին խոսում են
ավելի գերհզոր պետությունները՝ ԵՄ, ԱՄՆ: Այսինքն՝ մենք ինքներս ենք
Տայաստանից շահագրգռված, իսկ Թուրքիային երբեմն պարտադրում են
այդ հարաբերությունները: Սա ասիմետրիկ հարաբերությունների փարա-
պետակ է: Մեր հարաբերություններում կան նաև այլ շահագրգիռ կողմեր,
այսինքն՝ հայ-թուրքական հարաբերությունները լույ Տայաստանի և Թուր-
քիայի ժողովուրդների հարաբերությունների խնդիրը չէ: Եթե այդպես լի-
ներ, գուցե վաղուց, շատ հեշտ և շատ ավելի արագ կլուծվեր այդ կնճիռը,
քան թե հիմա, երբ այդ հարաբերությունների վրա փորձում են ձեռքեր
փաթագնել փարբեր փետակի քաղաքական վերլուծարաններ և գերպե-
րություններ: Մեր երկու պետությունները ունեն ներքին խնդիրներ: Սա էլ է
ընդհանրություն: Տայաստանը ունի բազմաթիվ ներքին խնդիրներ, խոսքը
գնում է նաև պետականությանը վրանգավոր մարտահրավերներ ներող
խնդիրների մասին: Թուրքիան նույնպես ունի իր ներքին՝ պետականու-
թյանը, անվտանգությանը սպառնացող վրանգ՝ մարտահրավերներ հան-
դիսացող խնդիրներ: Ներքին անկայունության և ներքին լուրջ մարտա-
րավերներ ունենալու խնդիրը մեր հարաբերությունները դարձնում են էլ ա-
վելի դժվարին: Օրինակ՝ դարաբաղյան խնդիրը Տայաստանի համար և
քրդական խնդիրը՝ Թուրքիայի, թույլ չեն տալիս մեզ, որպեսզի մենք
միայն արտաքին ճամբարում կարողանանք խոսել և այդպես համադրենք
մեր շահերը: Եթե շատ հակիրճ խոսենք գլոբալ և փարաձաշրջանային շա-
հերի մասին, ապա Տայաստանի դեպքում ես բանաձևեցի հետևյալը. ԼՂՏ
միջազգային ճանաչում, բաց կոմունիկացիաներ, փարաձաշրջանային
համագործակցություն, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում,
խաղաղություն և կայունություն փարաձաշրջանում: Թուրքիայի պարա-
գայում հայրարարվող շահերի մեջ է ԵՄ անդամակցությունը, ենթակա-
ռուցվածքային հանգույցը, ռեզիդնալ գերպերության կարգավիճակի
ձգվելու գերխնդիրը, երկրի ամբողջականությունը և թուրքական միասնա-
կանությունը: Սա մեր շահերի օրակարգն է և սկնհայտ է, որ այստեղ ա-
ռաջնային շահերի անհամարելիություն կա, որովհետև թուրքական
միասնականության շահի պարճառով, Թուրքիան չի կարող հանդուրժել
Տայաստանի հետ հարաբերությունները՝ ունենալով Լեռնային Ղարաբա-

դի խնդիր: Ունենալով փարածքային ամբողջականության կորստի ուրվականը՝ Թուրքիան բնականաբար ամեն կերպ պայքարում է հայոց ցեղասպանության ճանաչման դեմ: Նայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը իր հերթին օգտագործվում է փարբեր տերությունների կողմից՝ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ը դանդաղեցնելու, փորպեղավորելու համար: Այսինքն՝ կան բնականոն հակադրվող, կան երրորդ կողմերի ձեռքերով հակադրվող փարածքային շահեր, որոնք այս պահի դրությամբ թույլ չեն փայխ մեզ ավելի լավատեսորեն նայել դեպի ապագան: Ո՛վ ունի ազդեցություն հայ-թուրքական հարաբերությունների վրա: Եվ ինչպիսի՞ն է այն: Յավոք, մեր հարաբերությունները “in vitro” պայմաններում չեն և էքսպերիմենտալ լաբորատորիայի օրինաչափություններին չեն ենթարկվում: Մենք իրար հեղ աշխատում, շփվում, ապրում ենք “in vivo” պայմաններում, և բնականաբար արտաքին միջավայրը մեծ ազդեցություն է ունենում այդ հարաբերությունների վրա: Ես դասակարգեցի պետությունները և կազմակերպությունները դրական ազդեցությունից մինչև բացասականը: Ինչ ենք սրանում այդ դեպքում: Շահագրգռվածության առումով ամենադրական ազդեցությունն հայ-թուրքական հարաբերությունների վրա ներգործում է ԱՄՆ-ը: Երկու բառով նշեմ, թե ինչու է ԱՄՆ-ին հեփաբբրում հայ-թուրքական հարաբերությունների նորմալ մակարդակը: Զանի դեռ կա թուրքական կողմի վրանգը, Նայաստանի համար կարևոր է ռուսական բանակի գործոնը: Ակնհայտ է, որ մեր թիվ մեկ մարտահրավերը Թուրքիան է, և այնքան ժամանակ, որքան Նայաստանի համար չլինի անվտանգության երաշխիք, ռուսական բանակի գործոնը կարևոր կլինի: Եվ այդքան ժամանակ ԱՄՆ-ը ստիպված կլինի հանդուրժել այդ ամենը: Ուստի ԱՄՆ-ը շահագրգռված է, որպեսզի հայ-թուրքական սահմանի լարվածության գրադիենտը իջնի, և ապագայում, երբ Թուրքիան չհանդիսանա վտանգ Նայաստանի համար, խնդիր կրարձացվի նաև ռուսական բանակի պիտանելիության մասին: Երկրորդ շահագրգիռ կազմակերպությունը ԵՄ-ն է: ԵՄ անդամ երկրների մի մասը ամերիկյան քաղաքականության ֆորվապետում են գտնվում, և մի շարք խնդիրներ ԱՄՆ-ն լուծում է հենց այդ երկրների միջոցով, բայց նաև այսպես կոչված կոնտրինենտալ Եվրոպայի քաղականությունը նույնպես ունի դրական ազդեցություն հայ-թուրքական հարաբերությունների վրա, գոնե այն իմաստով, որ ԵՄ-Թուրքիա բանակցությունների սերիալում հայկական սյուժեն երբեմն ծագում է, և այդ սյուժետով երբեմն գնում են որոշակի զարգացումներ: Պարբերաբար մենք տեսնում ենք, որ մշակութային արժեքների պահպանության, օրենսդրության որոշակի բարեփոխումների հարցերում ԵՄ-ը հասնում է նպատակներին. թեթևացնում է ճնշումը Թուրքիայում բնակվող այլազգիների, այդ թվում նաև այլակրոն մարդկաց՝ հայերի և այլ փոքրամասնությունների իրավունքների վրա: Ովքեր են խանդով նայում այդ հարաբերություններին: Նախ և առաջ Իրանը, որը գուցե և այդքան շահագրգռված չէ հայ-

թուրքական հարաբերությունների լավացման մեջ, և կարծես թե իրանական դիվանագիտության մեջ այնքան անհեռանկարային է համարվում հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր բարելավումը, որ այս ուղղությամբ հարուկ ջանքեր կամ փորձեր կարող են լինել: Շատ խանդով է վերաբերվում և վերաբերվելու է Վրաստանը, որովհետև, օգտվելով ներկայիս իրավիճակից, ամենակարճաժամկետ քաղաքական և փոփոխական դիվիդենդները ստանում է հենց Վրաստանը՝ որպես երկու թուրքական պետությունների միջև միջանցք, շեշտենք գոնև այդ գործոնը, մնացածի մասին չխոսենք: Ուլքե՛ր են «դժվար փանու» մեր հարաբերությունները, ուլքե՛ր են փանու մեր այդ հարաբերությունները նաև որպես վրանգ իրենց շահերին: Բնականաբար Ադրբեյջանը, որի պարզապես նաև հայ-թուրքական հարաբերությունների կնճիոր այս պահի դրությամբ որևէ հարթվելու միտում չունի, որովհետև կապել մեր երկու երկրների հարաբերությունները այլ երկրների հետ նշանակում է էլ ավելի շատ սեղմել պարզապես և ռեալ քաղաքականության խնդիրների այն օղը, որը առանց այդ էլ թույլ չի տալիս, որպեսզի մեր երկրները ավելի ազատ շփվեն: Եվ բնականաբար այդ երկրների թվում նաև Ռուսաստանի Դաշնությունն է, որը Թուրքիայում ունի շատ մեծ ազդեցություն՝ նախ և առաջ փոփոխական ոլորտում: Այնուհանդերձ այս փորձերի ընթացքում հասանելի, հրապարակային կամ հետո հայտնի դարձած գեթ մեկ քայլ Ռուսաստանը չի արել, որպեսզի օգտագործի Թուրքիայի հետ իր ունեցած հարաբերությունները հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար:

Դիտարկենք հնարավոր ընդհանուր օրակարգ: Եկեք մտածենք, թե ինչի շուրջ մենք կարող ենք աշխատել անգամ այս պայմաններում և աշխատենք միասին: Կոչենք դա «public goods», այսինքն՝ հասարակական բարիքներ և մեր հարաբերությունների հնարավոր ընդհանուր օրակարգ՝ կայունություն և խաղաղություն: Կարծում եմ, թուրքական կողմից շատ քիչ քաղաքական կամ առավել ևս հասարակական շրջանակներ կարող են չհամաձայնել այս գործոնի կարևորության հետ: Տնտեսական համագործակցություն և ինտեգրացիա, բնապահպանություն, մշակութային արժեքների պահպանություն, ժողովրդավարության զարգացում, ահաբեկչության և ծայրահեղության դեմ պայքար, սրան ավելացնենք նարկոտրաֆիկ, տրաֆիկինգ և այլն: Այսինքն՝ մենք անգամ այս իրավիճակում, երբ ռեալ քաղաքական խնդիրները և շահերը դժվար են համադրվում, ունենք օրակարգ, որը երկուստեք հեղափոխության կարող է առաջացնել, և այս օրակարգով հնարավոր է զարգացնել հարաբերությունները: Ի՞նչ անել: Եթե շատ կարճ, կարծում եմ, պետք է կարևորել գործընթացը և միաժամանակ ձգտել արդյունքի, որովհետև այդ նամակագրությունները, հարաբերությունները, հասարակական սեկտորի հարաբերությունները՝ երբեմն ինքնուրույն, երբեմն թուլացող, շատ կարևոր են որպես գործընթաց, բայց

այնուամենայնիվ արդյունքը առ այսօր շար փոքր է, այն առումով, որ պե-
տությունների հարաբերությունների վրա դրանք չեն անդրադառնում:
Իհարկե, մարդկային հարաբերությունները շար կարևոր են մարդկային
փեսանկյունից, և յուրաքանչյուր նոր ծանոթություն, ինչպես նաև այսօր իմ
թուրք գործընկերների հետ ծանոթությունը շար կարևոր ու հեղափոխիչ
իրադարձություն է, բայց միջակերպական մակարդակով, ցավոք, հասարա-
կական ճիգերի պոպուլյար չի գումարվել և չի պոպուլյարացել: Կարծես թե
այդ ամբողջ գումարները և ժամանակը ավագն է գնացել, որովհետև մենք
պեպք է գոնե ունենալիք հայ-թուրքական հարաբերությունների բարե-
լավմանը ուղղված միջոցառումների ռեզիստ, այսինքն՝ արխիվ: Ով ինչ է
արել այս փարիների ընթացքում այդ ուղղությամբ, ով ինչ կապ ունի. ամեն
մեկը, ամեն մի կազմակերպություն մի փոքր ֆուդեր կարող էր դնել այդ
արխիվում, և հեղափոխում մարդիկ փեսանեն, որ մենք գրույց չենք սկսում,
այսինքն՝ կա ինչ-որ կուրակում, կա փասնյակ փարիների կուրակված
համագործակցության փորձ, որը պեպք է ընդամենը ուսումնասիրել ու ա-
ռաջ փանել: Նաջողը. պեպք է «ոչ» ասել նախապայմաններին: Նախա-
պայմաններ թելադրելը նշանակում է իրականում չուզենալ, որպեսզի մեր
երկրների հարաբերությունները բարելավվեն: Բայց եթե Նայասպանը չի
դնում նախապայմաններ, կարծում են, նախապայմաններ մեր հարաբե-
րություններում պեպք է ոչ ոք չդնի: Իսկ Նայասպանը, ինչպես հայրնի է,
պարբասար է մեր հարաբերություններին առանց նախապայմանների:
Մերժել եռանկյունիներ, մերժել գետսրբաբերակ եռանկյունիներ մեր հա-
րաբերությունների մեջ: Երբորդ կողմը միշտ ավելնորդ է, առավել ևս նման
շար նորը հարաբերությունների մեջ: Եկեք իրականում փորձենք խոսել
իրար հետ, խոսել իրար համար, և մեր հարաբերությունները չկապել այլ
կողմերի հետ: Բնականաբար շար կարևոր է, որպեսզի մենք գրանենք
հարթակը այդ ամենի համար: Դա կարող է լինել փարածաշրջան, սահ-
ման, բայց գլոբալ քաղաքական իմաստով առաջարկվող նախագծերից՝
ամերիկյան, եվրոպական: Իսկ Ռուսասպանը նախագիծ ընդհանրապես
չի առաջարկում: Ես կարծում եմ, որ հայ-թուրքական հարաբերություննե-
րի և երկխոսության համար լավագույն հարթակ կարող է հանդիսանալ
Եվրոպական Միությունը՝ իր բոլոր խնդիրներով և պրոբլեմներով հետ
մեկտեղ:

Քննարկում գեկույցների շուրջ

Սփիվեն Քենքս.

Կցանկանալի արագորեն մեկնաբանություն կապարել և բոլոր երեք գեկույցողներին շնորհակալություն հայարնել նրանց հեղափոխիչ և խորը նկատարումների համար: Նարկապես հավանեցի Թորքիայից պարոն Տոկերի սավաճը: Դա այն չէր, ինչ ես կանխապեսել էի լսել, սակայն շարք հեղափոխիչ էր, և կարծում եմ, նա խիստ լրջորեն շարադրեց, ինչպես թե՛ Նայասարանը, թե՛ Թորքիան կարող են դառնալ սվելի ազար ու բարգավաճող: Կարծում եմ, նրա խոսքերը գալիս էին սրբի խորքից: Նայասարանի Նանրապետական Կուսակցությունն իսկապես հրաշալի տեղ ունի Նայասարանի պարմության մեջ: Այն սրեղծվեց, որքան գիտեմ, որպես դիսիդենտական շարժում ԽՍՀՄ-ի գոյության վերջին շրջանում՝ 80-ական թվականներին: Կուսակցության առաջնորդները շարք խիզախ մարդիկ էին և պայքարում էին հանուն այն նույն արժեքների, որոնց մասին խոսեց պարոն Տոկերը՝ հանուն ազարության, ժողովրդավարության, խորհրդային համակարգում իրենց ձայնը լսելի դարձնելու համար: Այն ժամանակ դա չիրականացավ, և իմ ընկալմամբ այն, ինչի մասին խոսեց մեր թուրք բարեկամը, հենց այն էր, ինչի համար հիմնադրվել և պայքարում էր Նայասարանի Նանրապետական Կուսակցությունը: Եվ ինձ հիասթափեցնում է այն, որ կարծես Նայասարանի Նանրապետական Կուսակցությունն այլևս չի կիսում նույն արժեքները: Այդպես հասկացա Ձեր խոսքերը մողերնիզացիայի, ինչպես նաև այն արժեքների մասին, որոնք Նայասարանը չի ցանկանում կիսել: Շնորհակալություն:

Արմեն Աշուրյանի պարասխանը.

Գուցե ժամանակի կամ շեշարդրումների առումով թերընկալման խնդիր կար իմ խոսքերի մեջ: Խնդիրը չէր վերաբերում արժեքների մերժմանը: Խնդիրը վերաբերում էր մեր այն ընդհանուր ցավին, մեր այն ընդհանուր խնդրին, որ ցավոք, արժեքները միջազգային հարաբերություններում՝ մանավանդ նման խրտին տարաձաշրջաններում, նման կարևոր ու բազմարեսակ շահերով բախումների տարաձաշրջաններում, շարք հաճախ մղվում են երկրորդ պլան: Եթե միջազգային արտաքին քաղաքականությունը խարսխված լիներ լոկ արժեքների վրա, ապա վաղուց Նայական հարցը լուծված կլիներ, և մենք այսօր չէինք ունենա հայ-թուրքական հարաբերությունների խնդիր, մենք այսօր չէինք ունենա Լեռնային Ղարաբաղի խնդիր, մենք առհասարակ խնդիրներ չէինք ունենա, որովհետև արժեհամակարգի մեջ, այդ թվում նաև մարդ արարածի ֆունդամենտալ իրավունքների մեջ, որոնք հետո ձևակերպվեցին որպես դեմոկրատական իրավունքներ, ի սկզբանե Աստծո կողմից տրված իրավունքներ են եղել: Ի սկզբանե այդ իրավունքների համար էր, որ հայ ազգի բազմաթիվ մարդիկ ողբերգությունների գոհ են դարձել մեր տարաձաշրջանում՝ եր-

բեմն, եթե չասեմ միշտ, մեր հարևանների մասնակցությամբ: Ես ինքս ցավով եմ ընկալում, որ հիմա միջազգային դիվանագիտական հարաբերություններում արժեհամակարգը դառնում է պայտյան, բայց երբեք բովանդակություն չի լինում: Կարող ենք երկար խոսել, ես կհանդերձեմ, օրինակ ձեզ, եթե հնարավոր է, կազմակերպեք մի սեմինար, մի կոնֆերանս ամերիկյան կամ ռուսական արտաքին քաղաքականության մասին, և մենք կարող ենք երկար խոսել: Շատ բազում-բազում օրինակներ կլինեն, որպես բոլորս միասին կցավենք, որ այս կամ այն խնդիրը լուծվել է ոչ թե արժեքի, այլ հեղափոխության, շահի գերակայությամբ:

Դավիթ Ղովհաննիսյան.

Մեր գիտաժողովի այս մասում ես ինձ թույլ կտամ ձայնս բարձրացնել իմ ընկեր, գործընկեր, մտերիմ բարեկամ Ալեքսանդր Արզումանյանի և մյուս քաղաքական բանասերների անմիջապես ազատելու օգտին: Մա այն հայտարարությունն էր, որը ուղղակի իմ խղճի հարցն է: Հիմա անդրադառնամ մի քանի հարցերի, որոնք իմ ուշադրությունը գրավեցին իմ գործընկերների ելույթներում: Նախ թուրք գործընկերոջս ելույթի առումով ասեմ, որ շատ ուրախ եմ, որ Թուրքիայի ընտրողների 1% կիսում են այն արժեքները և այն արժանատիքները, որոնց մասին խոսեց հարգարժան Ջեմ Տոկերը: Վերջին իրադարձությունները, որոնք փեղի ունեցան Հայաստանում վկայում են, որ Հայաստանի բնակչության և ընտրողների շատ ավելի մեծ փոքրսն է պայքարում ժողովրդավարության, ազատականության, օրենքի գերակայության, ճիշտ կառավարման, կոռուպցիայի վերացման համար: Երկրորդ կերպ, որի մասին կուզեի խոսել, այն արտահայտությունն էր, որ նույնիսկ Աստված չի կարող վերացնել անցյալը: Անշուշտ, Աստված չի կարող փոխել անցյալը, բայց ժողովուրդները կարող են համաձայնվել իրենց անցյալի վերաբերյալ, ինչը չափազանց կարևոր արժեքային հիմք կստեղծի իրենց սպազա համարել արժեքների կերպման համար: Այսպես ես չեի ուզեմ մանրամասնել, բայց կարևորագույն միջոցառումների հիման վրա են ձևավորվել ժամանակակից մեր ինքնությունները: Յեղասպանությունը պարմության վերջ է և կորուսյալ երկիր է, այսինքն՝ երկու միջոցառումներ, որոնք ուղղակի քայքայում են ինքնությունը և դրանից հետո ձևավորվում է բացարձակ նոր ինքնություն: Այսպես պիտի ասեմ, որ սովորաբար մեր թուրք գործընկերները մեծ շփոթմունքի մեջ են, երբ որ խոսում են Հայկական հարցի մասին և շատ հաճախ Հայաստանի Նանրապետությանը և մեր հասարակությանը վերագրում են այնպիսի միտումներ, որոնք մեզ օտար են, բայց հատուկ են հայկական համայնքների համար, հայկական Սփյուռքի համար: Գաղտնիք չէ, որ երբեմն Հայաստանի Նանրապետության և մեր Սփյուռքի շահերը չեն համընկնում, երբեմն՝ նույնիսկ հակասում են: Անդրադառնալով պ-ն Աշոտյանի ելույթին՝ ուզում եմ ասել, որ ոչ Լեոնային Ղարաբաղի հարցը, ոչ Յեղասպանության ճանաչման հարցը կապ չունեն հայ-թուրքական հարաբերությունները

չհասարակելու Թուրքիայի հասարակականության հետ: Ես անձամբ առիթ եմ ունեցել երկար փարիներ մասնակցելու հայ-թուրքական բանակցություններին՝ այդ այսպես կոչված չակերփավոր նախապայմանները շար հաճախ հանվում են, չկան այդպիսի նախապայմաններ: Իսկ երբ որ իրավիճակը պահանջում է, հանկարծ հայտնվում են, այն էլ պիտի նշեմ, որ այդ բանակցությունները, որոնք մենք երկար փարիներ արդեն վարում ենք, կրում են զուր իմիպացիոն բնույթ, նպատակին ուղղված և անկեղծ չեն: Մեկ-երկու բառով անդրադառնամ նաև Թուրքիայի եվրաինտելեգրման հարցին: Այսպեղ ուզում եմ բերել իմ կողմից շար հարգված Ջ. Բժեգինսկու կարծիքը: Նա ասում էր, որ Թուրքիայի կողմնորոշումը և էվոյուցիան ամենայն հավանականությամբ որոշիչ դեր են կատարում կովկասյան պետությունների ապագայի կերպման հարցում: Եթե Թուրքիան կայունորեն անցնի իր ճանապարհը դեպի Եվրոպա, իսկ Եվրոպան իր դռները չփակի նրա առջև, ապա Կովկասի պետությունները նույնպես ամենայն հավանականությամբ կներգրավվեն եվրոպական ոլորտի մեջ: Բայց եթե Թուրքիայի եվրոպականացումը հանկարծ փապավի ներքին կամ արտաքին պարճառնեքով, ապա և՛ Վրաստանը, և՛ Հայաստանը չեն ունենա այլ ընդրություն, բացի իրենց շահերը Ռուսաստանի շահերի հետ համադրելուց: Մա երկար ցիփար էր, բայց ինձ թվում է, որ ամբողջովին ներկայացնում է այն իրավիճակը, որում մենք այսօր հայտնվել ենք: Ռեգիստրի վերաբերյալ, որի մասին ասաց պ-ն Աշոփյանը, պիտի ասեմ, որ այն կա, մոնիթորինգը արվել է և հավաքված է այն ամենը, բացի պաշտոնական որոշ բանակցություններից, այն բոլոր կոնփակները, միջոցառումները, որոնք փեղի են ունեցել՝ կապված հայ-թուրքական հարաբերությունների հետ:

Նիգար Գոկսելի հարցը Դավիթ Հովհաննիսյանին.

Հարցս ուղղված է պարոն Դավիթ Հովհաննիսյանին: Ձեր խոսքի, ձեր զեկույցի վերջում նշեցիք, որ Թուրքիային անհրաժեշտ է Հայաստանի հետ լարված հարաբերություններ ունենալ՝ Կովկասում կամ Եվրասիայում փարաճաշրջանային փերություն լինելու համար: Կխնդրեի, որ մանրամասներ ներկայացնեիք, քանի որ բազմաթիվ անգամ հակառակ կարծիքն եմ լսել:

Դավիթ Հովհաննիսյանի պարասխանը.

Հարցը վերաբերում էր իմ արփահայփած այն մփքին, որ Թուրքիան հարաբերությունները չի հասարափում, որպեսզի ռեգիոնալ խաղացող դառնա փարաճաշրջանում: Իմ կարծիքով, այս լարվածության մակարդակը, որը կա հարաբերություններում, ձեռնափու է Թուրքիային երկու պարճառնեքով: Առաջինը, որպեսզի այն բոլոր ռեգիոնալ և փրանստեգիոնալ ծրագրերում, որոնք իրականացվում են՝ կապված ոչ միայն աճխաջրաճնային հումքի հետ, այլ փարքեր ենթակառուցվածքային հարցերի վերաբերյալ, Հայաստանը շրջանցվի: Այսպիսով Հայաստանի ներքին դերը փարաճաշրջանում և Ռուսաստանի հնարավոր դերը, որը իրականցվում է

նան Տայասարանի միջոցով, նվազեցվի: Երկրորդը, դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը և լարվածությունը, որը անընդհար կա սահմանի շուրջ, հնարավորություն է տալիս որոշակի սարսափեցման ակցիաների, որոնք երբեմն տեղի են ունենում դիվանագիտական մակարդակով, բայց անհրաժեշտության դեպքում կարող են ավելի բարդ բնույթ կրել:

Ամբերին Զաման (*«Էկոնոմիստ» հանդեսի թղթակից Թուրքիայում*).

Նախ, ձեր թույլություններ, ներկայանամ. ես «Էկոնոմիստ» հանդեսի թղթակիցն եմ Թուրքիայում, սակայն լուսարանել եմ նաև դարաբաղյան պատերազմը: Նաճախակի լինում եմ Նյուսիսային Իրաքում, Իրանում, Ադրբեջանում: Այսպիսով, որոշ չափով ընկալում եմ ողջ տարածաշրջանը: Նարցս ուղղված է պարոն Տոկերին, որն ինձ ստիպում է կատարել անսովոր մի դեր՝ պաշտպանել Թուրքիան: Նա շատ մտայն ձևով նկարագրեց ժողովրդավարության ներկայիս վիճակը Թուրքիայում, և ես ցանկանում եմ նշել, որ վերջին ութ տարիների ընթացքում Թուրքիան շատ դրական ուղղվածություն ունի. այն առավել ու առավել ժողովրդավարական է դառնում, և հասավ նրան, որ 2004թ. Եվրամիությունը համաձայնվեց Թուրքիայի անդամակցության վերաբերյալ բանակցություններ սկսել: Ինձ համար հասկանալի է, որ բազմաթիվ առումներով Թուրքիան դեռ թերանում է, սակայն ցանկանում եմ նշել, որ այս ութ տարիների ընթացքում իմ երկրում վերացվել է մահապատիժը: Քրդերն առաջին անգամ հնարավորություն ստացան հաղորդումներ ունենալ իրենց լեզվով: Այո, դրանք շատ սահմանափակ են, բայց տասը տարի առաջ նման բան պատկերացնելն անգամ անհնար էր: Իրենց քուրդ անվանելու համար մարդիկ բանտերում էին հայտնվում: Կարող եմ բազմաթիվ այլ օրինակներ բերել, սակայն չեմ ցանկանում այժմ ձեր ժամանակը զբաղեցնել: Եվ քանի որ Թուրքիան շարժվում է այս ուղղությամբ՝ «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման ներքո, արմատավորված շահեր ունեցողները՝ բանակում, դատական համակարգում և այլուր (իշխանության հին կենտրոնները), պայքարում են նրա դեմ: Եվ, ինչպես հավանաբար բոլորիդ հայտնի է, նրանք փորձում են արգելել կուսակցության գործունեությունը: Եվ կցանկանայի, որ պատասխանեիք. չափազանց կոշտ չե՞ք դադարում:

Ջեմ Տոկեր.

Ինձ թվում է, որ վերջին վեց տարիներին, «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո, Դուք չեք գրուցել ընդդիմության ներկայացուցիչների հետ: Ես հանդիպում եմ եվրոպացի պաշտոնյաների հետ, նաև ամերիկացիների հետ, և նրանք ասում են. «մեզ այցելում և իրենց տեսակետներն են ներկայացնում միայն «Արդարություն և զարգացում» կուսակցության պաշտոնյաները, իսկ ընդդիմության տեսակետները երբևէ չենք լսում»: Սոցիալ-դեմոկրատներին ու ազգայնականներին մերժել են գնալ Բրյուսել կամ գրուցել որևէ ամերիկացի պաշտոնյայի

հեղ Վաշինգտոնում: Այժմ ցանկանում են նշել, որ նախ և առաջ, մահապարիժը ժողովրդավարացման հեղ կապ չունի. եթե ունենար, ԱՄՆ-ը պետք է հանվեր ժողովրդավարական պետությունների ցուցակից: Ուրեմն սա մի հրաշալի փաստարկ է, որ օգտագործվում է Թուրքիայի ներկայացուցիչների, «Արդարություն և զարգացում» կուսակցության պաշտոնյաների կողմից: Քրդերենով հաղորդումների տեղությունն ինչքա՞ն է. կես ժամ: Կցանկանայի ունենալ մարդկանց առօրյա կյանքի բարելավման ծանրակշիռ օրինակ. «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից ժողովրդավարական բարեփոխման մեկ օրինակ: Կարող են Ձեզ 20 խախտումներ ներկայացնել, նույնիսկ ավելի շատ, սակայն հիմա այդքան ժամանակ չկա: Երկրորդը. վերջին հինգ տարիների ընթացքում բանակը չի միջամտել քաղաքականությանը: Այն, ինչ այժմ կատարվում է Թուրքիայում, առնչություն չունի ժողովրդավարության սկզբունքի հեղ, այն է՝ իշխանությունների տարանջատման հեղ: Դա մենք ունենք ժողովրդավարության դեպքում, երբ առկա են վերահսկողություն և հակակշիռներ: Այնպես, որ մեկ գաղափարախոսության կողմից չվերահսկվեն գործադիրը և օրենսդիրը, և նրանք չմտածեն, որ ճանապարհը բաց է և որ իրենք կարող են անել այն, ինչ կցանկանան՝ ունենալով քվեների 47% և մնացած 33% վրա ուշադրություն չդարձնելով: Ուրեմն, սա իրավական խնդիր չէ, ժողովրդավարությանը խոչընդոտել չէ: Այդ դեպքում ժողովրդավարության ինչի՞ն է պետք իշխանությունների տարանջատմանը: Ինչո՞ւ են ժողովրդավարության հիմնադիրները ստեղծել վերահսկողության և հակակշիռների սկզբունքը: Այն, ինչ տեղի ունեցավ Թուրքիայում վերջին հինգ տարիների ընթացքում, ժողովրդավարության պայմաններում տեղի չէր ունենա: Կարծում են, որ պետք է գրուցեմ այլոց հեղ, «Արդարություն և զարգացում» կուսակցության այլ անդամների հեղ:

Ամբերին Զաման.

Ձեմ ցանկանում այս կոնֆերանսը Ձեզ հեղ բանավեճի վերածել՝ Թուրքիայում ժողովրդավարության թեմայով, սակայն բազմաթիվ օրինակներ ունեն, ինչպես է փոխվել մարդկանց կյանքը, այդ թվում իմ կյանքը՝ որպես լրագրողի: Այժմ ինձ շատ ավելի ազատ են գգում՝ գրելով Թուրքիայում:

Ձեմ Տոկեր.

Բարի: Սակայն թվերը խոսուն են: Ինձ թվում է, որ Դուք բացակայել եք, երբ ես ներկայացրել եմ իրավիճակը: ԵՄ անդամ, կամ անդամակցության թեկնածու երկիրն ինչպե՞ս կարող է համարվել «մասամբ ազատ» և հինգ տարվա ընթացքում ոչ մի առաջընթաց չգրանցել: Ինչպե՞ս կարող է Մադագասկարի նման երկիրն ավելի բարձր դասվել միջազգային ռեյտինգներում՝ ազատության, տնտեսական ազատության և ժողովրդավարության ցուցիչների առումով: Ինչպե՞ս են նրանք կարողանում ավելի բարձր դասվել:

Տիգրան Զրբաշյան (*Director, Armenian-European Policy and Legal Advice Centre (AEPLAC)*).

Թույլ տվեք ողջունել բոլոր ներկաներին, մեր հյուրերին, դեսպաններին: Կարծում եմ, որ այսպիսի միջոցառումները, որոնք անց է կացնում պ-ն Գրիգորյանի գլխավորած կառույցը, նպաստում են այն հարցին, որին ուղղված են մեր բոլորի ջանքերը, այն է՝ բերել հայ-թուրքական հարաբերությունները նորմալ իրավիճակի: Դրա հետ կապված՝ ես ուզում եմ խոսել երկու հարցի շուրջ: Առաջինը, ուզում եմ անդրադառնալ հնչած հարցադրմանը՝ կապված Թուրքիայի ժողովրդավարացման հետ: Ուզում եմ ողջունել Ամբերին Զամանի դիրքորոշումը այն մասին, որ եթե մենք չկարողանանք գնահատել և համապատասխան գնահատական տալ այն բանին, ինչ որ կատարվում է Թուրքիայում, մենք կարող ենք դրանով սահմանափակել պրոգրեսը: Ես շատ անգամ ասել եմ, որ այն գործընթացները, որոնք այսօր իրականանում են Թուրքիայում աննախադեպ են ամբողջ թուրքական հանրակրթության և օսմանական պարմության մեջ, և չգնահատել դա, իմ կարծիքով, շատ լուրջ քաղաքական սխալ է: Որպես ապացույց, թե Թուրքիան ինչպիսին էր և ինչպիսին է դարձել, ես կբերեմ մեզ համար ցավոք և մեզ համար շատ հուզիչ մի օրինակ: Ես ուզում եմ հիշեցնել, որ Նրանուր Դինբի թաղման արարողության ժամանակ բազմահազարանոց թուրք հասարակությունը հանդես եկավ «մենք հայ ենք, մենք բոլորս Դինբ ենք» կարգախոսով, որը իրականում հայերի պատկերացումների մեջ թուրք հասարակության մասին լրջագույն փոփոխություն բերեց: Իհարկե, սա չի նշանակում, որ Թուրքիան այսօր անցել է դեպի ժողովրդավարություն ամբողջ ճանապարհը, բայց չնկատել այն փոփոխությունները, որոնք կատարվում են Թուրքիայում և չփորձել այդ փոփոխությունների հիման վրա խրախուսել հետագա փոփոխությունները, իմ կարծիքով, վրանգավոր է ամբողջ Թուրքիայի հետագա զարգացման համար: Այս իմաստով, մենք պետք է ընկալենք Թուրքիայում ընթացող գործընթացները, և ակնհայտ է, որ հայ և թուրք հասարակությունների շահերը շատ ավելի մոտ կլինեն, եթե այդ գործընթացները զարգանան և խորանան: Երկրորդ հարցը, որի մասին ուզում եմ խոսել, գուցե և ինձ բնորոշ հարց չէ, բայց այստեղ պ-ն Նովհաննիսյանի կողմից նշվեց մեր Մփյուռքի՝ որպես գործոն առկայության մասին, որը ազդեցություն ունի հայ-թուրքական հարաբերությունների վրա, և այդ առումով ուզում եմ ասել, որ փոքր քայլերով փոքր գործերը կարող են ազդեցություն ունենալ բոլոր կողմերի վրա: Այստեղ ներկա միջազգային կառույցների, հայ հասարակության, մեր Մփյուռքի, թուրք հասարակության ներկայացուցիչներին՝ որպես օրինակ ուզում եմ հնչեցնել մի առաջարկ: Ես խոսում եմ Վանա լճի մասին: Մի թեմա է, որը ինձ համար՝ որպես վանեցու սերունդներ ունեցող անձ, շատ մտահոգիչ է: Ես գիտեմ, որ այսօր Վանա լճի կատարարոֆիկ զարգացումները մտահոգում են նաև թուրքական հասարակությանը և պետութ-

յանը: Ես կարծում եմ, որ դա պետք է մտախոհի նաև մեր պետությանը, հասարակությանը և պետք է մտախոհի այն բոլոր սիյուոքսիայ վանեցիներին, որոնք ապրում են աշխարհասփյուռ, և, ինչու ոչ, այս թեմայի շուրջ կարող է հիմնվել պետական համագործակցություն՝ սրեղծելով ինչ-որ մի հիմնադրամ, որի միջոցներով հնարավոր կլինի փրկել Վանա լիճը՝ որպես բնական կոթող, որը կարող միացնել մեզ: Ես խոսում եմ նմանապիպ փոքր թեմաների մասին, որովհետև կարծում եմ, որ մեծ թեմաները բաղկացած են փոքրերից: Նամագործակցությունը ինքնուսարինքյան չի սկսվում, դիվանագիտությունը չի նախորդում, դիվանագիտությունը՝ փոքր գործերին փեր կանգնելու արդյունք է: Այդպիսի փոքր միջոցառումները, անգամ այս միջոցառումը կարող ենք դիտել այդ համագործակցության շրջանակներում: Նամաձայն եմ պ-ն Աշոտյանի այն մտքի հետ, որ ամեն ինչը պետք է ինչ-որ նպատակ հետապնդի, ինչ-որ արդյունք պետք է քա: Ներկայես՝ բնապահպանական, մշակութային համագործակցության շուրջ շար ավելի հեշտ է հասնել նպատակին, որովհետև շահերի համադրությունը այսփրեղ շար ավելի հեշտ է ապահովել: Նենց որ մենք սկսում ենք խոսել փրքեսական, քաղաքական համագործակցության մասին, շահերը դառնում են որոշիչ, և մենք ոչ մի հարց չենք կարողանում լուծել: Կներեք, որովհետև խառնվեցի ինձ ոչ բնորոշ թեմային, որը փրքեսական չէ, չնայած ես կարծում եմ, որ փրքեսական ոլորտում նույնպես լրջագույն հարցեր կան, և որքան փրեղյակ եմ, պ-ն Գրիգորյանը այսօր դրան ևս պետք է անդրադառնա, որովհետև կան նաև փրքեսական շահեր, որոնք մենք չենք փրեսնում, բայց իրականում նրանք առկա են, սակայն իմ համոզմունքն է, որ փոքր գործերը ավելի մեծ արդյունք են փալիս, քան մեծ ճառերը:

Արղա Բաթու.

Մեկ հակիրճ մեկնաբանություն՝ ժողովրդավարացման թեմայով: Կցանկանայի հարցը դիտարկել գիտական փրեսանկյունից: Երբ դիտարկվում են ժողովրդավարացման գործընթացները, ինդիրը բուն գործընթացն է, ոչ թե այն, թե ինչն է սև, իսկ ինչը՝ սպիտակ: Երբ ուսումնասիրում եք մոդերնիզացիայի և ժողովրդավարացման որոշ փրեսություններ, օրինակ Նանթինգոնի փրեսությունը, նկատելի է, որ ժողովրդավարացման գործընթացներում լինում են վերելքներ և վայրէջքներ, ու մենք դա կարող ենք նկատել թե՛ Նայասփանի, թե՛ Թուրքիայի օրինակների փրա: Այնպես որ, կարծում եմ ժողովրդավարական լինել-չլինելը ճիշտ գնահատելը պարզապես ասփրճանների ինդիր է:

Նարություն Խաչարյան (*Մոյան Տարան գործակալության փրքեսական և քաղաքական վերլուծաքան*).

Նարցս ցանկանում եմ ուղղել պարոն Տոկերին: Նարցս հերևյալն է. ճիշտն ասած, ակնկալում էի Ձեր գեկույցում լսել Ձեր կարծիքն այն պարզ ինդիրի վերաբերյալ, թե ինչու մինչ այժմ, այսքան երկար ժամանակահատվածում և փարբեր կուսակցությունների կազմած կառավարությունների

ներքո, Թուրքիան չի բարելավել հարաբերությունները Նայասպանի հետ: Որքան հասկանում եմ, Դուք դժգոհ եք այդ իրավիճակից. արդյո՞ք կարծում եք, որ Նայասպանի և Թուրքիայի ընդհանրությունները, որոնք թվարկեցիք, կապ ունեն Թուրքիայի կողմից Նայասպանի հետ հարաբերությունների կարգավորումը փապալելու հետ: Եվ հետևաբար՝ կարո՞ղ ենք հուսալ, որ այսպիսի հանդիպումները և նախաձեռնությունները կարող են նպաստել այդ կարևորագույն խնդրի լուծմանը, նպաստել երկու երկրների միջև հարաբերությունների բարելավմանը և սահմանի բացմանը:

Ջեմ Տոկեր.

Ես էլ եմ բազմիցս փվել նույն հարցը, որ Դուք եք փայխ. ինչո՞ւ են կառավարությունները հաջորդում իրար, իսկ Նայասպանի հետ հարաբերությունները չեն բարելավվում: Բայց որպես Թուրքիայում բնակվող անհար, Նայասպանի և հայ ժողովրդի բարեկամ, սրիպված եմ հասկանալ, որ Թուրքիայում ընտրություններ են փեղի ունենում, կա հասարակական կարծիք, կան կոշտ դիրքորոշման փեր քաղաքական գործիչներ, կան չափավորներ, նաև կան այնպիսիք, ովքեր կիսում են իմ փեսակերպները: Միջին թուրքի համար Նայասպանի հետ հարաբերություններն օրակարգի խնդիր չեն: 80-ականների կեսերից այն, ինչ մենք կարդում ենք թուրքական թերթերում հայ-թուրքական հարաբերությունների մասին, հետևյալն է. Մլովակիայի կառավարությունը հավանություն է փվել ցեղասպանությամբ վերաբերող օրինագծին, Արգենտինայի խորհրդարանն է ճանաչել, գիտեր, Լեհաստանն ու այլ երկրներ, որոնք խնդրի հետ ոչ մի առնչություն չունեն: Ու այդպիսով, միջին թուրքի իմացածը Նայասպանի հետ հարաբերությունների մասին սահմանափակվում է ցեղասպանությամբ, բողոքներով, մեղադրանքներով ու, ինչպես պարոնն ասաց, Թուրքիայի կառավարությունները մեկը մյուսի հետևից փորձում են բացափրել այդ իրողությունը: Այնպես որ, պետք է հասկանաք այդ իրավիճակը: Պետք է փնտրեք խնդիրը լուծելու այլ ճանապարհ: Ես հավարացած եմ, որ միջազգային հարաբերություններում զգացմունքայնությունը փեղ չպիտի ունենա: Նասկանում եք, որ չկան բարեկամներ կամ թշնամիներ. կան ազգային և փարածաշրջանային շահեր: Եթե ինչացի ենք, պիտի դրանց վրա կենտրոնանանք: Կարո՞ղ են այսպիսի հանդիպումներն օգնել: Նրանք չեն կարող վնաս պատճառել, սակայն, ինչպես զեկույցիս մեջ նշել էի, մենք կարող ենք փարվա բոլոր 365 օրերին հանդիպել, բայց քանի դեռ մենք ազդեցություն չունենք մեր ընտրված ներկայացուցիչների, մեր կառավարությունների վրա, եթե մենք ունենք մի ընտրական համակարգ, որը նրանց հաշվետու չի դարձնում իրենց ընտրողների առջև, և նրանք ճնշում չեն զգում, ուրեմն կարող ենք անընդհար հանդիպել, բայց փոփոխություններ չարձանագրել: Այսպիսով, պետք է դիտարկել առավել ընդարձակ պատկերը՝ փոփոխությունների հասնելու համար:

Նարություն Խաչատրյան.

Ճիշտ հասկացա՞մ, որ իրավիճակի հիմնական պարճառը Թուրքիայում առկա հասարակական կարծիքն է: Անհաջողության պարճառը թուրքական հասարակական կարծիքն է:

Ջեմ Տոկեր.

Այդպիսին էր հասարակական կարծիքը Թուրքիայում, դա էին թերթերում կարդում: Կրկին անդրադառնալով 80-ականներին՝ նշել էի միջին թուրքի կարծիքը: Ինչպես ասացի, միակ բանը, որի մասին կարդում են՝ ցեղասպանության վերաբերյալ օրինագիծն է, իսկ ինչ-որ ժամանակ դա ԱՄԱԼԱ-ի գործունեությունն էր: Դա է միջին թուրքի իմացածը հայ-թուրքական հարաբերությունների մասին: Այժմ իրավիճակը փոխվեց, քանի որ Թուրքիայի հարաբերություններն Ադրբեջանի հետ հիմնված են էներգետիկ նախագծերի վրա, իսկ Վրաստանի հետ՝ էներգետիկ նախագծերի և խոշոր կոմունիկացիոն խնդիրների վրա: Եվ դա Թուրքիային ավելի շար կապեց նրանց հետ: Սա ևս դարձավ մեծ խոչընդոտ մտավորապես վերջին փասնամյակի ընթացքում:

Ալեքսանդր Իսկանդարյան (*Լրատվամիջոցների Կովկասյան Ինստիտուտի տնօրեն*).

Ացանկանայի վերադառնալ ժողովրդավարացման խնդրին: Այդ խնդիրը շար կարևոր են համարում: Իհարկե, այսօրև չենք կարողանա այն քննարկել, սակայն կուզեի երկու-երեք շեշտադրում անել: Թուրքիայում ժողովրդավարացման փարեր սկսեցին ներմուծվել ընդամենը 170 փարի առաջ՝ Թանգիմաթով, իսկ Նայաստանում դա լրջորեն սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ ընդամենը մոտ 20 փարի առաջ: Գործընթացի դինամիկան ակնհայտ է: 170-180 փարին պարմական փեսանկյունից շար կարճ ժամանակաշրջան է: Եվրոպայում սահմանադրականության փարեր սկսեցին ներմուծվել 1215 թվականից՝ սկսած Ազատությունների մեծ խարտիայից՝ Magna Charta-ից: Կարծում են, որ այդ նույն Անգլիան Magna Charta-ի ընդունումից 170 փարի անց ավելի շար նման էր ժամանակակից Աֆղանստանին, քան ժամանակակից Անգլիային: Դինամիկա գոյություն ունի, և ես այն նկատում եմ: Առաջին անգամ Թուրքիայում եղել են 15-16 փարի առաջ, իսկ վերջին անգամ՝ մոտ երկու ամիս առաջ: Այս վերջին անգամ համալսարանում դասախոսությամբ էի հանդես գալիս, դասախոսությանս ընթացքում օգտագործել եմ «ցեղասպանություն» բառը, ինձ հարցեր էին փալիս, և այդ ժամանակ թուրք ուսանողներն ու դասախոսները նույնպես օգտագործում էին «ցեղասպանություն» բառը: Նման բան պարկերացնել անգամ անհնար էր ընդամենը 5-6 փարի առաջ: Թուրքիան փոխվում է, դինամիկ կերպով է փոխվում: Խոսքն այժմ աղյուսակների մասին չէ. դրանցում այն կարող է 101-102 փողերը զբաղեցնել: Այսօրև կարելի է ժամեր շարունակ քննարկել, որ աղյուսակներում այդ փողերը բացարձակապես անիմաստ են՝ առանց հաշվի առնելու այդ

աղյուսակների կազմելու մեթոդոլոգիան: Պարզապես չի կարելի դրա մասին խոսել առանց ասելու՝ ինչպես են դրանք կազմվում: Ուրեմն, կա իրողություն, որից մենք դժգոհ ենք, բոլորն են դժգոհ, կարծում եմ, սկսած Մադագասկարից, վերջացրած աշխարհի ամենաժողովրդավարական երկրներով: Եվ կա դինամիկա, որը պետք է փորձենք ոչ միայն իմաստավորել, այլև աշխարել դրա հետ, որպեսզի հնարավորություններ ստեղծենք նրանց համար, ովքեր մեզ կհաջորդեն, ասենք 10 տարի անց՝ լինեն վերլուծաբաններ, թե քաղաքական գործիչներ, որպեսզի Թուրքիան համեմատեն ոչ թե Մադագասկարի, այլ Եգիպտոսի հետ. իսկ հաջորդ անգամ՝ ոչ թե Եգիպտոսի, այլ Իսպանիայի հետ և այդպես շարունակ: Կա այդպիսի ճանապարհ, այսպեղ դա հնչեցվեց: Կա Իսպանիա, կա Նոնաստրան, կա Պորպուգալիա: Պորպուգալիայում ավելի քիչ քան 20 տարի առաջ ֆաշիզմ էր: Նամապարասիսանաբար, եթե դինամիկ կերպով ընկալենք այն իրողությունը, որը ունենք՝ կրեսենք, որ Թուրքիան շար դինամիկ կերպով է զարգանում, քանի որ կարող եմ հաշվարկը սկսել Թանզանիայից, բայց կարող եմ նաև սկսել 2004 թվականից: Ե՛վ մեկը, ե՛ւ մյուսը որոշ չափով ճշմարտացի կլինի: Այն բուռն փոփոխությունները, որ տեղի են ունենում Թուրքիայում, թույլ են տալիս, որ Թուրքիայի երկու քաղաքացի չհամաձայնվեն իրար հետ և բանավիճեն իրենց քաղաքական դիրքորոշումների շուրջ: Նայաստրանում 20 տարի առաջ նման բան պարկերացնելն անհնար էր: Նամապարասիսանաբար, բացվում է հնարավորության պարուհան: Ահա այսօր կուլուարներում գրուցում էինք թուրք գործընկերոջս՝ Ջեմ Տոկերի հետ, և նա ասաց, որ որպեսզի իր կուսակցությունը մեկ տոկոսից ավելի քվեներ ստանա, պետք է սերնդափոխություն կատարվի: Ուրեմն, նա զգում է, որ մեկ սերնդի փոփոխությամբ իրավիճակը կարող է փոխվել: Ահա ինչի մասին է խոսքը: Կրկնեմ. սա ոչ թե դիրքորոշումների, այլ տեսակետների տարբերություն է՝ իրավիճակը կարող է դիտարկվել թե՛ ստատիկ, թե՛ դինամիկ տեսանկյունից: Կարծում եմ, որ մեր քննարկումների ընթացքում շար կարևոր է սա մտապահել:

Թուրքիայում անցկացված հարցազրույցների և հարցումների վերլուծություն

Իմ այսօրվա զեկույցը հիմնականում հիմնվում է Գլոբալիզացիայի և փարաձաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի նա-
խագծի շրջանակներում Թուրքիայում անցկացված առկա հասարակա-
կան տրամադրությունների մասին հարցազրույցների վերլուծության, նաև
իմ հայաստան կատարած այցերի վրա: Հարցազրույցների պատասխան-
ներն ամբողջությամբ չեն արտահայտում Թուրքիայում գոյություն ունեցող
տրամադրությունները, սակայն դրանք համադրելով այլ նկատառումների
հետ, հնարավոր է լույս սփռել որոշ իրողությունների վրա: Զեկույցիս հիմ-
նական դրույթները հետևյալն են.

- Հայաստանը և Հայաստանի հետ հարաբերությունները մեծ տեղ չեն զբաղեցնում թուրքական օրակարգում:
- Հասարակական կարծիքը Հայաստանի և հայ-թուրքա-
կան հարաբերությունների վերաբերյալ հիմնված չէ գիտական
փաստերի վրա, իսկ իրականացվող քաղաքականության օգտա-
կարությունը գրեթե չի քննարկվում:
- Սա միաժամանակ պատճառ է և հետևանք այն բանի, որ
բազմաթիվ խնդիրներ պարզաբանված չեն, օրինակ՝ արդյո՞ք -
հայկական Միլիտքը երրորդ ուժ է հանդիսանում, թե այն պետք է
դիֆուլի որպես Հայաստանի կցորդ: Կամ օրինակ՝ ո՞ր կողմն է պա-
տասխանատու այն բանի համար, որ եղած նախաձեռնություննե-
րը չեն իրականացվել:
- Վերջիվերջո, Հայաստանի հետ հարաբերությունները
թուրքերի կողմից չեն ընկալվում որպես հրապապ խնդիր:
- Կարծում եմ, կարևորագույն քայլերից մեկը, որ պետք է
կատարվի, երկու կողմերում փարաձված նախապաշարումները
հաղթահարելն է. դա կնվազեցնի մարդկանց ընկալունակությունն
ազգայնական սադրանքների հանդեպ և կառավարություններին
հնարավորություն կտա հաշտության հասնել:

Նախ և առաջ, հասարակական կազմակերպությունների մեծամաս-
նությունը չի ցանկացել պատասխանել տրված հարցերին: Հիմնական
պատճառն այն է, որ հասարակական կազմակերպությունները չունեն

դիրքորոշում հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Թուրքական հասարակական կազմակերպությունների մեծամասնությունն աշխատում է այլ ոլորտներում՝ կրթության, կանանց իրավունքների, կառավարման թափանցիկության, ներքին քաղաքականության կամ եվրոպական ինտեգրման: Կովկասը նրանց օրակարգում առանձնակի տեղ չի զբաղեցնում, և նրանք չունեն որևէ տեսակետ Նայասպանի վերաբերյալ: Ինչպես նշել է մի պաշտոնաթղ զինվորական. «Թուրք հասարակության օրակարգում Նայասպանի հետ հարաբերությունների խնդիր, ըստ էության, գոյություն չունի»:

Թուրքերը շարքից զիպեն Նայասպանի մասին: Ըստ էության, Նայասպանը հայտնվում է թուրքական լուրերի թողարկումներում միայն այն ժամանակ, երբ լինում են լուրեր Սփյուռքի կողմից ցեղասպանության վերաբերյալ բանաձևերի ընդունման ուղղված ջանքերի մասին: Այնպես որ, թուրքերը շարքից զիպեն Նայասպանում տեղի ունեցող իրադարձությունների կամ հայերի ունեցած մտահոգությունների մասին:

Ըստ TESEV կազմակերպության անցկացված հարցման, Թուրքիայում մեծ թիվ են կազմում մարդիկ, որոնք հայերին նույնացնում են հրեաների հետ:

Գիտելիքների պակասն ազդում է հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ մարդկանց պարկերացումների վրա. մարդիկ ինչ-որ բաներ են լսել ու կրկնում են ինչ-որ տրիվիալ մտքեր՝ առանց որևէ հստակ տեղեկություն ունենալու:

Լրարվամիջոցները նույնպես լավատեղյակ չեն, ու չնայած որոշ լրագրողներ աստիճանաբար փորձում են ընդհանուր մտպեցումներ գրել՝ լրարվական գործակալություններն ընկնում են ցանկացած սենսացիայի հետևից: Որպես փաստ նշենք, որ հարցվածներից շատերը, ովքեր կողմնակից են հարաբերությունները բարելավելու, նշել են, որ ԶԼՄ-ները հարաբերությունների բարելավման լուրջ խոչընդոտ են հանդիսանում:

Դիտարկենք մի կարևոր հարց. որո՞նք են սահմանի փակ լինելու պարճառները և ինչի՞ վրա է հիմնված պետության դիրքորոշումը հարաբերությունների վերաբերյալ: Գրեթե բոլոր հարցվածները նշել են հետևյալ չորս պարճառները.

- Նայասպանը բացահայտ կերպով օժանդակում է Թուրքիայի և թուրքերի դեմ Սփյուռքի քարոզչությանը:
- Որոշ հայկական փաստաթղթերում Արևելյան Անատոլիայի որոշ շրջաններ նշված են որպես հայկական տարածքներ, և առկա սահմանները պաշտոնապես ճանաչված չեն:
- Ոչ Նայասպանի կառավարությունը, ոչ էլ հասարակությունը անհրաժեշտ համարժեք վերաբերմունք չեն ցուցաբերել ASALA-ի ահարկչության նկատմամբ:

• Ղարաբաղյան հակամարտությունը, ադրբեջանական փարածքների օկուպացիան՝ ինչը դիտվում է որպես «Մեծ Նայասփանի» սրբազանը ձգտելու մի մասը:

Նարցվածներից միայն մեկը՝ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ, ավելացրեց մի նոր բան. որ կողմերը վախենում են միմյանցից և փոխվարահության պակաս ունեն:

Նսրակ չի պարկերացվում՝ ովքեր են խոսում կամ գործում Նայասփանի անունից: ASALA-ն կամ ցեղասպանությանը վերաբերող հոչակարգերը մարդկանց պարկերացումների մեջ կապվում են Նայասփանի հետ՝ ինչը բարդացնում է առաջընթացի հնարավորությունը: Մյուս կողմից, գոյություն ունեն որոշ փոխկապակցվածություններ, որոնց վրա հիմնված են նման ընկալումները, և անշուշտ, շարերը գտնում են, որ հակառակ կողմում Սփյուռքն է իրական գործող անձը:

Սփյուռքի հարցը կարևոր է. այն ներկայացնում է մի խնդիր, որը թուրքերը դժվարությամբ են ընկալում, չհասկանալով, ինչպես վարվել դրա հետ: Անկասկած, Սփյուռքի փասնամյակների գործունեությունը ուժեղ հակակրանքի է հանգեցրել և նպաստել թուրքական դիրքորոշման կոշտացմանը: Ինչպես նշել է մի հասարակական կազմակերպության ներկայացուցիչ, «հայ-թուրքական հարաբերությունները ձևավորվում են հայկական Սփյուռքի նպատակներին համապատասխան. դա վնասում է մեր երկու երկրների նպատակներին»:

Այնուամենայնիվ, Թուրքիայում գոյություն ունեն նաև ազգաբնակչության շրջանակներ, որոնք շահագրգռված են հաշվի առնել Սփյուռքի և Նայասփանի միջև առկա տարբերությունը: Բայց միևնույն է, դժվար է գնահատել, ինչ չափով է հասարակական կարծիքն ընկալում Սփյուռքը և Նայասփանի Նանրապետությունը որպես միասնական ուժ, նաև որչափ են դրանք պատասխանատու միմյանց համար:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ. Թուրքիայում գրեթե չի քննարկվում՝ արդյոք սահմանի փակ լինելն իրականում օգտակար է, թե վնասակար ոչ միայն Թուրքիայի, այլ նաև Ադրբեջանի շահերի համար: Իհարկե, ստատուս քվոն մղում է հայերին Թուրքիայի նկատմամբ անվարահություն ցուցաբերելու:

Կամ օրինակ, դիտարկենք Նայասփանի կողմից Թուրքիայի սահմանները չճանաչելու և իբր թե փարածքային պահանջներ ունենալու խնդիրը: Նարցվածները գրեթե չունենին տեղեկություններ այն մասին, թե որ գործող անձանց, ինչպիսի մեթոդների ու փաստաթղթերի մասին էին խոսում. պարզապես հավատացած էին, որ այդպիսի վրանգներ գոյություն ունեն:

Իմ խոսքերից չի բխում, որ նման վրանգ գոյություն ունի կամ չունի. ասածս պարզապես այն է, որ հաղորդակցության ուղիները չափազանց

սահմանափակ են, և մարդիկ իրենց գաղափարները կառուցում են որոշ պարկերացումների վրա՝ առանց դրանց իրականությունը հաստատելու: Մարդկանց խոսքը հիմնված է չափանիշների վրա, որոնց իսկությունը քննության չի ենթարկվել:

Նստակություն չկա նաև պաշտոնական շրջանակներում: Կան որոշ խնդիրներ, որոնց լուծման ճանապարհ չեն տեսնում.

Թուրքիան ակնկալում է, որ Նայասպանը պետք է պաշտոնապես ճանաչի իր սահմանները: Ես նույնիսկ չգիտեմ՝ արդյոք այդ խնդիրը պարզապես պարզվակ է Թուրքիայի համար, թե հայկական կողմի հակափաստարկներն են պարզվակ: Վերջ ի վերջո, սա գուր պեխնիկական խնդիր է, և պետք է գոյություն ունենա հստակ պատասխան:

Բոլորովին հասկանալի չէ՝ արդյոք Արևմտյան Նայասպանի մասին հիշատակումները կամ Արարապ լեռ որպես խորհրդանիշ օգտագործելը պետք է այդքան շար անհանգստացնի թուրքերին կամ արդյոք հայերը կկամենան փոխել իրենց մտպեցումները: Նաշվի առնելով մեր հասարակությունների բնույթը՝ այդ խնդիրը կրկին ու կրկին է առաջ գալու:

Գոյություն ունեն այլ ոլորտներ, որոնցում միանգամայն հնարավոր է առաջընթացի հասնել և այդ ուղղությամբ գործողությունների բացակայությունը կասկածի փակ է դնում երկու կողմերի անկեղծությունը.

Եթե Նայասպանում կարծում են, որ Թուրքիայի վարչապետի առաջարկի համաձայն հանձնաժողովի ստեղծումն անընդունելի է, քանի որ դա կնշանակեր, որ դուք ընդունում եք առկա կասկածները՝ ցեղասպանության իրողության վերաբերյալ, ուրեմն պետք է բանակցել հարցադրման ձևակերպման մասին, որպեսզի այն փոխադարձ ընդունելի դառնա կամ հանձնաժողովի ապագա անդամների ընտրության չափանիշներ առաջարկել: Այն փաստը, որ նման գործողություններ չեն կատարվում, նշանակում է, որ կողմերից և ոչ մեկը լուրջ չէ իր հայտարարված նպատակների կամ պայմանների առումով:

Իմ կարծիքով, անհրաժեշտ է, որ Թուրքիան առավելագույնս վերականգնի հայկական մշակութային արժեքները և ավելի շար իրավունքներ ու հնարավորություններ ընձեռի իր ազգությամբ հայ քաղաքացիներին: Ինձ համար հասկանալի չէ՝ ինչու դա չի արվում:

Տարցվածները նշել են, որ Ադրբայջանի փաճարի վերականգնումը դրական քայլ էր, որը ժողովուրդներին կմղի միմյանց նկատմամբ ավելի

հարգալից լինելու: Բոլոր հարցվածները նշել են, որ մշակութային կապերի խորացումը խիստ ցանկալի է:

Այժմ կրկին անդրադառնանք հարցման պատասխաններին, մի շարք խնդիրների վերաբերյալ արտահայտված կարծիքներին՝ մշակութային փոխանակումներից մինչև պատմության ընկալումները:

Բոլոր հարցվածների կարծիքով, քաղաքացիական հասարակության ոլորտում երկխոսությունն ու շփումները պետք է զարգանան, և պետք է կապեր ստեղծվեն մշակութային ոլորտում: Մյուս կողմից, ուշադրություն դարձնելով մշակութային և հասարակական ոլորտներում առկա զարգացումներին, կարող ենք նկատել, որ խորապես նախապատրաստված նախաձեռնությունների պակաս կա: Դրանցից շատերը կարճաժամկետ են կամ լավ չեն մշակված: Օրինակ՝ գոյություն ունեն համալսարանների միջև համագործակցության վերաբերյալ նախնական պայմանավորվածություններ, սակայն եղած երեք կամ չորս նման հայտարարագրությունների արդյունքը չի երևում: Ու եթե ամերիկացիները կամ եվրոպացիները չեն վճարում ու մեզ չեն խթանում, ապա մենք, կարծես, ինքնուրույն որևէ բան անելու փոքր ցանկություն ունենք:

Նարկանշական է, որ հարցմանը մասնակցած փարբեր հայացքների փեր թուրքերը նշել են, որ հայ-թուրքական սահմանի փակ լինելուց օգուտ են քաղում հիմնականում Վրաստանը, Իրանը և Ռուսաստանը: Շահողների շարքում նշվել են նաև.

- մաքսանենգները և թրաֆիկինգով զբաղվողները,
- Նայաստանում գոյություն ունեցող մենաշնորհները,
- այն ուժերը Թուրքիայում, որոնք դեմ են երկրի անդամակցությանը ԵՄ-ին,
- իմպերիալիստական տերությունները,
- ազգայնամուլները և շովինիստական պետությունները:

Պատասխանելով պատմությանը վերաբերող հարցերին՝ բոլոր թուրքերը նշել են, որ մինչև 19-րդ դարի վերջնամասը հայերն Օսմանյան կայսրության կարևորագույն և առավել ներդաշնակ ապրող համայնքներից էին: Թուրքերի մեծամասնության պատկերացմամբ 1915-ը մի գործընթացի գագաթնակետ էր: Օտար տերություններն, ինչպիսիք էին Ռուսաստանը կամ Ֆրանսիան, մինչ այդ խաղաղ ապրած հայերին սաղրանքների են ենթարկել, որպեսզի անկարգություններ և բռնություն տեղի ունենան: Նրանք հավատացած են, որ կայսրության քայքայման պայմաններում եղած քառսը հանգեցրեց արտակարգ միջոցների կիրառմանը. դա ողբերգական իրադարձություն էր, սակայն այն իրավիճակում անխուսափելի էր: Այդ վարկածը կասկածի ենթարկելու պատրաստակամությունը չնչին է: Եվ հաճախակի նշվում է, որ ուրիշները դրական են վերաբերվում Առաջին

աշխարհամարտի ընթացքում Անապոլիայում թուրքերի սպանություններին կամ Բալկաններում մահմեդականների նկատմամբ իրականացված էթնիկ զգույններին:

Առկա չափանիշները քիչ հնարավորություններ են թողնում՝ այլ պեսակները ընկալելու համար: Ներկաբար, թուրքերը կարծում են, որ այժմ ևս օտար տերություններն օգտագործում են հայերին (կամ էլ հայերն են օգտագործում օտար տերություններին) ի վնաս **Թուրքիայի**, իսկ հայերը կարծում են, որ **Թուրքիան** շարունակում է Նայասարանի նկատմամբ թշնամական քաղաքականություն վարել: Այդպիսով, մենք կանխապեսում ենք մի վաղ բան, և այն իրականություն է դառնում. որքան շատ ենք դրանում հավատացած լինում, այնքան շատ են մեր գործողությունները նպաստում, որ այն իրականություն դառնա:

Դժբախտաբար, երկու կողմերի ազգային ինքնությունները հիմնված են այնպիսի բաղադրիչների վրա, որ դրանք ծնունդ են վերանգի զգացում և ժողովուրդներին լարում միմյանց դեմ՝ ինչը դժվարացնում է բարելավման ընթացքի սկիզբը:

Անփոփում

Չլինելով պայմանաբաններ կամ պերական պաշտոնյաներ՝ մենք վիճաբանելու քիչ առիթներ ունենք: Մենք կարիք չունենք ամբողջ կյանքում կրկնելու այն, ինչ մեզ երբեմն ասել էին:

Վերջին տարիներին, անշուշտ, **Թուրքիայում տեղի են ունեցել բարեփոխումներ**՝ տարուների հաղթահարման առումով: Նասարական կարծիք ձևավորողները կարողացել են հարցականի տակ դնել պայմանության պաշտոնական վարկածը: Նակափաստարկներ բերելու համար հնարավորություններ են ստեղծվել, բայց դրանք դեռևս բավարար չեն:

Ես դրական եմ վերաբերվում այդ ոլորտում **Թուրքիայի ունեցած առաջընթացին**: Ես բավական քննադատաբար եմ տրամադրված որոշ ոլորտներում **Թուրքիայի** վարած քաղաքականությանը և բարձրաձայնել եմ դրա մասին՝ երբևէ հետապնդման չենթարկվելով: Եվ դեպի **Թուրքիայի** արևելք ճանապարհորդելիս՝ ես հասկանում եմ, որ դա հազվադեպ և արժեքավոր երևույթ է մեր տարածաշրջանում: Ու դա ամենակարևորն է:

Մեր երկու երկրներն էլ այժմ **ուժեղ անկայունություն** են վերապրում. առկա են խորը հասարակական և քաղաքական տարածայնություններ: Այդ պարճառով իրարեսական չէ կանխապեսել, որ քաղաքական կամք կցուցաբերվի և քաղաքական կապիտալը ռիսկի կենթարկվի՝ հարաբերություններում եղած սպառնալիքն փոխելու համար:

Անկեղծ ասած, **Թուրքիայում** այս խնդիրը հրատապ չի համարվում և օրակարգում առաջնային դիրք չի զբաղեցնում, այնպես որ շտապելու ցանկություն չի նկատվում: Եթե առաջընթաց նկատվի դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, կամ մուրենա ԵՄ-ին ան-

դամակցելու հնարավորությունը կամ, եթե Երևանում լինի մի վարչախումբ, որը հստակ կերպով գործի՝ հարաբերությունների կարգավորումը կհեշտանա:

Եզրափակելով, նշեմ. մենք պետք է առաջընթացի հասնենք **մարդկային հարաբերությունների** մակարդակում. դա կառավարությունների համար ավելի հեշտ կդարձնի իրենց քաղաքականության վերազնահատումը: Եթե մարդիկ այլևս չեն ենթարկվի ազգայնական քարոզչության ազդեցությանը, քաղաքական գործիչները ստիպված կլինեն այլ մոտեցումներ դրսևորել: Մեզ պետք է ձեռքազարկել որոշ առասպելներից ու ստերեոտիպներից, որոնք չափազանց շատ են երկու կողմում էլ: Եվ սա պետք է միաժամանակ երկու երկրներում փեղի ունենա՝ հաջողության հասնելու համար:

Սրեփան Գրիգորյան՝ Գլոբալիզացիայի և փարաժաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի վարչության նախագահ

Նայաստանում անցկացված հարցազրույցների և հարցումների վերլուծություն

Գլոբալիզացիայի և փարաժաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի և USAID-ի օժանդակությամբ իրականացված «Նայաստանի և Թուրքիայի վերլուծաբանների և հասարակական գործիչների համագործակցությունը՝ որպես միավորող գործոն հայ-թուրքական հարաբերություններում» նախագծի շրջանակներում, 2007թ. հոկտեմբերից մինչև 2008թ. հունվար ընկած ժամանակահատվածում անց են կացվել հարցումներ՝ Նայաստանի քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և փորձագետների հետ: Նարցաթերթը կազմված էր 32 հարցից, որոնք ներառել են թեմաների լայն շրջանակ՝ սկսած պարտությունից, վերջացրած հայ-թուրքական հարաբերությունների ներկայիս վիճակով:

Ես առիթներ եմ ունեցել գրուցելու թուրքերի հետ հայերի մասին, նաև հայերի հետ՝ Թուրքիայի մասին: Ինձ թվում է, որ երբ հայերը գրուցում են Թուրքիայի մասին հայիս հետ, նրանք ավելի ազատ են արտահայտվում, քան թուրքերը՝ հայիս հետ գրուցելով Ղայաստանի մասին: Ինձ թվում է, որ եթե թուրք լինեի, նրանք կասեին որոշ բաներ, որ ինձ՝ հայիս, չէին ասում՝ քաղաքավարությունից ելնելով: Խոսքն այժմ, իհարկե, մասնագետների մասին չէ, այլ հասարակ մարդկանց մասին: Երբեմն սակայն սրացվում է գրելու որոշ փարբեր, որոնք վկայում են, որ չգիտակցված մակարդակում էլ կան ընդհանուր շահեր: Մի բանի անգամ երևանյան սրճարաններում ներկա եմ գրելու այն ժամանակ, երբ հեռուստատեսությամբ ֆուտբոլային հանդիպումներ էին ցուցադրվում թուրքական թիմերի մասնակցությամբ: Ղայերից շարժերը թուրքերին էին երկրպագում: Երբ հեռաբերվել եմ, թե ինչո՞ւ, չէ որ թուրքերը մեզ թշնամի են, ցեղասպանություն է եղել, սրանդարտ պատասխանը հետևյալն էր. «Իսկ ո՞ւմ պետք է երկրպագենք, մի՞թե գերմանացիներին»: Ու դա այն դեպքում, երբ գերմանացիների նկատմամբ հայերի վերաբերմունքն ընդհանուր առմամբ չէզոք է. բացի այդ, որոշ դեպքերում գերմանացիների փոխարեն եղել են հյուսիս-հարավային կամ անգլիացիներ: Ի՞նչ է սա նշանակում: Ակնհայտորեն, մշակութային ընդհանրության գիտակցում: Վարձ են թուրքերը, թե լավը՝ «մերն» են, ճանաչելի են, մենք նրանց հասկանում ենք կամ կարծում ենք, որ հասկանում ենք, մերձավորներ են, որոնց կարելի է երկրպագել: Գերմանացիները կամ օրինակ շվեդները նույնպես կարող են լավը կամ վատը լինել, սակայն նրանք մեզանից հեռու են, չափազանց հեռու: Տեսնենք «Եվրասիայի» մրցույթը. թուրքերն արդեն որերորդ փարին քվեարկում են հայերի օգտին, դա մի՞թե ցուցանիչ չէ: Իսկապես, թուրքերը հայերին սովորա-

բար վերաբերվում են որպես իրենց աշխարհընկալման մեջ րեղ ունեցողների: Կարծում են, ճիշտ է այն կարծիքը, որ նրանք չգիտեն ցեղասպանության մասին: Թուրքիայի արևելյան շրջաններում մարդիկ բավական հանգիստ են դրա մասին գրուցելիս, նրանցից հաճախակի են լսել, որ մեկի փախն էր հայ, մյուսի պապը, ահա այսինչ վայրում հայերի փուն է եղել և այլն: Իսկ Սյրամբուլում մի անգամ գրույցի բռնվեցի մի երիտասարդ մափուցողուհու հետ, նա հեղափոխվեց, թե ով է նա: Իմանալով, որ հայ է, հարցրեց՝ արդյոք արդեն այցելել են սինագոգ: Նա լավ չէր պարկերացնում՝ ովքեր են հայերը, սակայն բարյացակամորեն էր փրամադրված: Փորձեց որոշ մշակութային ընկալում գործի դնել՝ հոգեհարազատ մեկի հետ գրուցելու համար: Նրա կարծիքով, հրեաները (ինքն ակնհայտորեն նկարի ուներ Սյրամբուլում բնակվող սեֆարդներին) և հայերը իրեն հոգեհարազատ են: Նա գրուցում էր ոչ թե հուլանդացու կամ մեքսիկացու, այլ իր սեփական աշխարհի մի ներկայացուցչի հետ: Ներսարար, ինձ թվում է, որ մեր մերձավորությունը և ընդհանուր շահերի առկայությունը կարող են գիտակցված չլինել, սակայն արտահայտվում են՝ հաճախակի ենթագիտակցաբար:

Իսկ ինչո՞ւ ենթագիտակցաբար: Կարծում են, որովհետև գիտակցական մակարդակում գոյություն ունի որոշակի մեկուսացում, եթե ոչ մերժում: Իսկապես, թուրքերի մոտ եղած այդպիսի մերժման հոգեբանական մեխանիզմը հասկանալի է. «հայերը պահանջում են ճանաչել ցեղասպանությունը, Թուրքիայից ինչ-որ բան են պահանջում, ինչը մենք չենք ցանկանում»: Նայերը ցանկանում են, որ Թուրքիան իրենց ինչ-որ բան գիջի: Ինչ պետք է գիջի՝ կարևոր չէ. փարածք, ազգային հպարտություն, պարմության մի մասնիկ՝ կարճ ասած, ինչ-որ բան: Անշուշտ, թուրքերի համար ավելի հարմար է հեռանալ, մեկուսանալ այդ սցենարից:

Ինձ բախար էր վիճակվել ներկա գտնվելու թուրքահայերի մասին առաջին ցուցահանդեսին, որը կազմակերպվել էր թուրք արվեստագետների կողմից. ցուցահանդեսում պարկերված էին 20-րդ դարասկզբի լուսանկարներ, որոնցում պարկերված էին Թուրքիայում եղած բազմաթիվ հայկական օջախներ՝ դպրոցներ, եկեղեցիներ, փներ, ակումբներ և այլն: Ցուցահանդեսն ինքնին խոսում էր: Ցեղասպանության մասին խոսելու կարիք այնքան չկար: Ցեղասպանությանը վերաբերող որևէ բան պարկերված չէր: Մակայն ցուցահանդեսի նմուշները հասկանալի էին դարձնում այն, որ Թուրքիայում եղել էր մեծ, հզոր, զարգացած և ճյուղավորված, թուրք հասարակությանը մշակութային առումով ինքնագրված հայկական համայնք: Պարզապես երբ փեսնում են, օրինակ, հարյուրերորդ դպրոցի կամ հիսուներորդ ակումբի լուսանկարը, ակնհայտ է դառնում, որ այսպեղ ապրել են ինչ-որ մարդիկ, որոնք այլևս չկան. «չիմանալը» արդեն դժվար է լինում: Ես ցուցահանդեսին ներկա էի բազմաթիվ թուրքերի հետ միասին: Նրանք ցնցված էին: Նրանք իմ գործընկերներն էին, մարդիկ, որոնք պարմություն

նը գիտեն գունն ինձանից ոչ պակաս: Նրանք մարդիկ էին, որոնք գիտեին, ինչ էր այն ժամանակ կատարվել, սակայն մի բան է պարզապես իմանալ և մի այլ բան է լուսանկարների վրա ամեն ինչ պարզ տեսնել: Կրկնեմ, որ ցեղասպանության մասին ոչ մի խոսք չէր ասվել:

Թուրք գործընկերներիցս մեկը պատմել էր սոցիոլոգիական հարցումների արդյունքների մասին, երբ հարցվողները պետք է արտահայտեին իրենց վերաբերմունքը փորձեր երկրների նկատմամբ: Նարցվածներից շատերը համարում էին, որ Նայաստանը մի մեծ տերություն է, որը լուրջ սպառնալիք է ներկայացնում Թուրքիայի համար՝ ունենալով նրանից ինչ-որ բան խելու մտադրություն:

Ի՞նչ անել, կա՞ որևէ ելք այս իրադրությունից: Ի՞նչ կարելի է անել, որպեսզի զարգանան հարաբերություններ, թույլ տվեք կրկնել, ոչ միայն պետությունների, այլև հասարակությունների միջև: Նասարակության ազդեցությունը քաղաքական գործիչների նկատմամբ զգալի է՝ անկախ նրանից, ֆորմալ է, թե ոչ ֆորմալ, արտահայտվում է ընկերությունների միջոցով, թե առօրյայում: Քաղաքական գործիչներն անում են այն, ինչ իրենց թույլ է տալիս անել հասարակությունը, և չեն անում այն, ինչն իրենց չի թույլատրվում անել: Եթե հասարակություններն առաջ շարժվեն (իսկ իմ կարծիքով, նրանք շարժվում են՝ թեկուզ դանդաղորեն), զարգանան միմյանց վերաբերյալ ընկալումները՝ անխուսափելիորեն կփոխվի նաև քաղաքական գործիչների և պետությունների վերաբերմունքը: Մա կարող է երկար գործընթաց լինել, բայց կարծում եմ, վաղ թե ուշ այդ ազդեցությունը կգործի:

Ինչն՞վ դրան կարող է նպաստել հասարակությունը, այսինքն՝ մեզանից յուրաքանչյուրը: Փորձել հնարավորինս վերափոխել հարաբերությունները՝ կոնֆրոնտացիայից դեպի փոխըմբռնում և փոխներթափանցում: «Չեմ ցանկանում իմանալ» դիրքորոշումից դեպի «ցանկանում եմ իմանալ»: Ժամանակակից հայը պետք է ցանկանա ճանաչել ժամանակակից թուրքին և հակառակը: Ժամանակակից թուրքը հասկանում է, որ մշակութային առումով հայը կարող է իրենը համարել Վանը, Ադթամարը կամ Էրզրումը: Դա նրան կարող է դուր չգալ, քանի որ նա չի ցանկանում մրաձել, «ճանաչել» հային, փորձել նրան հասկանալ: Սակայն եթե փորձ կատարվի վերափոխել չմասցության հարմարավետությունը դեպի ճանաչման փորձ, հնարավոր է գրնել այդ ճանաչման ոչ կոնֆրոնտացիոն մեխանիզմները: Ինչո՞ւ են Նայաստանում վաճառում պատմական քարտեզներ, որոնցում ժամանակակից Թուրքիայի տարածքի մի մասը (Արևելյան Թուրքիան կամ Արևմտյան Նայաստանը) պարկերված է պատմական հայկական տարածքների կազմում: Դա արվում է նույն պատճառով, որ Թուրքիայում հրատարակվում են Օսմանյան կայսրության պատմական քարտեզներ: Իսկապես, Վանը և Էրզրումը քաղաքներ են, որոնց անվանումները մեծ նշանակություն ունեն հայերի համար՝ նրանց մշակույթի և ինքնագիտակցության առումով: Նույն կերպ, ինչպես թուրքական ինքնա-

գիտակցության համար նշանակություն ունեն բազմաթիվ տեղանուններ, որոնք գտնվում են ժամանակակից Թուրքիայի տարածքից դուրս: Կամ ընդհակառակը, Նայաստանը լի է թյուրքական մշակույթի տարրերով ու որոշ տեղանուններ, երաժշտական տարրեր, կերակուրներ, ազգանուններ կապված են թյուրքական, երբեմն նաև Թուրքիայի, պատմության հետ:

Որպեսզի չվիճենք՝ ո՞ւմն է սազը կամ տոլման կամ ինչպես ենք անվանում այս կամ այն քաղաքը, ինչպես էին կոչվում հայկական քաղաքները նախքան ժամանակակից անվանումների ի հայտ գալը, պետք է կատարել ընդամենը մեկ քայլ. ոչ թե «կամ/կամ», այլ «և/և»: Փոխներթափանցումը որպես այդպիսին կարող է չեզոքացնել կոնֆրոնտացիան: Սակայն դրան հասնելը դժվար է, քանի որ մարդիկ հակված են գիտակցական մակարդակով մերժելու այդ փոխներթափանցումը: Ու այնուամենայնիվ, վերափոխումն անհրաժեշտություն է, քանի որ դրա այլընտրանքը տանում է դեպի փակուղի, որում հարմար զգալու համար պետք է «չիմանալ», որ հարևանները չեն կարող ընդհանրություններ չունենալ:

Իսկպես, ինձ համար Ստամբուլում գոյություն ունեն որոշ խորհրդանիշներ, վայրեր, անվանումներ, որոնք ժամանակակից թուրքին ոչինչ չեն ասում՝ գոնե այն համատեքստում, որն ինձ համար նշանակություն ունի: «Գու՛մ Գարու» անվանումը հայի համար մի բան է նշանակում, իսկ թուրքի համար՝ մի այլ բան: Ներո՞ւ ինչ: Մշակութային համատեքստերը կարող են տարբեր լինել: Ինձ համար այդպիսի վայրեր կարող են գոյություն ունենալ Ռոստոմում, Թբիլիսիում, Մարսելում, Ֆրեզնոյում, Մոսկվայում: Այդ քաղաքները կարևոր են հայոց պատմության համար, սակայն բոլոր ռուսները, ֆրանսիացիները կամ ամերիկացիները պարտավոր չեն իմանալ իրենց քաղաքների հայկական պատմությունը: Նրանք նաև սովորաբար չպիտի բարդությամբ լինեն այդ պատճառով, եթե իհարկե փոխհարաբերություններում բարդություններ չկան: Ինձ համար, օրինակ, Վիլյամ Սարոյանը մի համատեքստում կարող է հայ գրող լինել, իսկ մյուսում՝ ամերիկյան: Անրի Տրուայան կարող է ընկալվել որպես ռուս գրող, ֆրանսիացի գրող կամ էլ որպես հայ: Սա ուրնձգություն չէ, այլ մշակութային իմաստների փոխներթափանցում:

Ինձ թվում է, որ այսպեղ պետք է գործի դրվի մի մեխանիզմ, որը կիրառվում է փսիխոթերապիայում: Երբ ներոգ գոյություն ունի, այն բուժվում է ոչ թե չհիշարակելու, այլ ընդհակառակը՝ բացահայտելու և քննարկելու միջոցով: Եթե հարևանիդ հետ ուզում ես նորմալ հարաբերություններ ունենալ, երբեմն այցելել իրեն, ինքն էլ քեզ այցելի, ինչ-որ տարրական խնդիրներ լուծել, ուրեմն ժամանակ առ ժամանակ պետք է հնարավորություն գտնես երեկոյան զավաթի շուրջ միմյանց ճշմարտությունն ասելու համար. այլպես ոչ մի ցանկապատ չի օգնի: Ես ճիշտ չեմ համարում բազմաթիվ թուրք գործընկերների մտերցումը, որոնք ասում են, որ պետք չէ խոսել ցեղասպանության մասին, քանի որ դա վնասում է հարաբերությունների

հասարակարմանը: Կարծում եմ՝ ընդհակառակը: Կարծում եմ, որ հարաբերությունները կարգավորելու համար թուրքերը պետք է սովորեն հասկանալ հայերին՝ այլապես ոչինչ չի սրացվի: Նասկանալ հայերին՝ նշանակում է մասնավորապես հասկանալ նրանց զգացումները, հիշողությունները, էթնիկ դիսկուրսը, վերջապես սերերեոփիաները. այս բոլորը ուժ են՝ նաև քաղաքական առումով, քանի որ եթե մարդիկ որոշակի զգացումներ ունեն, ապա գործում են իրենց պարկերացումներին համապատասխան:

Իրենց հերթին, հայերը պետք է ճանաչեն այն թուրքիան, որն այդքան վախեցած է աշխարհասփյուռ հայությունից: Պարկերացրեք, որ Ֆրանսիան ինչ-որ բան ճանաչեց, Սլովենիան ճանաչեց, Լեհաստանը ճանաչեց, ոմանք էլ ինչ-որ պահանջներ են ներկայացնում: Եվ արդյունքում թուրքերը սկսում են ցեղասպանություն ընկալել ոչ թե որպես այն լուսանկարներում պարկերված ու հերազայում ընդմիջար հեռացած համաքաղաքացիների դաժանագույն ոչնչացում, այլ որպես մի դազանակ, որով հարվածում են իրենց գլխին, որպեսզի պարտադրեն իրենց կամքին հակառակ ինչ-որ քայլեր կատարել: Բայց դա դազանակ չէ. դա մեր ընդհանուր պարմությունն է, և իմ կարծիքով, պարզապես չկա այլ ճանապարհ, քան մեր պարմության սուր պահերը սրվերից հանելը, քան մեր գիրակցության ոլորտում մեզ բաժանող իրողությունները քննարկելը: Երբ այդ ամենը դուրս կհանենք, այդ ժամանակ պարմության, մշակույթի, իմաստների ընդհանրությունը՝ սկսած «Գալաթասարային» երկրպագելու հակումից մինչև հիշարակաժս ֆոտոցուցահանդեսները, անպայման կարտահայտվի քաղաքականության մեջ: Իսկ քանի դեռ թուրքիան Նայաստանի հերաբերությունները պետք է բարելավի միայն Եվրամիության դազանակի ներքո՝ այդ բարելավումն ամուր չի լինելու: Ասենք, վաղը սահմանը կրացեն, իսկ մյուս օրը կփակեն: Որպեսզի համագործակցությունն ամուր լինի, այն չպետք է լինի Անկարա-Փարիզ, Անկարա-Նյու Յորք, Անկարա-Մոսկվա մակարդակով: Թուրքերն ու հայերը պետք է սովորեն իրար հեր ուղղակիորեն շփվել՝ մեզ բաժանող բոլոր սուր խնդիրների մասին: Սա է մեր հիմնական միասնական շահը:

Տիմնական սկզբունքները՝ հաշտեցման հասնելու համար

Հաշտեցման հասնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ: Դրանց բազմազանությունն է հանգեցնում որոշ հակամարտությունների լուծման առանձնակի բարդությանը: Այնուամենայնիվ, չնայած գործոնների բազմազանությանը, հնարավոր է գտնել հակամարտությունների առաջացման ընդհանուր օրինաչափություններ: Նույն կերպ հնարավոր է գտնել ընդհանուր օրինաչափություններ՝ հաշտեցման հասնելու համար:

Այժմ կաշխատքն րացաբրել՝ ինչ է հաշտեցումը: Կնշեմ որոշ հիմնական բաղադրիչներ, որոնց վրա անհրաժեշտ է կենտրոնանալ, ինչպես նաև որոշ միջոցներ, որոնք կարող են կիրառվել՝ հաշտեցման հասնելու համար:

Նախ համառոտ կերպով ձևակերպենք՝ ինչ է հաշտեցումը.

- «Հաշտեցում» տերմինի իմաստը կարող է ձևակերպվել որպես տարբեր խմբերի կողմից միմյանց համար փոխադարձ կերպով ընդունելի լինելը (ըստ Շտրաուբի և Պերլմանի)
- Հաշտեցման հնարավոր է հասնել՝ փոխելով հոգեբանական տրամադրվածությունը «ուրիշների» նկատմամբ:
- Հաշտեցումը նշանակում է, որ գոհերը և հարձակվողները չեն համարում, որ ապագան անցյալով է պայմանավորվում:
- Սա նշանակում է, որ կողմերը միմյանց ընկալում են՝ որպես մարդկային էակներ, ընդունում են միմյանց և ակնկալում են կառուցողական փոխհամագործակցության հնարավորություն:

Հաշտեցման հասնելու համար կարևոր է հասկանալ զանգվածային սպանությունները վերապրածների և հարձակում գործածների հոգեբանական վիճակը: Նախ անդրադառնանք գոհերի հոգեբանությանը:

Զանգվածային սպանությունները հետևանք են բարդ հակամարտությունների, ինչին հաջորդում են ծանր կենսապայմաններ, հոգեբանական, սոցիալական, քաղաքական գործընթացներ: Զանգվածային սպանություններին նախորդող ընթացքում գոհերն աստիճանաբար «արժեզրկվում» են ու մարնանշվում որպես թշնամիներ: Զոհերի կարգավիճա-

կում հայտնվողները անապահով են զգում և այլ խմբերի ընկալում են որպես վրանգի աղբյուր: Նրանք հակված են նախկին բարեկամների, հարևանների ու այլոց կողմից լքված լինելու զգացմանը: Վերսկսվող հակամարտություններում գոհերը կարող են հարձակում գործել՝ վստահ լինելով, որ պետք է դիմեն ինքնապաշտպանության, բայց իրականում հարձակման մեղավորներ դառնալով: Այժմ անդրադառնանք հարձակվողների հոգեբանությանը:

Սովորաբար խումբը լարվում է արդեն իսկ «արժեզրկված» այլ խմբի դեմ կամ անընդունակ է լինում լուծել հակամարտությունը՝ բացասական զգացումների և մյուս խմբի նկատմամբ վստահության բացակայության պատճառով: Հարձակվողներն արդարացնում են իրենց գործողությունները՝ աստիճանաբար արժեզրկելով և բարոյական դաշտից հեռացնելով գոհերին: Ի վերջո, հնարավոր է, որ բարոյական չափանիշները գլխիվայր շրջվեն. գոհերին սպանելն արդեն ճշմարիտ գործ է համարվում: Հարձակվող խմբի անդամները համոզմունք են ձեռք բերում, որ իրենց գործն արդար է և «թշնամիներն» են պատրասխանարվություն կրում հակամարտության ու բռնության համար: Այսինքն, գոհերի նկատմամբ կարեկցանքը չեզոքանում է: Բռնություններ գործելուց հետո, հարձակվողները հակված են պնդել իրենց գործողությունների արդարացված լինելը և շարունակում են նվազեցնել գոհերի արժեքը և մեղադրել նրանց:

Գործնական հաշտեցումը հնարավոր է մի շարք միջնորդների մասնակցությամբ: Լավագույն արդյունքների հասնելու համար պետք է միաժամանակ ներգրավվեն սպորն նշված միջնորդները.

- ա. բնակչության ներկայացուցիչներ
- բ. հասարակական կազմակերպություններ
- գ. համայնքների և պետությունների առաջնորդներ
- դ. լրատվամիջոցներ

Նավանաբար նկատված կլիներ, որ առկա են թե՛ ներքևից դեպի վերև, թե՛ վերևից դեպի ներքև ուղղված գործընթացներ: Դրանք փոխադարձ լրացնող են: Միաժամանակ աշխատելով բնակչության ներկայացուցիչների հետ (ներքևից դեպի վերև) և հասնելով լրատվամիջոցների և/կամ պետությունների առաջնորդների կողմից օժանդակությանը (վերևից դեպի ներքև)՝ հնարավոր է առավելագույն արդյունքների հասնել: Մակայն առավել հաճախ՝ ինչպես հայ-թուրքական հարաբերությունների դեպքում, վերևից դեպի ներքև ուղղված գործընթացներ սկսելն առավել դժվար է: Այսպիսով, այսօրինակ նախաձեռնությունները, որոնցից մեկին այժմ մասնակցում ենք, հարկապես կարևոր են առանձակի բարդ հակամարտությ-

յունների դեպքում, քանի որ այս պահին հաշվեցման հասնելու համար այլընտրանքային միջոցները քիչ են:

Տաշվեցումը հնարավոր է փարբեր ոլորտներում միջամտելու միջոցով. հոգեբանական, քաղաքական, ինստիտուցիոնալ/կառուցվածքային և մշակութային: Այժմ սրան կանդիդատանամ:

Թուրքիայի և Տայաստանի դեպքում պարմության երկու փարբեր վարկածներ բարդացնում են հաշվեցման ընթացքը: Բռնությունների ճշմարիտ նկարագրումը՝ նրանց կրած փանջանքների ճանաչմամբ, օգտակար է ապաքինման համար: Բարդությունն այն է, որ գոհերն ու հարձակում գործածներն ունեն պարմության փարբեր վարկածներ. յուրաքանչյուրն իր գործն արդար է համարում: Թե՛ գոհերի, թե՛ հարձակվածների խումբը շեշտում է իր կրած վնասները կամ մյուս խմբի ներկայացված վրանգը: Երկու խմբերի կրած վնասները հասկանալի, անգամ եթե դրանք խիստ անհամաչափ են, հնարավոր է դարձնում ընդհանուր պարմության կամ ընդհանուր խմբային հիշողության զարգացումը: Իսկ երբ հակամարտող խմբերն ունեն իրար հակասող պարկերացումներ բռնության սկզբնաղբյուրների մասին, նրանց հակամարտությունն առավել հավանական է, որ կշարունակվի: Ավելին. խիստ հավանական է, որ թե՛ գոհերը և թե՛ հարձակվողները չափազանցնում են իրենց կրած վնասները՝ իրենց գործողություններն արդարացնելու համար:

Ընդհանուր խմբային հիշողության սկզբնավորմանը կարելի է հասնել պարմության, նաև բանակցությունների ընթացքի վերագնահատման ու վերահամարավորման միջոցով: Այս կարգի գործընթացների հաջողության օրինակներ կան: Այսպես, երկրորդ աշխարհամարտից հետո Ֆրանսիացի ու գերմանացի պարմաբանների հանձնաժողովը վերանայել է Ֆրանսիացիների ու գերմանացիների միջև «ժառանգական թշնամանքը» և գրել է պարմության նոր դասագրքեր: Թուրք-հայկական հաշվեցման հանձնաժողովի կողմից առաջարկվել է նմանաբան նախաձեռնություն՝ Թուրքիայի և Տայաստանի համար: Տանձնաժողովի նպատակները հրապարակվել էին «Terms of Reference» կոչվող փաստաթղթում: Ըստ այդ փաստաթղթի հաշվեցման հանձնաժողովը նպատակադրվել էր ամբաստանել փոխըմբռնումը և բարի կամքը թուրքերի և հայերի միջև, խրախուսել Տայաստանի և Թուրքիայի միջև կապերի բարելավումը, ամբաստանել թուրք և հայ քաղաքացիական հասարակությունների՝ ներառյալ Սփյուռքի համայնքների հաշվեցման պարբերակամությունը, օժանդակել հայ և թուրք հասարակությունների միջև հարաբերություններին, երկխոսությանն ու համագործակցությանը՝ հաշվեցման անհրաժեշտության

ընկալում ձևավորելու և գործնական օգուրների հասնելու համար: Ցավոք, այդ պարամական հնարավորությունը բաց է թողնվել:

Ապաքինումը նույնպես հաշտեցման կարևոր բաղադրիչ է: Ապաքինումն անձին ավելի ուժեղ է դարձնում, նվազեցնում է վրանգի զգացումը, նպաստում է կարեկցանքի զգացմանը, առաջնորդում է դեպի «այլ» խմբի դրական ընկալում: Ընդհանուր առմամբ, ապաքինումը նպաստում է ավելի լավ ապագայի պատկեր կերտելուն: Ապաքինման գործընթացին խանգարելն ուժեղացնում է «ընտրված տրավմայի» զգացումը: Դրա հատկանիշները կարելի է նկատել թե՛ հայկական, թե՛ թուրքական հասարակություններում. Նայաստանում դա ցեղասպանության շուրջ հոեպորությունն է, իսկ Թուրքիայում՝ «Սևրի պարանոյան»:

Նամայնքների միջև հաշտեցման կարևորագույն բաղադրիչ են հանդիսանում կապերը: Այսպես շեշտվում է համայնքների միջև կապերի կարևորությունը՝ նախապաշարումներն ու թշնամանքը հաղթահարելու համար: Փոխհամագործակցությունը հնարավոր է դարձնում դրական վերաբերմունքը այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների նկատմամբ, ավելացնում է հաշտվելու պարաստականությունը, ինչպես նաև նպաստում է թշնամանքի սկզբնաղբյուրի մասին ավելի լավ պատկերացում կազմելուն և հերացայում հանուն ավելի լավ ապագայի միասին աշխատելու պարաստականությամբ:

Նամայնքների միջև՝ փոխհամագործակցությանը նպաստելու օրինակներ են երկխոսության հնարավորություն ստեղծող խմբերը: Այսպես կրկին օրինակ բերեմ Եվրոպայից. հայտնի է, որ «Աժուխի և պողպատի եվրոպական միավորման» հիմնադրումից հետո գերմանացիների ու ֆրանսիացիների միջև կապերը բարելավվեցին: Թուրքիայի և Նայաստանի դեպքում բացակայում է փոխհամագործակցությունը, իսկ մշակութային ոլորտում համագործակցությունը խիստ սահմանափակ է: Թուրքիայի և Նայաստանի հասարակությունները չեն կարողանում օգուրներ քաղել փոխհամագործակցության բերած հետևանքներից:

Ես փորձ կատարեցի թվարկել հաշտեցման ընդհանուր սկզբունքներից մի քանիսը և դրան հասնելուն նպաստող որոշ միջոցներ: Դժբախտաբար, ներկայումս Նայաստանի և Թուրքիայի պարագայում հաշտեցման հասնելու միջոցները՝ հատկապես վերևից դեպի ներքև ուղղվածները, խիստ սահմանափակ են: Ներևաբար, այսօրվա կոնֆերանսի նման միջոցառումները կարևորագույն քայլեր են՝ ուղղված դեպի ապագա:

Քննարկում գեկույցների շուրջ

Դավիթ Նովհաննիսյան (ԵՊՏ-Զաղաքակրթության և մշակութային հետազոտությունների կենտրոնի տնօրեն)։

Ռուսանդայի և Կիպրոսի ցեղասպանությունները կամ դեպքերը, որոնք առաջացրել են նահապետի հոգեբանական տրավմա, նոր են տեղի ունեցել կամ համեմատաբար նոր: Նայոց Յեղասպանության խնդիրը բոլորովին այլ է: Այստեղ հիմնական հարցը՝ որպես մեր հիշողության մեջ պահպանված, կորցրած օջախի, կորցրած հայրենիքի հիշողությունն է: Դա այն կորուսյալ դրախտի միֆոլոգեմն է, որի մասին ես այսօր արդեն ասացի: Նարցը, ինձ թվում է, հիմնականում այստեղ ուղղված է ոչ թե մեր հասարակությանը, չնայած մեր հասարակության մեջ էլ մենք ունենք լուրջ տարմուներ, որոնք պետք է կոտրենք և փորձում ենք դա անել, այլ այսօր Յեղասպանության խնդիրը հիմնականում թուրք հասարակության խնդիրն է դառնում, որովհետև այն քննարկումները, որոնք ոչ շատ վաղուց են սկսվել և բավականին ակտիվ այսօր ծավալվում են՝ դրանք բացահայտում են թուրք հասարակության կողմից Յեղասպանության հարցի վերաբերյալ իրենց վերաբերմունքի ճշտման խնդիրը: Սա չափազանց կարևոր նոր երանգ է, որը, ինձ թվում է, բավականին հեռացնում է այդ հոգեբանական տրավմայի հետ կապված խնդիրներից: Կրկին ուզում եմ կրկնել, անհնար է հրաժարվել անցյալից: Կարելի է միայն գնահատականների մեջ համաձայնության գալ: Անցյալը այդ դեպքում դառնում է իրական հենարան ապագայի համար: Պերությունները կարող են նորմալացնեն իրենց հարաբերությունները, պետությունները կարող են զարգացնել իրենց հարաբերությունները, բայց հասարակությունների, ժողովուրդների միջև այդ խնդիրները մնում են, ուստի չափազանց կարևոր է համաձայնության գալ: Երբ որ մեզ առաջարկեցին հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ դառնալ, առաջացավ այսպիսի խնդիր. մեզ առաջարկեցին, որպեսզի մենք դա անվանենք ոչ միայն “recouncilation”, այլ “truth and recouncilation”, այսինքն՝ «ճշմարտության և հաշտեցման հանձնաժողով»: Երբ պայմանությունը քաղաքականացվում է, անշուշտ փաստը կարող է մեկնաբանվել տարբեր կերպով: Եթե ռեալ պայմանական իրադարձությունները մեկնաբանելու միջոցով քաղաքական կամ գաղափարական հիմքեր ես սրելծում, սա արդեն ուրիշ հարց է. սա պայմանություն չէ, հարկապես մեզ համար, որովհետև մենք բոլորս ունենք մեր ընտանեկան պայմանությունները՝ կապված Յեղասպանության հետ, իսկ դա ճշմարտություն է, որը հիմնավորման, քննարկման, հավաստիացման կարիք չունի: Դա ճշմարտություն է, դա եղել է, և մենք պետք է դրա հետ կապված որոշումներ կայացնենք, և այդ որոշումները կապված են մեր հարևան երկրի հետ: Նիմա ուզում ենք նորմալացնել մեր հարաբերությունները: Եթե պետությունները

նորմալացնում են, դա հոյակապ հիմք է, որպեսզի հասարակությունները նույնպես նորմալացնեն:

Սփռված Գրիգորյան.

Նախ ուզում եմ ասել, որ գոյություն ունեցող կարծրաքիպերը թուլանում են հենց այսպիսի կոնֆերանսների շնորհիվ: Այսօր Նայասրանում արդեն ճանաչում և ջերմ ընդունում են Նիգար Գոկսելին, ինչը կարծրաքիպերի թուլացման օրինակ է: Այսօր մեր կոնֆերանսի ընթացքում մենք ականատես եղանք այն բանի, որ երկու թուրք վերլուծաբաններ բանավիճում էին իրար հետ: Նայ հասարակությունում կա կարծրաքիպ, որ թուրքերը շար միասնական են, թուրքերի մեջ այլակարծություն չկա, և նրանք միասնական պայքարում են բոլորի դեմ: Ես ուզում եմ նորից անդրադառնալ այն հարցերին, որոնք բարձրացրեց Ջեմ Տոկերը իր ելույթում: Ես ցավում եմ, որ մենք Նայասրանում քիչ ենք խոսում ժողովրդավարության մասին, քանի որ առանց անկախ գործող հասարակական կազմակերպությունների, անկախ ԶԼՄ-ների և ժողովրդավարության մյուս բաղադրիչների դժվար է ակնկալել առաջընթաց ոչ միայն Թուրքիայի հետ հարաբերություններում, այլ նաև այլ հարցերում: Մենք Նայասրանում ունենք շար խնդիրներ, բայց գլխավորն այն է, որ այսօր հասարակության ներսում փրորող փրամադրությունները, այդ թվում և հայ-թուրքական կոնֆրեպարով, րեդ չեն գտնում իշխանության ներսում: Ազգային Ժողովում 131 պարզամավորից ունենք 7 ընդդիմադիր պարզամավոր, ինչը կազմում է այդ թվի ընդամենը 5%: Փողոցներում ժողովրդի 75% քննադատում է Կառավարությանը, լավ է, որ քննադատում են, բայց այդ 75% ձայնը չկա իշխանության ներսում: Կատարված հարցումներում մենք ընդգրկեցինք հասարակական կազմակերպությունների լայն սպեկտր և սրացանք ինչ-որ րեդ անսպասելի արդյունքներ: Նասարակական կարծիքը փոխվում է և ուղղված է դեպի հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների բարեկամուր: Բայց արդյո՞ք մենք րեսնում ենք այդ փոփոխությունների արձագանքը: Պետք է րեսնեինք ընտրությունների միջոցով ձևավորված Ազգային Ժողովում, ինչն էլ կազդեր Կառավարության որոշումների վրա: Բայց Նայասրանում այդպիսի մեխանիզմ չկա. ընտրությունները անցնում են լուրջ խախտումներով, և այն փրամադրությունները, որոնք այսօր փրորում են հասարակությունում, ի վերջո չեն պսակվում որոշումներով: Այսպիսի քննարկումներով, այս համագործակցությամբ մենք փորձում ենք նաև ազդել Կառավարության դիրքորոշման վրա՝ ասելով, որ առկա փոփոխությունները պետք է իրականացնել կառավարության ծրագրերով:

Տարց դահլիճից (Ռուս-հայկական համալսարանի ուսանող).

Պարոն Տոկերը առաջին ելույթում խոսեց ինդեքսների նմանության մասին և ասաց, որ թե՛ Նայասրանը, թե՛ Թուրքիան հիբրիդային ժողովրդավարությունով երկրներ են, բայց վերջում ասաց, որ Թուրքիան պետք է

օգնի Նայաստանին՝ արևմտյան ուղին որդեգրելու, ժողովրդավարությունը զարգացնելու համար: Պարոն Տոկեր, մի հիբրիդ ժողովրդավարը ինչպե՞ս է օգնելու մյուս հիբրիդ ժողովրդավարին: Միգուցե սուպերհիբրիդ ենք պրանալու:

Ջեմ Տոկերի պարասխանը (*Թուրքիայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ*).

Ես երբևէ չեմ ասել, որ Թուրքիան պետք է օգնի Նայաստանին. մենք միևնույն նավակի մեջ ենք, մենք միանման խնդիրներ ունենք, սա էր իմ ասածը: Իմ առաջարկն էր ուսումնասիրել այն երկրները, որոնց վիճակը նման էր Թուրքիայի վիճակին կամ ավելի վատ էր և որոնք մեզ հետ նույն ճամբարում էին մինչ «սառը պարերագմի» ավարտը, նաև նրանց, որոնք ձեզ հետ էին նույն ճամբարում՝ կոմունիստական բոլկում և շրջվեցին դեպի Արևմուտք և ընդունեցին Արևմտյան իդեալները՝ առաջնորդվելով այնպիսի սկզբունքներով, ինչպիսիք են, օրինակ, Կուպենհագենյան չափանիշները: Չափանիշները, որոնք շեշտը դնում են հիմնական քաղաքացիական իրավունքների և ազատությունների վրա, մշակութային փարբերությունների հետ կապ չունեն: Ոմանք ինչ-որ բան ճիշտ են անում, Նայաստանն ու Թուրքիան ինչ-որ բաներ սխալ են անում. սա էր իմ ասածը: Մենք մեր ուժերն ու ժամանակն ենք ծախսում՝ այսօրինակ զգացմունքային խնդիրների քննարկումների վրա: Մեր փողը, եռանդը, ժամանակը, մարդկային և մտավոր պոտենցիալը պետք է օգտագործենք մեր քաղաքացիների կյանքը բարելավելու համար: Այս է իմ առաջարկը:

Տարց դահլիճից (*Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան ուսանող*).

Պարոն Բաթու, Դուք խոսեցիք հարձակվողների և գոհերի հոգեբանության մասին: Կարծում եմ, շատ թուրքեր քիչ թե շատ րեդյակ են ցեղասպանության մասին և նրանցից շատերը գուցե հեղափոխվել են դրանով: Ինչպիսի՞ն է թուրքերի ներկայիս սերնդի հոգեբանությունը, արդյո՞ք նրանք պարասխանավորություն են գգում բազմաթիվ փարիներ առաջ կարարվածի համար: Ինչպիսի՞ն է ընդհանրապես նրանց կարծիքը:

Արդա Բաթուի պարասխանը.

Ձեր հարցը թուրքերի ներկայիս սերնդի մասի՞ն էր:

Ուսանող.

Այո:

Արդա Բաթուի պարասխանը.

Դժբախտաբար, Թուրքիան այժմ փառասպում է ազգայնականության նոր ալիքից. նույնը նկատվելի է նաև Եվրոպայում և ողջ աշխարհում: Անշուշտ, դա խոչընդոտում է Նայաստանի դրական կերպարի զարգացմանը: Ավելին, նոր սերունդը լսում է միայն ձեր Սփյուռքի ասածները: Ու իրենք Նայաստանն ընկալում են ագրեսիվորեն և նախապայմաններով: Ցավոք, ներկայիս սերնդի դեպքում ներկայիս վիճակն այդպիսին է:

Տարց դահլիճից (*Երևանի Պետական համալսարանի ուսանող*).

Ձեզանից շարերն ասացին, որ թուրքերը տեղյակ չեն ցեղասպանության մասին: Ուրեմն, ի՞նչ է ձեռնարկվում նրանց, ինչպես նաև Թուրքիայի հայկական համայնքին՝ տեղեկացնելու համար: Այնպեղ բնակվող հասարակ հայերը, նրանց երիտասարդ սերունդը արդյո՞ք տեղյակ են ցեղասպանության մասին այնպես, ինչպես մենք ենք տեղյակ:

Արդա Բաթուի պատասխանը.

Ես կարծում եմ, որ նաև մեր այսօրվա կոնֆերանսն է ցույց տալիս, որ նախաձեռնությունները խիստ սահմանափակ են: Եվ այս պահին միայն մարդկանց մի փոքր շրջանակ կա, որ բարեխղճորեն է վերաբերվում և լավ նախաձեռնություններ է առաջ քաշում: Եթե վերցնենք որևէ հասարակ անձնավորության, հասարակ թուրքի, չգիտեմ, արդյոք սա իրականություն է նաև հայերի դեպքում, սակայն թուրքերի շրջանում առկա է տրոհվածություն և թյուրընկալում՝ այս խնդրի վերաբերյալ: Այդ պատճառով զեկույցիս ընթացքում նշեցի, որ այսպիսի կոնֆերանսները շար կարևոր են: Նկատի ունեմ, որ իդեալական կլիներ, եթե մեր քաղաքական առաջնորդները սա անեին, բայց առայժմ, ցավոք, մենք կախված ենք այսօրինակ հովանավորյալ նախաձեռնություններից, հասարակական կազմակերպությունների գործունեությունից՝ բնակչությանը որոշ չափով տեղեկացնելու համար: Յավոք, այդ ամենը դեռևս խիստ սահմանափակ է:

Տարց դահլիճից (*Երևանի Վ.Բոլոտովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանող*).

Մենք՝ երիտասարդներս, ի՞նչ կարող ենք անել՝ թուրքերի հետ համագործակցելու համար:

Արդա Բաթուի պատասխանը.

Կասեմ նույնը, ինչ ասում եմ ուսանողներին. օգտագործեք գլոբալիզացիայի ընձեռած որոշ հնարավորություններ: Դրանցից մեկն է ինտերնետը: Կապեր ստեղծեք մարդկանց հետ, մասնակցեք ֆորումների: Դրանից փոքր-ինչ ավելի բարձր մակարդակով՝ կապվեք միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների տեղական ներկայացուցիչների հետ: Մասնակցեք միջազգային ծրագրերի: Դրա միջոցով, կարծում եմ, հնարավոր է հասնել համագործակցության ավելի բարձր մակարդակի. բայց ցավոք, դա սահմանափակ կլինի, ստորին մակարդակի վրա:

Վահան Նունանյան (*Նայաստանի պետական Ճարտարագիտական համալսարանի ուսանող*).

Ես ուզում էի փոքր կարծիք հայտնել: Շատ ուրախ եմ, որ մասնակցեցի այս կոնֆերանսին, ես իսկապես ազարվեցի ինչ-որ կարծրարիակերից: Օրինակ՝ ես մինչև այժմ թուրք չեմ տեսել և չեմ շփվել թուրքի հետ: Ինձ մոտ կա թուրքի ձևավորված պատկեր. բեղերով, սև, բիրտ ու կոպիտ: Իրոք, շարերի մոտ է այդպիսի պատկերացում: Եթե ասես մի թուրք նկարագրեք, հաստատ այդպես կնկարագրեն: Ես կարծում եմ, որ այսպիսի

շփումները շար կարևոր են, որպեսզի մենք ճանաչենք իրար, րեսներք, թե ինչպիսին ենք մենք: Կուգեի, որ նման ծրագրեր՝ հարկապես երիտասարդության շրջանում, շար անցկացվեն: Ինձ թվում է, որ մեր ավագ սերունդը չի հասնի նրան, որ այս հարաբերությունները կարգավորվեն, բայց երիտասարդ սերունդը ի վիճակի է փանել երկու երկրները դեպի Եվրոպա: Երիտասարդները կարող են այդ հաշտեցմանը հասնել: Ես ցանկանում եմ, որ մի օր՝ որպես պարմական հաշտեցման արդյունք, Նայասրանն ու Թուրքիան Եվրամիության անդամ դառնան: Այսինքն՝ Նայասրանը օգնի Թուրքիային և Թուրքիան օգնի Նայասրանին: Շնորհակալություն:

Վերոնիկա Դանիելյանց (*Ռուս-հայկական համալսարանի ուսանող*).

Կոնֆերանսի սկզբում պարոն Կարապետյանն ասաց, որ գոյություն ունի հայ-թուրքական օնլայն հանդես: Կցանկանայի իմանալ, ինչպե՛ս կարող ենք զարգացնել այդպիսի կապերը հայերի և թուրքերի երիտասարդ սերնդի միջև:

Վազգեն Կարապետյանի պատասխանը (*«Եվրասիա Նամագործակցություն» Նյունադրանի փարաժաշտանային ծրագրերի համակարգող*).

Տվյալ պահին՝ այս վերջին մեկ-երկու փարիների ընթացքում, «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամը իրականացնում է մի նախաձեռնություն, որը հենց ուղղված է նմանափայ հայ-թուրքական ծրագրերի իրականացմանը: Եվ այդ նախաձեռնության շրջանակներում մենք ժամանակ առ ժամանակ ֆինանսավորում ենք գրանտային ծրագրեր, որոնց թվում կա նաև երիտասարդական շփումների, այդ թվում նաև ամսագրի թողարկման ծրագիր, և այլն: Ցավոք, մեր միջոցները շար չեն, և մենք չենք կարող բոլոր ցանկացող հայկական և թուրքական համագործակցությունը զարգացնող կազմակերպությունների համար այդ աջակցությունը փրամադրել, բայց անում ենք այն, ինչ-որ մեր միջոցների շրջանակներում է:

Արդա Բարո.

Մեկ անգամ էլ անդրադառնամ այս թեմային: Նամալսարանում ուսանողներիս խորհուրդ եմ փայխ գործել սպորին մակարդակի վրա՝ օգրագործելով գլոբալիզացիայի ընձեռած որոշ հնարավորություններ: Որո՞նք են դրանք: Դա ինտերնետն է, կապվեք մարդկանց հետ: Մեկ մակարդակ բարձր՝ կապվեք միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների րեդական ներկայացուցիչների հետ: Մասնակցեք միջազգային ծրագրերի: Դրա միջոցով, կարծում եմ, հնարավոր է հասնել համագործակցության ավելի բարձր մակարդակի. բայց ցավոք, դա կլինի սպորին մակարդակի վրա:

Տարց դահլիճից (Երևանի Վ.Բոյունովի անվան պետական լեզվաբանական համալսարան ուսանող)։

Այս ամենից հետո ինձ մտք հարց առաջացավ: Կցանկանայի իմանալ, ինչ կարծիքներ ունեն մարդիկ, որոնց այսպեղ տեսա, ովքեր փորձառու են և ունեն գիտելիքներ: Ի՞նչ կառաջարկեիք երիտասարդներին անել հենց հիմա: Ինչպիսի՞ գործողություններ կարող ենք սկսել՝ թեկուզ այս կոնֆերանսից ոգևորվելով: Պարզապես կարծիքներ սրա մասին:

Տիգրան Մկրտչյան (Եվրոպական Կայունության Նախաձեռնության վերլուծաբան)։

Մի փոքր կմեկնաբանեմ պարոն Բաթուի ասածը՝ մեկ պարմություն ունենալու վերաբերյալ, ու միգուցե իմ կարծիքում կպարունակվի նաև մի փոքրիկ ակնարկ՝ պատասխանի վերաբերյալ: Նախ և առաջ, մեկ պարմություն ունենալու մասին. իհարկե, մտք ապագայում դրան չենք հասնի, սակայն կարելի է հուսալ, որ միևնույն է, ունակ կլինենք շփվել մեկ շրջանակում, ինչք տեսնում ենք Նայաստանի և Թուրքիայի գիտական շրջանակներում: Մենք երկու պարմություն ունենք, գուցե պարմությունների բազմություն, որոնք չեն համընկնում: Այսինքն՝ նրանք երկու տարբեր աշխարհներից են խոսում: Մեկում տեղ չկա մյուսի համար: Այդպիսով, շար կարևոր է ընդհանուր գրույց վարել՝ անգամ վիճելով, չհամաձայնվելով. սակայն չբացառել դա: Եվ որպես գործնական քայլ՝ ես կառաջարկեի որոշ փոքր ընդհանուր նախագծերի իրականացում: Վերջերս, և ես սրա մասին երեկ արդեն ասել եմ պարոն Բաթուին, տեսել եմ մի հայկական պարմավերագրական կինոնկար: Այն Օսմանյան կայսրությունում ծառայած հայերի մասին էր՝ քաղաքացիական ծառայությունում և բանակում: Կինոնկարը նախաձեռնվել է հայերի կողմից և արվել հայկական ռեսուրսներով: Ինչո՞ւ չկազմակերպել նմանատիպ հայ-թուրքական համատեղ նախագիծ, հարկապես քանի որ այստեղ հակասություն չկա: Ինչու դա չգարգացնել, դա կարող է գործնական քայլ լինել: Թող երիտասարդ պարմաբանները դա անեն, ինչո՞ւ ոչ: Ես պատրաստ եմ՝ որպես կամավոր:

Նիգար Գուկսել (վերլուծաբան, Եվրոպական Կայունության Նախաձեռնություն, Turkish Policy Quarterly ամսագրի խմբագիր, Սրամբուլ, Թուրքիա)։

Երբ վերջին անգամ այցելել էի «Ակոս»-ի խմբագրություն՝ հարցազրույցի նպատակով, հանդիպել էի մի քանի երիտասարդների, որոնք աշխատում էին հայ-թուրքական օնլայն նախաձեռնության վրա և շար առաջադեմ էին թվում: Եթե ինձ կրպք ձեր էլեկտրոնային փոստի հասցենները, եթե հետաքրքրված եք, կփորձեմ ձեր ու նրանց միջև կապ ստեղծել: Որքան հասկացա, նրանք ուզում էին հայ երիտասարդների հետ համատեղ մի աշխույժ օնլայն նախագիծ իրականացնել, նաև փորձել հանդիպել:

Տարց դահլիճից (*Երևանի Պետական համալսարանի ուսանող*).

Կուզեի հարցս ուղղել բոլոր թուրք հյուրերին. հնարավո՞ր է, որ այս կոնֆերանսից հետո, վերադառնալով Թուրքիա, որոշ բարդություններ ունենաք:

Նիզար Գոկսելի պատասխանը.

Ասեմ իմ մասին. արդեն վեցերորդ անգամ եմ գալիս այստեղ, ազա-
պորեն արքահայրվել եմ ու որևէ խնդիր չեմ ունեցել: Ջեմը ասում է այն,
ինչ ասաց այստեղ նաև Թուրքիայում և խնդիրներ չեն առաջացել: Չեմ
կարծում, որ բարդություններ կլինեն:

Ալեքսանդր Իսկանդարյան.

Քանի որ պարոն Արդա Բաթուն պարմեց՝ ինչ է նա ասում իր ուսա-
նողներին, իսկ ես դա շար կարևոր եմ համարում, ես էլ կպարմեմ՝ ինչ եմ
ասում իմ ուսանողներին: Այստեղ կան բազմաթիվ երիտասարդներ, որոնք
հարցեր են փալիս և որոշակի կարծիք են ձևավորում: Ահա մի երիտա-
սարդ ասաց, որ նախկինում թուրքերի չէր հանդիպել և կարծում էր, որ
նրանք պետք է ունենան բեղ, մորուք և արյունով լցված աչքեր: Իսկ հիմա
փեսավ թուրքերի ու պարզեց, որ թուրքերը այնքան լավն են՝ սափրված և
բարեհամբույր: Ես միշտ ուսանողներիս ասում եմ, որ այն պատկերացում-
ներին, որ բոլոր թուրքերը չար են, բոլոր հայերը խորամանկ են և բոլոր
ռուսները հարբեցող են՝ հակադրություն չի հանդիսանում այն, որ բոլոր
հայերը միամիտ են, բոլոր թուրքերը բարի են, իսկ բոլոր ռուսները՝ ժուժ-
կալ: Թուրքերը փարբեր են, Թուրքիայում, չգիտեմ կան բեղավորներ թե
ոչ, բայց ազգայնականներ կան, և դա նորմալ է: Թուրքիայում գոյություն
ունի ֆունդամենտալիզմ, և դա նորմալ է: Թուրքիայում կան աջակողմյա
հայացքների փեր մարդիկ, և դա նորմալ է: Կան այնպիսիք, ովքեր Նայաս-
փանի մասին լսել անգամ չեն ցանկանում, դա ևս թուրքական իրականու-
թյան մի մասն է: Ու մենք էլ եկեք իրենց չխաբենք. Նայասփանում էլ կան ու
կլինեն մորուքավորներ, կլինեն դաշնակներ, կլինեն մարդիկ, որոնք չեն
ճանաչելու Թուրքիայի գոյության իրավունքը, կլինեն մարդիկ, որոնք ասե-
լու են, որ սահմանը բացել պետք չէ, ինչպես նաև նրանք, ովքեր ասում են,
որ երբ թուրքերը ծնկաչոք կգան մեզ մոտ՝ այն ժամանակ կփետենք, նե-
րենք նրանց, թե ոչ: Սա իրականության մի մասն է: Մեր երկրները ժո-
ղովրդավարական են, մարդիկ իրենց կարծիքներն արքահայրելու իրա-
վունք ունեն: Ես թուրքերեն վար եմ կարդում: Բայց Նայասփանում կան
այնպիսի թերթեր, ինչպիսիք են «Չորրորդ Իշխանությունը» և «Նայոց Աշ-
խարհը», որոնք կարող են փարբեր դիրքորոշումներ ունենալ Թուրքիայի
նկատմամբ: Նայերը փարբեր են, և որպեսզի թուրքերը գործ ունենան հա-
յերի հետ, պետք է հասկանան, որ այո, գոյություն ունի հայկական
Սփյուռք: Սփյուռքում սովորաբար ավելի արմատական փրամադրություն-
ներ են լինում, քան նրանց բնօրրաններում: Նյու Յորքի հրեական հա-
մայնքն ավելի արմատական է, քան իսրայելցիները, իսկ Գերմանիայում

քղերն ավելի արմարական են, քան Քրդստանում: Թուրքերն էլ են փարբեր: Թուրքերը, որոնք եկել են այստեղ մրահոզված են հայ-թուրքական հարաբերություններով, իսկ թուրքերի մեծամասնությունն այդ առումով փարբերվում է, և դա նորմալ է: Թե՛ Թուրքիայի, թե՛ Նայաստանի հասարակությունները բազմաշերտ են, փարբեր են, և այսպիսի հարցերի, ինչպես օրինակ՝ ի՞նչ է կարծում թուրք երիտասարդությունը, կարող եմ ասել. փարբեր բաներ է կարծում, ինչպես և հայ երիտասարդությունն է փարբեր բաներ կարծում: Այ, այստեղ եկած հայ երիտասարդները մի բան են մտածում, իսկ ուրիշ տեղեր գնացող հայ երիտասարդներն՝ ուրիշ բան: Թուրքերը ևս նման վիճակում են գտնվում: Ուրեմն, որպեսզի հասնենք փոխըմբռնման, չպիտի հասկանանք՝ թուրքերը լավն են, թե վատ, այլ պետք է հասկանանք, որ թուրքերը բարդ են, փարբեր են. Եթե սա հասկանանք՝ ի վերջո փոխըմբռնման կհասնենք նույնիսկ ազգայնականի հետ, նույնիսկ կրոնական ֆունդամենտալիստի հետ՝ պարզապես հարգելով մեզանից փարբերվելու իր իրավունքը:

Տարց դահլիճից (Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան ուսանող).

Այսօր շատ խոսվեց Թուրքիայի և Նայաստանի միջև փարբեր կապերի մասին՝ քաղաքական, գիտական և այլն: Եվ խոսվեց թուրքական քաղաքական կուսակցությունների մասին, որոնց մասին ես չեի իմացել: Նայաստանում կան կուսակցություններ, որոնց գաղափարախոսությունը նման է այդ թուրքական կուսակցությունների գաղափարախոսությանը: Ուզում եմ ասել, միգուցե հնարավոր է կապեր ստեղծել նմանապիպ թուրքական և հայկական կուսակցությունների միջև, որոնք միանման գաղափարախոսություններ ունեն: Շնորհակալություն:

Չեմ Տոկերի պատասխանը.

Այո, դա հնարավոր է, սակայն պետք է նաև անդրադառնամ Ա. Իսկանդարյանի հնչեցրած նկատառումներին: Վստահեցնում եմ, իմ այս մեկնաբանության նյութը փաստ է: Ինչպես ասացի, սովորական թուրքերի համար Նայաստանը հայտնվում է օրակարգում, երբ ցեղասպանությանը վերաբերող օրինագծեր են քննարկվում Լեհաստանում, Արգենտինայում, Մյովակիայում և այլուր: Եկեք վստահ լինենք, որ խնձորը խնձորի հետ ենք համեմատում, ոչ թե խնձորը նարնջի հետ: Իմ մասով կարող եմ ասել, որ հարևան ազգին շատ ծանր մեղադրանք եք ներկայացնում: Յեղասպանություն բառը շատ լուրջ է: Չեմ ճանաչում որևէ թուրքի՝ ինչ քաղաքական հայացքների տեր էլ լինի, որ ընդունի դա: Սա ևս մի փաստ Թուրքիայի վերաբերյալ: Կարող եք դա անվանել ողբերգություն, կոտորած, զանգվածային սպանություն և այլն. գոյություն ունի թուրքական վարկած և հայկական վարկած: Ներեցեք, բայց ես ծնվել և մեծացել եմ թուրքական վարկածով: Այո, տեղի է ունեցել ողբերգություն, սակայն դա կատարվել է Առաջին աշխարհամարտի ընթացքում՝ համաշխարհային, փարսաճաշքանա-

յին և քաղաքացիական պատերազմի, անօրինականության պայմաններում: Ո՞ւմ կողմից էր այն ժամանակ ղեկավարվում Թուրքիան՝ սուլթանի՞, խռովարարների՞, քեմալիստների՞: Ինձ դա հայտնի չէ: Ուրեմն, այո, եկեք կապեր հաստատենք, քննարկենք մեզ համար հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ. սակայն երբ այս խնդրին ենք հասնում, ես հասկանում եմ, որ այն շար կարևոր է հայ ժողովրդի համար, բայց մինչ այժմ մեր հարաբերություննրում ոչնչի չենք հասել: Նաև մենք պիտի վերանայենք մեր բառապաշարը, եթե կլինեն բացարձակ ապացույցներ, չգիտեմ, հանձնաժողովի, պատմաբանների, որևէ մեկի կողմից: Այդ դեպքում կառաջարկեմ, որ իմ երկիրն ընդունի մեղադրանքները և դրանց հետևանքները: Բայց այժմ իրականությունն այսպիսին է: Ոչ մի թուրք չի ընդունի ցեղասպանություն բառը, միգուցե մեկ կամ երկու բացառություններով, միգուցե կան որոշ գիտնականներ: Եվ եթե խոսում ենք երկխոսության մասին, ուրեմն պետք է փորձինաբանությունը հաշվի առնենք: Պետք չէ շփոթության մեջ գցել լսարանն՝ օգտագործելով փարբեր փորձիներ: Մեկ այլ խնդիր, որը կարևոր է թուրքերի համար. ի՞նչ փեղի կունենա, եթե ցեղասպանությունը ճանաչվի: Ցեղասպանության ժամանակաշրջանում մենք կորցրել էինք մեր հայրենիքը: Դա մեծ երկիր է թուրք ժողովրդի և հայ ժողովրդի համար: Այսպեղ մենք նույն հաճախականության վրա ենք: Նայրենիք բառը շար լուրջ է: Դրան կհետևի փոխհատուցումը: Բազմաթիվ թուրքեր ուզում են իմանալ՝ ի՞նչ է կանգնած այդ հետևողական զգացմունքային պահանջների երևում: Ուրեմն, չեմ ցանկանում խորանալ դրա մեջ, սակայն նաև չեմ ցանկանում ապափրկելուցնել լսարանը: Այո, գոյություն ունեն փարբեր փեսակետներ, սակայն միգուցե գործընկերներս ինձ կլրացնեն, ես չգիտեմ որևէ քաղաքական ուժ կամ քաղաքացիական հասարակության կառույց, որը կհամաձայնվի հայկական փեսակետի հետ, որ կապարվածը ցեղասպանություն էր: Այդ առումով Թուրքիայում ոչ մեկին չեմ փեսնում:

Արմեն Խաչիկյան (*Եվրոպական Տարածաշրջանային Ակադեմիա, Երևան*).

Իհարկե, այնպես ինչպես ներկայացրեց պարոն Տոկերը, խնդիրը լրիվ հասկանալի է: Իրոք, ընկալման փարբեր մոփեցումներ են: Ուզում եմ ճշտել մեկ բան: Նայոց պատմության դասագրքում կա որոշակի փեղեկություն Ցեղասպանության մասին: Այն հայկական փեսակետն է: Թուրքիայի պատմության դասագրքում գրեթե փեղեկություն չկա այդ մասին: Ինչպե՞ն կարելի է սկսել երկխոսություն, փեղեկափոխության նման պակասի պայմաններում: Ինչի՞ շուրջ կարելի է ընդհանուր հայտարար գրել, եթե փեղեկություն չկա այդ մասին: Ինչպե՞ն կարելի է անել այնպես, որ Թուրքիայում փեղեկացվածության մակարդակը այս հարցի մասին լինի ավելի բարձր, որպեսզի, իրոք, երկխոսության հնարավորություն առաջանա: Խոսքը չի գնում մեկի կամ մյուսի կողմից ներկայացված բացարձակ ճշմարտության մասին, այլ փեղեկացվածության:

Ջևն Տոկերի պապասխանք.

Ես այդ խնդրի մասնագետը չեմ: Գործընկերներս կարող են ասածս լրացնել, սակայն որքան ինձ հայտնի է, եթե չեմ սխալվում, Թուրքիայի կառավարությունն առաջարկել է պարմաբանների հանձնաժողով սրեղծել, համարել հանձնաժողով, և դա մերժվել է: Մի կողմից՝ մենք ասում ենք, Թուրքիան ասում է, որ թող դրանով զբաղվեն պարմաբանները, ոչ թե քաղաքական գործիչները, սակայն մյուս կողմից՝ հայկական վարկածը քննարկման առարկա չէ: Եթե քննարկման առարկա գոյություն չունի, ինչպե՞ս կարող ենք համաձայնության գալ որևէ խնդրի շուրջ:

Նիգար Գոկսել.

Պարոն Խաչիկյան, Դուք իրավացի եք, եթե դասագրքերին եք նայում, կարող է թվալ, որ երկխոսություն սկսելու հիմքեր չկան: Իրականում կան հասարակական կազմակերպություններ, որոնք այս թեմայի վրա աշխատանքներ են փնտրում՝ պարմական ուսմունքները չեզոքացնելու համար: Պետք է նաև մտապահել, որ դասագրքերը միշտ չէ, որ արքայազնի են թուրքերի մեծամասնության կարծիքը: Օրինակ՝ 1915թ. մասին գրուցելիս բազմաթիվ թուրքեր օգտագործում են «կոլորադներ» բառը, չնայած երբ ես էի սովորում, այդ բառը դասագրքերում չէր օգտագործվում: Կարող եք հայտնաբերել, որ թուրք ժողովուրդն առաջ է անցել թուրքական դասագրքերից ու նաև թուրք քաղաքական գործիչներից:

Ռուբեն Մեհարյան (*փորձագետ, Զաղաքական և միջազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոն*).

Շատ կարճ ռեզյումե կարգով: Խոսք գնաց ընդհանուր պարմություն («shared history») գրելու մասին: Դա կարևոր է, բայց մենք նույնիսկ ներհասարակական կոնսենսուս չունենք այդ հարցում: Օրինակ՝ հայոց պարմության հետ կապված՝ ես կարող եմ նշել երեք ինֆերպրեֆացիա: Մեկը պայմանականորեն կոչենք կոմունիստական փարբերակ, մյուսը՝ դաշնակցական, և երրորդը՝ Լեռնի գրած պարմությունը: Ընդ որում, ահագին փարբերություններ կան գնահատականների, պարճառահետևանքային կապերի ի հայտ բերման հարցերում և այլն: Ես կարծում եմ, որ նման վիճակ է նաև Թուրքիայում՝ սկսած ընդհանրապես այդ մասին չխոսելուց, պաշտոնական վարկածից և օրինակ՝ Օրհան Փամուկի փարբերակը, ում վրա դրված էր Թուրքիային վիրավորելու մասին թուրքական օրենսգրքի 301 հոդվածը: Դա էլ է պարմություն՝ ներկայացված Թուրքիայի կողմից: Ուզում եմ ասել, որ սկզբից հայերը և թուրքերը համարել պետք է կարողանան գրել կոնսենսուս պարմության գրքերի վերաբերյալ, ինչը փակական գործընթաց է, իսկ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը և հաստատումը շատ հրապարակա խնդիր է: Մենք չունենք այդքան ժամանակ, որ պարմության հարցերը կապենք հարաբերություններ հաստատելու խնդրի հետ: Ինձ թվում է, որ պետք է փարանջատել մեկը մյուսից: Նամենայն դեպս ես իրերին այդպես եմ նայում:

Տիգրան Մկրտչյան.

Պարոն Տոկեր, քանի որ Դուք քաղաքական գործիչ եք, պետք է որ պրագմատիկ անձնավորություն լինեք և իրոք այդպիսին եք, կցանկանայի իմանալ՝ արդյո՞ք Ձեր կուսակցությունը նպաստում է հայ-թուրքական երկկողմանի կապերի զարգացմանը, և արդյո՞ք Դուք դրանով հերաքրքրված եք: Ձեր կուսակցությունը նպաստո՞ւմ է դրան, կամ դա կազմո՞ւմ է Ձեր կուսակցության ծրագրի մի մասը, կամ ի՞նչ է առաջարկում Ձեր կուսակցությունը:

Ջեմ Տոկեր.

Նկատի ունեք հայկական հարցը թե՛ հայ-թուրքական հարաբերությունները:

Տիգրան Մկրտչյան.

Նայ-թուրքական հարաբերություններն ընդհանրապես և դրանց բարելավումը:

Ջեմ Տոկեր.

Ծիշքն ասած, ինչպես ասել էի, դա Թուրքիայում առաջնահերթ օրակարգային խնդիր չէ: Սակայն երբ պարոն Դինքը սպանվեց, մենք մասնակցել ենք թաղման արարողությանը: Ինչպես նշել էի, մենք հարցրել ենք՝ ո՞ր են բոլոր հայերը, ինչո՞ւ նրանք հեռացան, ինչո՞ւ են հեռացել հրեաները, ինչո՞ւ են հեռացել հույները: Մենք պաշտպանում ենք Կոստանդնուպոլիսի հույն պատրիարքի կարգավիճակը, որ նա պետք է ճանաչվի՝ որպես փեղեկական պատրիարք: Նայ եկեղեցու պատրիարք Մուրաֆյանն իմ դասընկերն էր միջնակարգ դպրոցում: Մենք պաշտպանում ենք փոքրամասնությունների իրավունքները, կրոնական ազատությունը, բոլոր եկեղեցիներն ու սինագոգները, սակայն չենք առանձնացնում հայ-թուրքական հարաբերությունները. մենք կողմնակից ենք բոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալուն: Կարող ենք միակողմանի չհարձակվան պարզավորություն վերցնել՝ մեր հարևանների մտահոգությունները կանխելու համար: Այսօրինակ փիպի նախաձեռնություններ, այո, առաջ ենք քաշում. այլ խնդիր է, որքանով են դրանք ընկալվում Թուրքիայում՝ մեր կուսակցության մեծությունը հաշվի առնելով: Սակայն առանձնահատուկ նախագծեր հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ չենք առաջարկում: Այժմ սա օրակարգում կլինի, և երբ վերադառնամ Թուրքիա, այս կոնֆերանսի վերաբերյալ գեկույցներով հանդես կգամ: Բայց ընդհանրապես, մեր կուսակցությունում չկա կառույց, որը հատուկ զբաղվում է հայ-թուրքական հարաբերություններով, ցեղասպանության խնդրով, կամ սահմանի փակ լինելու խնդրով. ունենք կառույց, որը զբաղվում է հարևան ազգերի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման խնդիրներով:

Սյունիան Գրիգորյան.

Կոնֆերանսի վերջում ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորին, ովքեր օգնեցին այս կոնֆերանսի կայացմանը և կազմակերպմանը՝ առաջին հերթին՝ Վազգեն Կարապետյանին և Գևորգ Տեր-Գաբրիելյանին: Շնորհակալություն եմ հայտնում հայրնի թուրք փորձագետներին՝ Նիզար Գուլսելին, Ջեմ Տոկերին և Արդա Բաթուին, ովքեր համարեցին, որ այսօր Նայասարանում զեկույցով հանդես գալը շատ կարևոր է հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար: Նախուկ շնորհակալություն եմ հայտնում բոլոր դիվանագետներին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին այսօրվա համապեղ աշխատանքի համար: Շնորհակալություն բոլոր զեկուցողներին և քննարկումներին մասնակցածներին, այդ թվում ԲՈՒՆ-երի պրոֆեսորներին և ուսանողներին: Եվ վերջում ուզում եմ շնորհակալություն հայտնել «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամին: Մեր համագործակցությունը այդ կազմակերպության հետ բավական էֆեկտիվ է և կոնֆերանսի կայացումը այդ համագործակցության արդյունքն է:

**“Global Challenges and Threats: Are Joint Efforts
between Armenia and Turkey Possible?”**

International Conference
20 May, 2008
Yerevan, Armenia

Contents

Editor's note: Stepan Grigoryan	92
Opening Remarks: Stephen Banks, Vazgen Karapetyan	94-95
David Hovhannisyan. Why Armenian-Turkish Relations Have Not Been Normalized?	96
Cem Toker. The Most Important Thing Is Well-being of Our Peoples.....	104
Armen Ashotyan. Let's Accept Each Other As We Are.....	109
General Discussion	112
Diba Nigar Goksel. Analysis of Interviews with Turkish Organizations.....	120
Stepan Grigoryan. Analysis of Interviews with Armenian Organizations	125
General Discussion	140
Alexander Iskandaryan. Reformatting the Unawareness	142
Arda Batu. General Principles to Achieve Reconciliation	147
General Discussion	150

Editor's note

